



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

226

1331


825

7-44

~~Магнитогорск~~
~~Свердловск~~

65-7003





8215
Դ - Կ Կ ա ր - Դ կ ը ս
Թիվ 1, եջի թիվ. Հայոց պատմութեան ՀԱՅՈՍՏԱՐՈՒԹԵԱՆ

Թ Օ Բ Ի Ն Զ Օ Ղ ի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1881 թվականի 22 դեկտեմբերի օրուառողջ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ց

Գիշ բաշխնաց Աղանեանց

—

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆՆԵԱՆՑ ԵԽ ԸՆԿ.

1881

6190

Дозволено Цензурою. Тифлисъ. 22 Марта 1881 г.



4 1150
40

Типог. М. Вартанянца и К°, Ганов. ул. д. № 10

І.

Անշուշտ ամէն մարդ լսած կը լինի, թէ
մեզանից հեռու կայ մի հարուստ երկիր,
որ կոչվումէ Անգլիա: Հայ վաճառականնե-
րից շատերը գնում են այնուեղ ապրանք
գնելու համար: Եւ որովհետեւ այժմ ամէն
տեղ երկաթուղիներ ու շոգենաւեր կան,
ուստի շատ հեշտ է Անգլիա գնալ, հենց
նոյն խակ Թիֆլիսից: Այստեղից առաջ պէտք
է երկաթուղով գնալ Փօթի. Փօթուց Սեւ
ծովով շոգենաւը տանում է մինչեւ Օդէսա.
Օդէսայից գարձեալ ցամաքային ճանապար-
հով երկաթուղին տանում է Վ.օլօչինսկ, որ
գտնվում է Ռուսաստանի եւ Աւստրիայի
սահմանի վրայ. այդտեղից ճանապարհը
երկաթուղով շարունակվում է մինչեւ Վիեն-
նա եւ անցնելով Միլնիէնի ու Փարիզի վրայ-
ից՝ հասնում է մինչեւ Հայք նաւահան-

գիստը, որտեղից ուղղակի մտնում ենք
Պադը-Կալէ նեղուցը: Ճիշտ Հավրի դէմու-
դէմը նեղուցի միւս կողմը գտնվում է մի
մեծ կղզի, որ կոչվում է Անգլիա, իսկ նո-
րա բնակիչները՝ անգլիացիք: Այդ կղզու
գլխաւոր քաղաքն է Լոնդոն, որ աշխար-
հիս ամենամեծ ու բազմամարդ քաղաքնե-
րից մէկն է եւ տասն եւ ութ անգամ մեծ
է մեր Թիֆլիս քաղաքից:

Անգլիայի հօրկ քաղաքում, որ նոյնպէս
Հին է, բայց ոչ նոյնքան մեծ, 1632 թուին,
այսինքն երկու հարիւր լիսուն տարի մե-
զանից առաջ, ծնաւ հէնց նոյն Ռօբինզոն
կրուզէն, որի գլխի անցքերը պէտք է պատ-
մենք այստեղ:

Ռօբինզոնը գեռ մանուկ հասակումն էր
որ մտքումը գրեց ծովային ճանապարհոր-
դութիւններ անել եւ որքան մեծանում՝
այնքան աւելի էր մոտածում այդ բանի
պայաց, այնպէս որ վերջը էլ չէր կարողա-
նում նստուկ կետնք անցկացնել: Իւր ծերունի
հայրը առուտուրով բաւտկան հարսու-
թիւն էր գիզել եւ հանգիստ կերպով ապ-
թիւն էր հօրկ քաղաքում: Երիտասարդ Ռօ-
բինզոնը հէնց որ աւարտեց իւր ուսումը, սկը-

սաւ հօրը աղաջել որ թոյլ տայ իրան ծովային
ճանապարհորդութիւններ անել: Հայրը լսել
անգամ չէր կամենում նորա խօսքին եւ
բոլորպին մերժեց նորա խնդիրը. նոյնպէս
եւ մայրը չէր կամենում թողնել նորան:
Ռօբինզոնի բանը վատ էր. նորա տարիքը
շատ մեծ չէր եւ թէպէտ շատ բան էր սո-
վորել ուսումնարանում, բայց ոչ մի ար-
հեստ չգիտէր եւ չէր իմանում թէ ինչ գոր-
ծի կպչէր: Մի օր նա գնաց ծովեղերեայ
Հուլ քաղաքը բոլորպին պատահմամբ որով-
հետեւ ամենեւին նպատակ չունէր ծնօղա-
կան տնից փախչելու. բազդի բերմամբ տե-
սաւ այնտեղ իւր մի բարեկամին, որ մոտա-
դիր լինելով իւր հօր նաւով ճանապարհ
ընկնելու դէպի Լոնդոն, նորան էլ առաջար-
կեց իւր հետ գնալու, խոստանալով որ ձրի կը-
տանեն նորան իւր ցանկացած տեղը: Այսպի-
սով սկսան նորա ճանապարհորդութիւննե-
րը, որ, ինչպէս յետոյ կըտեսնենք, շատ
մեծ ազդեցութիւն ունեցան նորա ամբողջ
կեանքի վրայ:

Այս ճանապարհորդութիւնը մեծ գժուա-
րութեամբ կատարուեցաւ. ճանապարհին
սաստիկ փոթորիկ բարձրացաւ եւ որովհե-

տեւ այն ժամանակ դեռ եւս շոգենաւեր չկային, ուստի եւ հակառակ հողմի պատճառով Ոօբինզօնի նաւագնացութիւնը միքանի օր տեւեց: Այս առաջին անյաջողութիւնից նորա սէրը դէպի ծովը չսառեց: Շուտով նա առիթ ունեցաւ նաւել դէպի Աֆրիկա: Այս երկիրը գտնվում է հարաւային կողմը ամենատաք կիմայի տակ. այնտեղ բնակում են սեւ մարդիկ, որոնք խափշիկ կամ արաք են կոչվում: Դեռ Ոօբինզօնը ցամաքին չէր մօտեցել, երբ յանկարծ նաւի վրայ յարձակուեցան ծովային աւազակներ եւ գերի տարան նորան: Երկար ժամանակ մնաց նա գերութեան մէջ, մինչեւ որ վերջապէս յաջողեցաւ փախչելով ազատուիլ նորան ընդունեցին մի մեծ նաւի մէջ, որ ափի մօտից անցնում էր եւ գնում էր Ամերիկա: Ամերիկա գնալու համար պէտք էր նաւել դէպի արեւ մուտք ծովով—ովկիանոսով: Ճանապարհորդութիւնը յաջող անցաւ եւ Ոօբինզօնը գուրս եկաւ Բրազիլիայի ափ՝ հարաւային Ամերիկայում: Ամէն բան կարծես լաւ էր գնում, բայց Ոօբինզօնը այստեղ էլ հաստատ չմնաց: Այդ ժամանակ Ամերիկայում մեծ կալուածատէրերը

հողը մշակում էին սեւ սարուկների ձեռքով, որոնց նոքա սովորական ապրանքի պէս Աֆրիկայում գնում եւ իրանց կալուածներում բնակեցնում էին: Այս հողատէրերից երեք հոգի մի առաւօտ եկան Ոօբինզօնի մօտ եւ առաջարկեցին նորան իրանց հետ միասին նաւով երթալ Աֆրիկա եւ սեւ սարուկներ գնել իրանց դաշտերի մշակութեան համար: Գործը շահաւէտ էր թփում, որովհետեւ խոստանում էին հաւասար մաս տալ նորան, այսինքն նոյնքան սարուկ որքան կը վերցնէր նոցանից իւրաքանչիւրը. բոլոր ծախքերը յանձն էին առնում իրանք կալուածատէրերը, միայն թէ նա իւր վրայ առնէր այս առուտուրի բոլոր հոգսերը: Ոօբինզօնը համաձայնեցաւ եւ պայման կապելով հողատէրերի հետ, ճանապարհ ընկաւ: Ակզբում նաւագնացութիւնը յաջող էր, բայց մի քանի օրից յետոյ զարհուրելի փոթորիկ բարձրացաւ: Երկար ժամանակ նաւը ծփում էր փոթորկից եւ նաւորդները բոլորովին մոլորուեցան, այնպէս որ այլ եւս չգիտէին թէ ուր են գտնվում: Վերջապէս մի առաւօտ, փոթորկալից գիշերուանից յետոյ, նաւաստիներից մինը

գոշեց «ցամակ»։ Հաղիւ թէ Ոօրինզօնը իւր ընկերներով դուրս թռաւ նաւասենեկից տեսնելու թէ այդ ի՞նչ երկիր է եւ աշխարհի ո՞ր մասնումն է գտնվում, որ նոցանաւը խրուեցաւ մի ծանծաղուտ տեղ եւ յանկարծ կանգ արաւ, ալիքները այնպէս ուժով դիմվում էին նորա վերայ, որ կարծես կտոր կտոր պիտի տնէին նորան։ Նաւը մակոյկ էլ ունէր. բաց թողին այն մակոյկը եւ նստեցին նորա մէջ ափը դուրս գալու համար։

Վտանգը այստեղ աւելի մօտ էր եւ զարհուրելի։ Ամէնքը տեսնում էին որ մակոյկը չի դիմանայ այսպիսի ալեկոծութեան եւ անպատճառ կ'ընկղմի։ Մանաւանդ որ առագաստ էլ չունէին եւ եթէ ունենային էլ սաստիկ հողմի պատճառով անհնար էր պարզել։ Ամէնքը սկսան թիավարել ու բոլոր ուժով ջուրը կտրել ափին հասնելու համար։ Ամէնքը յուսահատ գրութեան մէջ էին, որովհետեւ հասկանում էին որ երբ մակոյկը ափին մօտենայ, ծովային հոսանքը ջարդուփշուր է անելու նորան։ Ոչ գետր բերան կար եւ ոչ նաւահանգիստ։ սորա հակառակ, ափը, որքան աւելի մօտենում

էին նորան՝ թվում էր մուայլ եւ նոյն իսկ ծովից աւելի զարհուրելի։ Ամէնքը ջերմեռանդութեամբ աղօթում էին Աստծուն։ Տասը բոպէի չափ թիավարելուց յետոյ՝ յանկարծ նոցա ետեւից խփուեցաւ մի աչագին կոհակ, կարծես մի շարժական սար լինէրմակոյկը շուռ եկաւ եւ նորա մէջ գտնուողները ջուրն ընկան։ Թէպէտ Ոօրինզօնը լողալում վարպետ էր, սակայն ալեկոծութիւնը այնքան սաստիկ էր, որ ամենեւին չկարողացաւ ջրի վրայ մնալ շունչ քաշելու համար։ Վերջապէս ալիքը տարաւ հանեց նորան հեռու ափի վրայ. մէկ էլ յետ խփուեցաւ եւ քաշուեցաւ ծովի մէջ, իսկ Ոօրինզօնին թողեց ցամաքի վրայ կիսակենդան գրութեան մէջ, որովհետեւ նա խորասուզուած ժամանակ կուլ էր տուել ծովի գառն ու աղի ջուրը։

II.

Երբ Ոօրինզօնը ուշքի եկաւ ու տեսուոր վտանգից աղատուել է, առաջին գործն եղաւ ողորմած Աստծուն շնորհակալութիւն մատուցանել իւր հրաշալի աղատութեան

Համար: Նորա ընկերներից ոչ մէկը չազատուեցաւ, գոնէ ինքը ոչ մէկին չկարողացաւ տեսնել նաւարեկութիւնից յետոյ. մինչեւ անդամ ոչինչ ուրիշ հետք էլ չէր մնացել նոցանից, բայց չորս գլխարկից ու երկու հատ կօշիկներից, որ ջուրը գուրս էր հանել ափի վրայ: Աչքերը գարձրեց խորտակուած նաւի կողմը, բայց ծովը դեռ եւս խիստ ալեկոծուած էր եւ նաւն էլ այնքան հեռու էր, որ հազիւ էր երեւում:

Ուրինզօնը մկսաւ նայել իւր շուրջը որ տեսնէ թէ ինչպիսի երկրումն էր գտնվում եւ թէ ինչ բանի մասին նախ եւ առաջ պէտք է հոգս քաշէր: Շուտով նա նկատեց, որ ուրախանալու ոչինչ բան չունէր եւ թէ իւր գրութիւնը չափազանց անոտանելի էր: Վրայի հագուստը եւ ամբողջ մարմինը թաց էին, իսկ փոխնորդ շարեր չունէր. նա խիստ սոված էր ու ծարաւ, բայց ոչ ուտելու բան կար, ոչ էլ խմելու. ուժից ընկած էր, սակայն ոչինչ չունէր որով կարողանար կաղդուրել իրան: Իւր առաջ նա տեսնում էր սարսափելի մահ երկու կերպով: կամ սովից պէտքէ մեռնէր եւ կամ վայրենի գաղանակին կերակուր լինէր: Ամէնից վատն այն

էր, որ չունէր ոչ մի տեսակ գէնք, որով կարողանար թէ կերակուր որսալ իւր համար եւ թէ պաշտպանուի վայրի գաղանի կամ մարդու յարձակումներից: Նորա բոլոր ունեցածն էր մի դանակ, մի ծխատուփ մէջը փոքր ինչ ծխախոտ եւ ուրիշ ոչինչ: Մտածելով իւր գրութեան վրայ այնպէս սարսափեցաւ, որ բաւական ժամանակ խելացնորի պէս յետ ու առաջ էր վազում ափի վրայ: Բայց գիշերը վրայ էր հասնում եւ պէտք էր մտածել, թէ ուր կարելի էր թագչել վայրի գաղանների յարձակումից ազատուելու համար:

Ուրիշ հնար չկար, բայց մերձակայ տերեւախիտ ծառը բարձրանալուց: Ուրինզօնը որոշեց գիշերը անցնել նորա վրայ: Բայց ամէնից առաջ նա հեռացաւ ափից խմելու ջուր գտնելու համար, եւ յիրաւի կէս վերստաչափ անցնելուց յետոյ գտաւ մի աղիւր, որ շատ ուրախացրեց նորան: Կուշտ իւմելով այն քաղցր ջրից, բարձրացաւ իւր ծառը եւ աշխատեց այնպէս տեղաւորուիլ վրան, որ քնած ժամանակը չվայր ընկնի: Զեռքին բռնած ունէր մի հաստ փայտ, որ իւր դանակով կտրել

Էր ծառից հարկաւոր ժամանակ մի որ եւ
է պաշտպանուելու գործիք ունենալու հա-
մար: Նա խիստ յոգնած էր, ուստի որքան
հնար էր լաւ տեղաւորուելով ծառի վերայ՝
շուտով քնեց եւ մինչեւ արեւածագը չզար-
թեցաւ:

Առաւօտը երբ վերկացաւ, սկսաւ մտածել
թէ ինչպէս մի փօքր ուտելու բան ճարէր:
Նա ոչինչ չունէր, ոչ հաց ոչ միս, ոչ բան-
ջարեղէն, ոչ էլ կաթ. եթէ ունենար էլ մի բան,
կրակ որտեղից գտնէր եւ ինչի մէջ եփէր
կերակուրը: Զօրս կողմը գտնուած բոլոր ծա-
ռերը կամպէշ ասուած փայտի տեսակից էին,
որոնք ամէն տեսակ կարաօիներ չինելու
պէտք են գալիս, բայց ոչինչ պտուղ չեն
տալիս: Քաղցածութիւնը չարաչար տանջում
էր նորան, որովհետեւ նախընթաց ամրող
օրը ոչինչ չէր կերել: Սակայն կարիքը ոյժ-
տուեց նորան եւ սկսաւ ափէափ ման գալ
ուտելու բան գտնելու համար:

Ափերի վրայ բացի տնպտուղ ծառերից,
խոտից ու աւազից ոչինչ չկար:

Խեղձ ողորմելին համարեա անզգայ ըն-
կաւ գետնին եւ աչքերը գառն արտասու-
քով լցուեցան: Երբ որ նա այսպէս յուսա-

հատած սպասում էր այն սոսկալի ըոպէին
որ սովից մեռնի, յանկարծ պատահմամբ
յետ նայելով՝ տեսաւ մի ծովային բազէ,
որ մի ձուկ բռնած թռչում էր. իսկոյն նորա
միտքն ընկան այս խօսքերը, որ մի ան-
գամ կարգացել էր. «Աստուած որ երկ-
նային թռչուններին կերակում է, միթէ
կը թռնի՞ որ մարդ սովից մեռնի:»

Իսկոյն վեր թռաւ գետնից ու գնաց ափի
ուղղութեամբ, միտքը դնելով որ քանի մար-
մնի մէջ ոյժ ունի՞ աշխատի ուտե՛ ու բան
գտնել:

Երկար որոնելուց յետոյ, աւազի վերայ
տեսաւ մի քանի խեցեմորթ. ագաշութեամբ
վրայ ընկաւ եւ ո՛քքան եղաւ նորա ուրա-
խութիւնը, երբ նոցա մէջ խեցգետիններ
գտաւ: Նոցանով յագեցնելով իւր քաղցը,
Ոօրինզօնը սկսաւ հոգ տանել մի բնակու-
թեան տեղ ճարելու եւ իւր անձը փայրի
գաղանների ու մարդոց յարձակումներից
պաշտպանելու համար: Մտածելովիւր զրու-
թեան վրայ, նա նորից յուսահատեցաւ: Ի՞նչ
օգուտ, ասում էր նա ինքն իրան, որ մին-
չեւ հիմա ողջ մնացի, երբ գուցէ հենց այսօր
փայրի գաղանների կերակուր պիտի դառնամ:

Զգիտենալով թէ ուր է գտնվում, կղզու
մէջ թէ ցամաքի վրայ, եւ տեսնելով հե-
ռու մի բարձր սար, ճանապարհ ընկաւ
գէպի այն սարը: Մեծ դժուարութեամբ
բարձրացաւ նորա վրայ, որտեղից կարողա-
ցաւ դիտել շրջակաչքը մի քանի մղոն հե-
ռուարութեամբ եւ զարհուրելով տեսաւ որ
կղզու մէջ է գտնվում. փոքր ինչ հեռու
երկու փոքրիկ կղզիներ էլ կային:

Երկար ժամանակ կանգնած էր նա այն-
տեղ խորին մտածման մէջ ընկղմած եւ
աչքերը գետնին խոնարհեցրած:

Աստծուց էլ, մարդկանցից էլ զրկուեցայ,
մտածում էր նա. սակայն Նախախնամու-
թեան վրայ ունեցած հաւատը սիրտ տուեց
նորան. ծունկ չոգեց ու սկսեց ազօթել
Աստծուն, ուխտելով համբերութեամբ եւ
հնազանդութեամբ տանել ամէն նեղու-
թիւնները եւ Աստծուց խնդրելով օգնու-
թիւն եւ ոյժ, որպէս զի չլիատի հռգւով եւ
մարմնով:

Խօբինզօնը նոր ոյժ դգալով իւր մէջ,
որոշեց լեռան չորս կողմը պտտել: Նատ
ման եկաւ նա բնակութեան յարմար տեղ
գտնելու համար, բայց բոլոր աշխատանքը

անօգուտ եղաւ. վերջապէս տեսաւ մի ու-
րիշ բարձր սար, որի երեսը ուղիղ պատի
պէս էր բարձրացած. մօտենալով նորան,
մէջը մի խոռոչ տեսաւ, որի մուտքը բա-
ւական նեղ էր:

Եթէ բահ, մուրճ կամ ուրիշ գործիքներ
ունենար, հեշտութեամբ կարող էր այդտեղ
ընդարձակ ու յարմար բնակարան շինելիւր
համար, բայց որովհետեւ երկու ձեռքից ա-
ւելի ոչինչ չունէր, մոտածեց մէկ կերպով
առանց գործիքի գլուխ բերել բանը:

Երկար ժամանակ գլուխ յոգնեցնելուց
յետոյ, հետեւեալ հնարքը գտաւ. նա մտածեց
ձեռքերով մատաղ թփեր հանել եւ իւր
քարայրի առաջ մէկմէկու մօտ խիտ տն-
կել, այնպէս որ ցանկի տեղ բռնեն. եթք
այդ մատաղատունկ բոյսերը աճին ու հաս-
տանան, կարելի կը լինի նոցա մէջտեղը
հանգիստ հոգւով պառկել, իսկ ետեւի կողմէ
մից կը պաշտպանէր նորան լեռան հարթ հա-
ւասար կողքը: Այս յաջող գիւտի վրայ ու-
րախացած՝ Խօբինզօնը իսկոյն գործի կա-
ցաւ: Իւր ուրախութիւնը աւելի մեծ եղաւ,
երբ լեռան մօտ նկատեց մի պարզ ու վճիռ
աղբիւր: Ծարաւը տանջում էր նորան, ուս-

տի գնաց մի լաւ խմեց: Մեծ աշխատանքով հանեց նա մի քանի մատաղ ծառեր եւ տարաւ իւր նոր բնակարանի մօտ: Այստեղ նա ստիպուած էր դարձեալ ձեռքով փոսեր փորել եւ ծառերը տնկել. բաւական գժուար էր այդ գործը, ուստի մինչեւ երեկոյ հազիւ հինգ վեց ծառ կարողացաւ տնկել:

Քաղցը ստիպեց նորան, որ նորից գնար ծովի ափը ոստրէներ գտնելու. գժբարդաբար ոչինչ զգուաւ այնտեղ, որովհետեւ մակընթացութեան ժամանակ էր, այնպէս որ ստիպուեցաւ քաղցած պառկել:

Բայց ուր պէտք է քնէր: Փոքր ինչ մոտածելուց յետոյ, նա նորից տեղաւորուեցաւ ծառի վրայ եւ որպէս զի վայր չընկնի այնտեղից, իր գուլբայի կապերը յետ անելով՝ ոտները ծառին կապեց, աղօթեց ու հանգիստ քնեց:

Լուսաբացին զարթելով, նա ամէնից առաջ վազեց ծովի ափը մի քանի ոստրէ գտնելու եւ յետոյ նորից գործի կանգնելու: Այս անգամ նա ուրիշ ճանապարհով գնաց եւ չափազանց ուրախացաւ, երբ ճանապարհին մի նոր ծառ տեսաւ, որի վրայ խոշոր

պտուղներ կային: Յէպէտ եւ չգիտէր, թէ ինչ պտուղներ էին, բայց յուսալով որ ուտելու պէտքական կը լինին, մի հատ կըտրեց:

Սա մի երկարածեւ համարեա եռանկիւնի ընկոյզ էր փոքր տղայի գլխի մեծութեամբ: Կրայի կեղեւը, որ մեծ նեղութեամբ ահագին քարով կոտրեց, ծածկուած էր երակներով եւ փաթթած կանեփի թելի նըման էր. երկրորդ կեղեւը այնպէս կարծր էր ինչպէս կրիայի պատեանը. իսկոյն Ոօբինզօնի մոքովն անցաւ, որ այդ կարող էր իրան ափսէի տեղ ծառայել: Այս ընկուղի միջուկը խիստ հիւթալի էր եւ հասարակ ընկուղի համ ունէր, միայն նորա պէս իւղոտ չէր. մէջը մի տեսակ քաղցը, համեղ ութարմ հիւթ կար: Մի խօսքով սա կօկօսի ընկոյզ էր: Ոօբինզօնի քաղցած փորի համար մէկ ընկոյզ շատ քիչ բան էր. երկրորդ, երրորդն էլ վայր ձգեց կերաւ ու չկարողացաւ լաւ կշտանալ:

Ոօբինզօնը չնայելով որ քաղցած չմաց, այնուամենայնիւ գնաց ափը որ տեսնէ թէ արդեօք այն օրը ոստրէներ կը գտնէ: Գտաւ մի քանի հատ, վերցրեց իւր հետ տարաւ

ճաշի համար եւ ապա մեծ եռանդով սկը-
սեց երեկուայ գործը շարունակել: Ափի
վրայ գտել էր մի մեծ խեցի: Նա մտածեց
բահի տեղ գործածել այդ խեցին, որով եւ
իւր գործը շատ թեթեւացաւ: Նորանից
յետոյ շուտով մի ուրիշ ծառ էլ գտաւ,
որի ճիւղերը կախուած էին կանեփի թելե-
րի նման: Ուրիշ ժամանակ Ռօբինզօնը
վրան էլ չէր նայի, իսկ այժմ ենթադրե-
լով որ այդ բոյսիցն էլ կարելի է շինել նոյն
բաները ինչ որ մեր կանեփիցն են շինում,
մի քանի ճիւղ կտրեց, մի կապ շինեց ու
դրաւ ջուրը: Մի քանի օրից յետոյ տեսնե-
լով որ այդ ճիւղերի վրայի հաստ կեղեւը
բաւական փափկել է, ջրից հանեց ու ա-
րեւի տակ կախեց: Երբ չորացան, փորձի
համար սկսաւ փայտով ոլորել կանեփի պէս:
Այս բանը շատ լաւ յաջողեցաւ նորան:
Նա խկոյն եւ եթ փորձեց այդ նոր վու-
շից մի փոքր պարան ոլորել: 'Ի հարկէ այդ
պարանը այնքան ամուր չէր ինչպէս մեր
վարպետների շինած պարանը, սակայն նո-
րանով կարելի էր իւր գտած խեցին կա-
պել փայտի ծայրին եւ այդպիսով մի տե-
սակ բահ շինել: Այնուհետեւ նա նոր աշ-

խուժով սկսաւ ծառեր տնկել, սինչեւ որ
վերջապէս բոլորովին պարսպեց իւր ապա-
գայ բնակարանը. բայց որովհետեւ այս մի
կարգ մատղաշ ծառերը բաւական չհամա-
րեց իրան պաշտպանելու համար, ուստի
մի կարգ ծառեր էլ տնկեց եւ երկու կար-
գերն էլ հիւսեց կանաչ ոստերով: Վերջա-
պէս մի հրաշալի բան մտածեց նա, այն է՝
երկու կարգ ծառերի մէջ տեղը հող լցնելու
խոտով ծածկել: Այսպիսով կազմուեցաւ մի
շատ ամուր պատ, որ քանդելու համար մեծ
ոյժ էր հարկաւոր:

Օրովհետեւ Ռօբինզօնը աշխատելու սովոր
չէր ու լաւ գործիքներ չունէր, տարակոյս
չկայ որ այս գործն էլ երկար տեւեց եւ մի
օրում չկերջացաւ:

Ամէն առաւօտ երեկոյ ջրում էր իւր ծա-
ռերը մօտակայ աղբիւրի ջրով, որ կրում էր
կօկօսի կեղեւով: Նուտով նա նկատեց որ
ծառերը սկսան աճիլ ու կանաչել, այնպէս
որ նոցա վրայ նայելը ուրախութիւն էր:
Երբ պատը համարեա բոլորովին շինեց վեր-
ջացրեց, որոշեց դուռ չշինել իւր բնակա-
րանի համար. մի օրուայ մէջ բազմաթիւ
ամուր չուաններ հիւսեց, որոնցից մի սան-

դուզ յարմարեցրեց։ Այս ժայռը՝ որի մօտ շինածէր իւր բնակարանը, շատ բարձր էքր։ Ժայռի գլխին էլ մի մեծ ծառ կար։ Նա իւր շինած սանդուղի մի ծայրը այս ծառից կապեց, միւս ծայրը վայր թողեց պարսպի ներսի կողմը։ Ցետոյ փորձեց տեսաւ որ հանգիստ բարձրանում եւ իջնումէ նորանով։

Այս ամէնը վերջացնելուց յետոյ, մտածում էր թէ իւր փոքրիկ քարայրը ինչպէս մեծացնէ ու յարմարեցնէ բնակութեան համար։ Տեսաւ որ միմիայն իւր ձեռքերով ոչինչ չէ կարող շինել։ Խնչ անէր։ Գլուխ պիտի ճաքեցնէր ու մի գործիք հնարէր։

Այս մոքով գնաց նա մի տեղ, ուր առաջ բազմաթիւ տեսակ տեսակ քարեր էր տեսել։ Ուշադրութեամբ որոնելով՝ մեծուրախութեամբ գտաւ շատ քարերի հետ եւ մի տեսակ պինդ քար, որպիսին ուզում էր ինքը։ Այդ քարը կացնի նման էր եւ նորա պէս սուր, մի ծայրին էլ ծակ ունէր, կարծես գիտութեամբ էր շինած մէջը կոթը ամրացնելու համար։ Ուօքինզօնը խսկոյն հասկացաւ որ կարող է նորանից լաւ կացին շինել, եթէ միայն փոքր ինչ աւելի մեծա-

ցնէր այդ ծակը։ մի ուրիշ քարով կարողացաւ այդ բանը գլուխ բերել։ Ցետոյ հաստ փայտէ կոթ շինեց կացնին եւ իւր պարանովը պինդ կապեց։

Այսուհետեւ փորձեց այդ կացնով մատղաշ ծառեր կտրել եւ այս բանը շատ լաւ յաջողեցաւ նորան։ Նորից պտրտելով քարերի մէջ՝ երկու հատ էլ գտաւ, որոնք նոյնպէս շատ օգտակար երեւացին նորան։ մէկը մուրձի նման էր, խսկ միւսը կարճ ու հաստ մահակի նման, մի ծայրը սեպաձեւ։ Ուօքինզօնը երկուսն էլ վերցրեց եւ ուրախ ուրախ վազեց իւր բնակարանը խսկոյն գործի կենալու համար։

Գործը յաջող էր գնում։ սեպաձեւ սուր քարը քարայրի պատին մօտեցնելով ու վրան մրճով զարկելով, փոքր առ փոքր կոտըրտեց պատի քարերը, այնպէս որ մի քանի օրից յետ բաւական ընդարձակ ու կանոնաւոր սենեակ ունեցաւ։

Առաջուց շատ խոտ էր հաւաքել ու արեւի տակ փուել չորացնելու համար։ Երբ խոտը բաւական չորացաւ, տարաւ իւր բնակարանը ու նորանից ընտիր անկողին պատրաստեց իւր համար։ Այսպիսով առա-

ջինանգամ կարողացաւ նա սովորական մարդու պէս պառկած քնել որովհետեւ միքանի գիշեր թուզունի պէս ծառի վրայ նստած էր քնել, եւ ազատ մեկնեց այս կակուղ անկողնի վրայ իւր յոգնած ոտները:
Հետեւեալ օրը կիրակի էր: Որերու կարգը չմոռանալու եւ մասնաւորապէս կիրակի օրը որոշելու համար՝ յատուկ օրացոյց հնարեց իւր համար: Որովհետեւ ոչ թանաք, ոչ գրիչ եւ ոչ թուզթ ունէր, ուստի չորս ծառ ընտրեց, որոնք հարթ կեղեւ ունէին եւ իրարու մօտ էին գտնվում: Նոցանից աւելի մեծի վրայ ամենայն երեկոյ իւր սուրբ քարով փռքրիկ նշան էր դնում: որ նշանակումէր թէ մի օր անցաւ: Եօթ այդպիսի գծերը նշանակումէին թէ մի շաբաթ անցաւ, որից յետոյ երկրորդ ծառի վրայ մի նոյնպիսի գիծ էր քաշում իրենեւ շաբաթուայ նշան, այնպէս ինչպէս որ մենք համարակալի երկրորդ կարգի վրայ մի օդակ ենք ձգում տասը ուռելու փոխանակ: Երբ որ այս երկրորդ ծառի վրայ չորս կամ նայելով ամնի օրերի թուին: Հինգ գիծ էր լինում: երրորդ ծառի վրայ մի գիծ էր քաշում: որ նշանակումէր մի ամբողջ ամիս:

Իսկ երբ այս գծերը տասներկուսի հասնէին չորրորդ ծառի վրայ նշան էր դնում թէ տարին լրացաւ:

III.

Բայց Ռօքինզօնի գտած կօկօսի պտուղները հատել էին եւ ծովն էլ այնքան թէ ոստրէ էր ափ ձգում: որ իրան չէր բաւականանում ապրելու: Ուստի մկասւ հոգալ թէ ուր եւ ինչպէս գտնէ կերակուր ապագայի համար: Վայրի գաղանների ու վայրենի մարդոց երկիւղից գեռ եւս չէր համարձակուել իւր բնակարանից շատ հեռու գնալ: բայց այժմ կարիքը ստիպեց նորան երկիւղը մէկ կողմ թողած՝ ողջ կղզին մանգալ նոր կերակուր գտնելու համար:

Նա մաածեց որ հարկաւոր էր այս ճանապարհորդութեան ժամանակ մէկ կերպով պաշտպանուիլ արեգակի տաքութիւնից եւ նոյն գիշերը մկասւ հովանոց պատրաստել իւր համար:

Մի քանի հատ ուռիի մատղաշ ճիւղեր վերցրեց, ամրացրեց մի մեծ փայտի շուրջը, իսկ երեսի տեղ կօկօսի ծառի լայն տերեւ-

ներ ժողովելով՝ ծովի ափին գտած ձկան փշերով ամրացրեց շինած բոլորակի վրայ։ Հովանոցը այնքան պինդ էր որ շատ լաւ կարող էր բանեցնել։

Որովհետեւ դեռ վաղ էր, Ռօբինզոնը մտածեց մի տոպրակ էլ շինել, որ ուտելու բաները մէջը դնէ եւ եթէ ճանապարհին նոր բան գտնէ, պահէ մէջը։ Երկար մտածեց այս բանի վրայ, մինչեւ որ վերջապէս մի հնար գտաւ։

Պատրաստի չուան դեռ շատ ունէր նա որոշեց նոցանից մի ցանց հիւսել եւ այդ ցանցից մի տեսակ որսի պարկ շինել։ Ահա ինչպէս գործը գլուխ հանեց. երկու ծառ գտնելով իրարից մի արշին հեռու, նոցա վրայ մէկմէկու մէջ շատ չուաններ կապեց որքան կարելի էր խիտ։ Այսպիսով դա նմանեցաւ հինած կտաւի։ Յետոյ մի ծայրին սկսաւ երկայնութեամբ նոյնքան չուաններ ամրացնել եւ նոյնպէս մէկմէկու մօտ։ Սուրան ոստայնանկները թեղան են կոչում։ Այս չուանները հիւսեց լայնութեամբ փաթաթած չուանների հետ, եւ ցանցը պատրաստուեցաւ։ Յետոյ այս ցանցի ծայրերը յետ արեց ծառերի վրայից. չուանների ստո-

րին ծայրերը իրար կապեց, իսկ վերջինները հաւասարեցրեց, հանգոյցներով պնդացրեց եւ ունեցաւ սովորական որսի պարկ, որի բերանին երկայն ու հաստ չուան կապեց, որ կարողանար վզից կախել։

Երեկոյեան ուշ յաջողութեամբ վերջացնելով այդ գործը՝ նա ուրախութիւնից երկար ժամանակ չկարողացաւ քնել։ Առաւտօտը վեր կացաւ արեւը ծագելուց առաջ եւ սկսաւ ճանապարհի պատրաստութիւն տեսնել. տոպրակը վիզն անցրեց, մէջքին չուան կապեց, քարէ կացինը խրեց նորա մէջ, հովանոցն էլ առաւ ձեռքը եւ ուրախ ուրախ ճանապարհ ընկաւ։

Նախ եւ առաջ կօկոսի ծառի մօտ գնաց, մի քանի ընկոյզ կտրեց ու դրեց տոպրակի մէջ. այնտեղից գնաց ծովի ափը, ոստրէներ հաւաքեց եւ վերջապէս աղբեւրի պարզ ջրից խմելով՝ առաջ գնաց։

Հրաշալի առաւտօտ էր։ Արեգակը բարձրանում էր ծովի ետեւից եւ իւր ոսկեփայլ ճառագայթներով լուսաւորում էր ծառերի կատարները. օդը պարզ էր ու զով, ծաղիկների անուշ հստը բուրում էր ամէն տեղ։

Որովհետեւ Ուօքինզօնը տակաւին վախենումէր գաղաններից ու վայրենի մարդկանցից, ուստի խորշումէր խիտ անտառներից եւ մացառուտ տեղերից, այլ մանէր գալիս այնպիսի տեղեր, ուր նա իւր շուրջը ամէն բան տեսնումէր: Բայց շատ անպրոտուղէին այդ տեղերը, այդ պատճառով նա շատ ման եկաւ, եւ մի այնպիսի բան չտեսաւ որ պէտքական լինէր իրան:

Վերջապէս աչքն ընկաւ մի բոյսի վրայ. մօտեցաւ նորան լաւ քննելու: Տեսաւ որ միմեանց մօտ խիտ բուսած թփեր էին. նոցանից ոմանց վրայ կարմրագոյն ծաղիկ կար, ոմանց վրայ կապոյտ եւ ոմանց վրայ էլ սպիտակ, իսկ մի քանիսների վրայ էլ ծաղիկների փոխարէն բուսած էին խոշոր կերասի մեծութեամբ մանրիկ կանաչ խնձորներ:

Ուօքինզօնը այս խնձորներից մէկը կծեց, բայց տեսաւ որ չափաղանց անհամէ: Բարկութիւնից քաշեց ամբողջ թուփը հանեց գետնից եւ կամենումէր դէն ձգել, բայց զարմանալով տեսաւ, որ թփի արմատների վրայ կախուած էին շատ խոշոր ու մանր գունտեր: Նա մոտածեց, որ գուցէ այն գուն-

տերն են բոյսի իսկական պտուղները եւ կտրեց նոցանից մինը. բայց տեսաւ որ սա էլ անհամէ: Նա ուզեց դարձեալ թուփի դէն ձգել, բայց բարեբաղդաբար մոտածեց, որ ամէն առարկայ մի բանի պիտանի է: Սորա համար մի քանի գունտ պահելով տոպրակի մէջ՝ առաջ գնաց եւ հասնելով մի առուի՝ կամեցաւ ճաշել այնտեղ: Մէկ մեծ ստուերաշատ ծառի տակ նստելով՝ հանեց իւր ընկոյզներն ու ոստրէները եւ հէնց որ ուզումէր ուտել՝ յանկարծ հեռուից մի ձայն լսեց: Ուօքինզօնը երկիւղից չգիտէր ուր թագչէր:

Զորս կողմը նայելով տեսաւ մի խումբ վայրի կենդանիներ՝ մեր եղջերուների նման, բայց իրանց երկար վզերովը փոքր ինչ ուղտի էին նման, իսկ գլխներովը փոքրիկ ձիերի: Սոքա լամա ասուած անվնաս կենդանիներն էին: Ամերիկացնք առաջ բեռ կրելու էին գործածում նոցա, իսկ նոցա բրդից շոր էին շինում իրանց համար:

Ուօքինզօնը երբ տեսաւ այս կենդանիներին, սրտով ուզեց նոցա մսի համը տեսնել, ուստի միտքը դրեց նոցանից մէկը սպանել: Մտաւ ծառի տակը ծածկուեցաւ քա-

թէ կացինը ձեռքին բռնած, յուսալով թէ
մէկը այնտեղով կ'անցնի: Այդպէս էլ եղաւ:
Ամենեւին մարդ չտեսած անհոգ կենդանի-
ները առանց կախի նոյն ծառի մօտից
գնումէին աղբիւրը ջուր խմելու եւ երբ
նոցանից մէկ փոքրը շատ մօտեցաւ ծա-
ռին, Ռօբինզոնը կացինով այնպէս ուժով
խփեց նորան որ տեղն ու տեղը գետին գլո-
րեց: Սակայն սկսաւ մտածել թէ ինչպէս
եփէ միսը: Սպանած կենդանին ուսը դրաւ
եւ մտածելով գնաց տուն:

Ճանապարհին նա էլի մի օգտակար գիւտ
արաւ. հինգ վեց լիմոնի ծառ տեսաւ,
որոնց տակը միքանի հասած լիմոններ կա-
յին գետնին թափած: Մէկ մէկ ժողովեց
լիմոնները, ծառերի տեղը նշան դրեց որ
չկորչի եւ ուրախ ու զուարթ շտապեց դէպի
իւր բնակարանը:

Տուն հասնելով, առաջին բանը եղաւ լա-
ման դանակով քերթել: Մորթը արեգակի
մէջ փռեց որ չորանայ, որովհետեւ գուշա-
կեց թէ շատ հարկաւոր պիտի լինի իրան:
Նորա կօշիկները ու գուլբանները համա-
րեա բոլորովին մաշուել էին. մտածում էր
որ այս կաշուց իւր համար ոտնաման շի-

նէ ու բոբիկ ման չգայ: Մանաւանդ նա
վախենումէր որ ձմեռը չմրսի, այս պատ-
ճառով շատ ուրախացաւ որ մորթը հագ-
նելով կը տաքանայ ու ցրտից չի մեռնի:

Երբ կաշին քերթեց ու փորոտիքը հա-
նեց, ետեւի ոտներից մինը կտրեց խորովե-
լու համար:

Այժմ միայն մի բան, այն էլ ամենա-
հարկաւոր բան պակաս էր նորան, այն է
կրակը: Չորացած ծառից երկու մեծ կտոր
փայտ կտրեց, որ իրար քսելով կրակ հանէ
եւ սկսեց մէկմէկու քսել: Այնպէս ուժով
քսումէր փայտերը միմեանց, որ քրտինքը
ջրի պէս փազումէր նորանից, բայց չկա-
րողացաւ կրակ հանել: Հենց որ փայտը
սկսումէր տաքանալ եւ ծուխ էր բարձրա-
նում: Ռօբինզոնի ոյժը հատնում էր եւ էլ
չէր կարողանում գործը շարունակել, ուս-
տի հարկադրվումէր մի փոքր դադարե-
ցնել շփելը եւ մինչեւ նոր ոյժով կը սկսէր
շփել փայտը դարձեալ սառումէր եւ քա-
շած աշխատանքը ի զուր էր անցնում:

Արտի խորքից ախ քաշելով՝ փայտերը
ձեռքից վայր ձգեց, նստաւ իւր անկողնի
վրայ եւ գլուխը կախած տիսուր նայում

էր լամայի մսին, որ չէր կարող ուտել: Վերջապէս յիշեց, որ մէկ անգամ լսել էր թէ թաթարները միաը ձիերու թամբերի տակ տաքացնում եւ այնպէս հում ուտումեն: Միսը հօ ես էլ կարող եմ տաքացնել, մտածեց նայ հապա՞ մի փորձեմ:

Երկու հատ լայն ու հարթ քարեր գտաւ, նոցա մէջ դրաւ մի կտոր միս առանց ոսկորի եւ սկսաւ բոլոր ուժով խփել իւր քարէ մսւրճով: Տասը րոպէի չափ խփելուց յետոյ, տեսաւ որ քարը բաւականին տաքացնել էր: Կէս ժամ չանցաւ՝ քարի տաքութիւնից ու շարունակ խփելուց միսը այնպէս փափկեցաւ, որ առանց զզուելու կարելի էր ուտել:

Յայտնի բան է, այս կերպով պատրաստուած միսը այնպէս համեղ չէր, ինչպէս կրակի վրայ խորովածը, բայց Ռօբինզոնի համար, որ այնչափ ժամանակ միս չէր կերել շատ եւ շատ համեղ ու քաղցր էր: Այս մսի կտորի վրայ մի քանի լիմոն քամեց, որ աւելի համեղ լինի եւ լաւ ախորժակով ուտելով, ինչպէս վաղուց էր որ չէր ճաշել, բոլոր սրտով աղօթեց, գոհութիւն տալով Աստծուն իւր այս նոր ողոր-

մութեան համար եւ երեկոյեան անկողին մտաւ եւ անոյշ ու հանգիստ քնեց մինչեւ առաւօտ:

IV.

Բաւական ուշ զարթելով առաւօտը, Ռօբինզոնը իսկոյն պատրաստուեցաւ որսի գնալու, բայց երբ իւր քարայրից գլուխը դուրս հանեց, տեսաւ որ յորդ անձրեւ է գալիս եւ թէ պէտք չէ մտածել որսի մասին: Ուտի որոշեց սպասել մինչեւ որ անձրեւը կտրի, բայց երկինքը չը պարզուեցաւ, անձրեւը աւելի սաստկացաւ եւ հետն էլ այնպէս որոտումէր ու փայլատակում, որ Ռօբինզոնի քարանձաւը կարծես կրակի մէջ էր. այսպիսի որոտում երբէք լսած չէր նա. երկիրը շարժվումէր, կարծես երկրաշարժ լինէր, եւ որոտումից լեռները այնպիսի ահագին արձագանք էին տալիս, որ Ռօբինզոնը վախից քարայրի մէկ անկիւնում կուչ եկաւ: Նա մոռացաւ որ ճաշի ժամանակ էր, ախորժակը վակուել էր: զարհուրելի մտածմունքներ տանջում էին նորան:

Վերջապէս փոթորիկը կարծես փոքր ինչ

դադարեցաւ եւ Ռօքինզօնի հոգու մէջ յոյ-
սը նորից արծարծուեցաւ։ Այժմ մոտածեց
նա, կարող եմ որսի գնալ. բայց հազիւ
թէ տոպրակն ու կացինն առաւ, որ ան-
ըզգայ ընկաւ գետին։ Կայծակը խվել էր
հէնց այն ծառին որ գտնվումէր քարայրի
վրայ եւ այնպէս որոտումով ջարդուփշուր
էր արել նորան, որ Ռօքինզօնը հարուածից
խլացած՝ կարծումէր թէ մերձ ի մահ վի-
րաւորուած է։

Բաւական ժամանակ անզգայ պառկած
էր նա, վերջապէս ուշքի գալով՝ զգաց որ
դեռ կենդանի է, վերկացաւ եւ առաջին ան-
գամ աչքն ընկաւ քարայրի առաջ ընկած
ծառի կտորների վրայ, որ փոթորիկը կտորտել
եւ այս ու այն կողմն էր ցրուել։ Այս էլ մի
նոր ցաւ. այժմ ուր պիտի ամրացնէր իւր
չուանէ սանդուղը։ Որովհետեւ անձեւը
բոլորովին կտրել էր եւ այլ եւս որոտում
չէր լավում։ նա որոշեց վերջապէս մէկ
գուրս նայել իւր այրից։ Իւր տեսածները
նորից զարթեցրին իւր հոգու մէջ շնոր-
հակալութիւն եւ սէր դէպի Աստուած եւ
ամաչեցրին նորան իւր փոքրոգութեան հա-
մար. կայծակից խորտակուած ծառի կոճզը

մօմիպէս վառվումէր. այժմնառուանց ամե-
նաչնչին աշխատութեան պատրաստի կրակ
ունէր։

Այլ հետ հարկաւորութիւն չունէր մոտա-
ծելու թէ ինչպէս պիտի անցկացնէր ձմե-
ռը առանց կրակի։ Նոյն օրը թողեց իւր
որսը որովհետեւ կամեցաւ կրակից օգուտ
քաղել եւ իւր լամայի միու խորովել։ Կայ-
ծակի կրակը գեռ բոլոր ծառը չէր այրած,
ուստի նա իսկոյն սանդուղից բարձրացաւ
մի խանճող առաւ ու իջաւ իւր պարսպա-
պատ բակը, ուր լաւ կրակ վառեց, յետոյ
նորից բարձրացաւ ու մնացած ծառի ար-
մատը հանգցրեց որ չհատնի։

Խոկոյն սկսաւ խոհարարութիւն անել եւ
քանի որ կրակին նայումէր, ուրախու-
թիւնից խելքը թոցնումէր։ Եթե միու խո-
րովուեցաւ, վազեց ծովի ջուր բերեց կօկօ-
սի ամանով եւ այս ջրով որքան պէտք էր
աղեց միու։ Միայն նաև կարող է իմանալ
թէ ինչպէս Ռօքինզօնը խորոված մնից մի
կտոր կտրեց ու կերաւ, ով որ նորա պէս
այդքան ժամանակ ընտիր պատրաստած
կերակուր չէ կերել եւ ուտելու յոյս էլ չէ
ունեցել։

Մեծ գործը դեռ մնումէր. ինչպէս անէր
որ կրակը շարունակ վառուած մնար ու
չանգչէր. թէպէտ ցերեկը կարող էր շա-
րունակ փայտ դնելով կրակը վառ պահել
բայց բաւական չէ որ այդպիսով երկար
ժամանակ չէր կարող գլուխը հեռացնել իւր
քարայրից ուտելիք գտնելու համար, նաեւ
կարող էր պատահել որ գիշերը քնած ժա-
մանակ յորդ անձրեւ գար եւ կրակը բոլո-
րովին հանգնէր. Յետոյ ի՞նչ անէր. Երկար
մտածեց այս բանի վրայ. վերջապէս պա-
տահմամբ աչքն ընկաւ իւր բակի ասլառափ
պատի վրայ, որի միջից գետնից մի արշին
բարձրութեամբ դռարս էր ցցուած մի խո-
շոր քար. մտքումը մի լաւ բան եկաւ:

Չնայելով որ փոքր ինչ առաջ յորդ անձ-
րեւ էր եկել, բայց այդ քարի տակ ինչպէս
մի տանիքի տակ, բոլորովին չօր էր մնացել.
Ոօբինզօնը իսկոյն մտածեց որ այդտեղ մի
լաւ վառարան կարելի է շինել. բայցի գո-
րանից կարելի է այդտեղ եւ ընտիր խո-
հանոց պատրաստել իւր հնոցով ու ծխնե-
լուզով. Իսկոյն ձեռք տուեց գործի:

Սկսաւ իւր բահով այն քարի տակը մի
տրչինի չափ փորել եւ յետոյ ու զեյ փորա-

ծի երկու կողքից քարէ պատ բարձրացնել:
Նա մտաքերեց որ քարայրից փոքր ինչ հեռու
տեսել էր հասարակ կաւի նման հոր, այժմ
մտածեց նորանից աղիւս շինել. Առաւ իւր
բահով ու քարէ կացինը եւ գնաց գէպի այն
կաւոտ տեղը: Մաստիկ անձրեւից այնպէս
վափիկել էր հոգը, որ շատ հեշտ էր փո-
րել. Կաւը ոտներով շաղախեց եւ բահով
տափակացնելով քառակուսի ձեւեր տուեց
հասարակ աղիւսի մեծութեամբ՝ ու կացի-
նով հաւասարացրեց: Կարճ ժամանակի
մէս շատ այսպիսի աղիւսներ պատրաս-
տեց եւ շարեց արեգակի մէջ չորա-
նալու: Տեսնելով որ գործը յաջու է
առաջ գնում աւելի եռանդով սկսաւ գոր-
ծը շարունակել: Բայց բահը գետնին որ
խփեց, մի կարծր բանի դիպաւ եւ քիչ
մնաց որ կոտրուէր: Ոօբինզօնը կարծեց
թէ քարին դիպաւ, բայց որչափ զարմա-
ցաւ երբ փորեց ու տեսաւ որ մի կտոր
բնական ուկի էր: Այդ կտորը այնչափ մեծ
էր, որ եթէ ձուլուէր, կարելի էր շատ
սոկի փողեր կտրել:

Բայց Ոօբինզօնը գտած գանձի վրայ ու-
րախանալու տեղ՝ ոտով մի կողմ շպրտեց

ու մտածեց. ի՞նչ օգուտ ինձ սորանից. ի՞նչ կարող եմ ձեռք բերել սորանով. աւելի լաւ չէ՞ր եթէ սորա տեղ մի կտոր երկաթ գտնէի, որից կարող էի ինձ համար մի լաւ բաշ կամ կացին շինել. Եթէ մի քանի հասարակ մեխ կամ մի օգտակար գործիք տային նորան, ուրախութեամբ կը տար ամբողջ կտոր ուկին: Նա գիտէր որ փողը ինքն ըատ ինքեան հարստութիւն չէ, որ նա ոչ հաց կը տայ մարդուն եւ ոչ ջուրը եթէ որ հնար չկայ նորանով պէտք եղած բաները ձեռք բերելու: Անգլիայում շատ լաւ բաներ կարող էր ձեռք բերել այն ուկով իսկ այստեղ նա բոլորովին անպէտք էր իւր համար, այստեղ նորա բոլոր հարստութիւնը աշխատանքի մէջ էր կայանում:

Ուր որ փողը հարստութիւն է համար զում գեռ այնտեղ էլ առանց աշխատանքի շատ հազիւ է ձեռք բերվում եւ եթէ ձրի է ճարվում մեծ օգուտ չէ տալիս: Ինչ որ հեշտութեամք է ձեռք բերվում հեշտ էլ վատնվում է եւ շատ ուղիղ են ասել խելօք մարդիկ, թէ միմիայն ազնիւ աշխատանքն է կազմում մարդուս իսկական հարստութիւնը:

Որովհետեւ ցերեկով անտանելի շոգ էր, Ռօբինզօնը ստիպուեցաւ առաւօտները վազ վերկենալ ու գիշերը ուշ պառկել վասնզի այդ էր աշխատելու ամենալաւ ժամանակը: Առաւօտը վազ վերկացաւ, իւր կրակին փայտ աւելացրեց, ընթրիքից մնացած կէս կօկոսը կերաւ եւ ուղում էր իւր լայմայի մնացած միսն էլ խորովել, բայց տեսաւ, որ խիստ շոգից բոլորովին հոտել էր: Այսպիսով ստիպուեցաւ այդ օրը առանց խորովածի անցկացնել:

Գործի պատրաստուելով տուպրակն առաւ ձեռքին ու գտաւ նորա մէջ բոյսի արմատից կախած գունտերը, որ նա պահել էր մոտածելով թէ մի բանի պէտք կը գան: Մտածեց այդ գունտերը տաք մոխրի մէջ թաղել որ տեսնէ թէ եփելուց յետոյ ինչպիսի բան կըդառնայ: Այնուհետեւ այնպէս եռանդով աշխատեց, որ մինչեւ ճաշը պատրաստեց այնքան աղիւս որբան հարկաւոր էր վառարանը շինելու համար. յետոյ գնաց ծովի ափը ոստրէ հաւաքելու, թէպէտ շատ քիչ գտաւ. բայց այնտեղ մեծ ուրախութեամք գտաւ ուրիշ կերակուր, որ ոստրէից շատ պատռական էր. գտածը մի կենդանի էր,

որ թէպէտ երբէք չէր տեսել, բայց լսել էր որ
նորա միսը շատ համեղ է ու առողջարար. դա
մի կրիայ էր, եւ այնպէս մեծ կրիայ, որ ան-
շուշտ երկու փութ կը քաշէր: Մէկ կեր-
պով կրիան ուսը գնելով գնաց իւր բնա-
կարանը. այնտեղ կացնով այնքան խփեց
կրիայի ներքեւի մասին, մինչեւ որ վերջա-
պէս խցեսնորթը կտրտեց. յետոյ կրիան
միջից հանեց, սպանեց եւ մի լաւ կտոր
խորովածացու կտրելով՝ սկսաւ խորովել:
Մինչեւ որ միաը կը խորովէր, սկսաւ մատ-
ծել թէ ի՞նչպէս անէ որ մնացած միոն էլ
չփշանայ լամայի մսի պէս: Ոչ աման ունէր
եւ ոչ էլ աղ թէ աղէր: Նատ ցաւում էր
որ այս կրիայի միսը, որ երկու շաբաթից
աւելի բաւական էր իրան, հետեւեալ օրն
եւ եթ պիտի ապականուէր: Յանկարծ միտն
եկաւ որ կրիայի պատեանի վերին կէպը
բոլորովին գործածական տեխուրի նման է.
նա կարող էր ամանի տեղ ծառայել: Բայց
աղ որտեղից գտնէր: Ի՞նչպէս թէ որտեղից.
հապա ծովի ջուրն ի՞նչացու է: Եթէ մսի
վրայ ծովի ջուր ածէր, աղի համ չէ՞ր տայ
նորան: Այս մոտածմունքը հիացրեց նորան
եւ մեծ ցանկութեամբ կերաւ կրիայի մսի

խորոված կտորը բայց շատ ախտոսաց, որ
հաց չունի որ ամէն մի կերակրի ընտիր
համեմի տեղ է ծառայում: Այս ժամանակ մոխրի մէջ թաղած գունտերը:
Տեսնենք ի՞նչ եղաւ, ասաց նա, եւ մինր
հանեց: Ո՞րչափ ուրախացաւ, երբ տե-
սաւ որ կարծր գունտը բոլորովին փափկել
էր եւ երբ կտրեց՝ այնպիսի մի ախորժելի
հոտ վէեց միջից, որ իսկոյն տարաւ երա-
նը համը տեսնելու. եւ ի՞նչ, այնպէս հա-
մով էր որ կարող էր հացի տեղ բռնել: Այդ
գունտը գետնախնձոր էր (*):
Ընթրեկիս Ռօբինզոնը մոտածեց որ վատ
չէր լինի եթէ մի կենդանի ընտելացնէր
իրան: Կզզու վրայ ոչ շուն էր տեսել եւ
ոչ կատու. նորա տեսած միակ կենդանին
լաման էր, ուստի մոտածեց որ մէկ կերպով
մինը բռնէ ու պահէ: Միւս առաւոտ շատ
վաղ վերկացաւ ու պատրաստուեցաւ որսի
գնալու: Ճանապարհին շատ թռչունների
հետ տեսաւ նաև միքանի հրաշալի թու-
թակներ: Թէպէտ շատ սրտով ուղղում էր

Ռօբինզոնի ապրած ժամանակ գետնախնձորի
գործածութիւնը գեռ ևս անյայտ էր Եւրոպայում:

նոցանից մէկը բռնել ու կրթել, բայց ստիպուած էր այս բանը մաքից հանել, որովհետեւ մեծ թութակ բռնել անկարելի էր, ճռտերի բոյն էլ ոչ մի տեղ չէր երեւում: Բայց թութակներից շատ առելի նշանաւոր էր այդ առաւոտ արած նոր գիւտը: Մաս գրցելով ծովի մօտ գտնուած մի ժայռի գլխին, այնտեղից նայեց սարի խոռոչը եւ մի բան տեսաւ, որ չկարողացաւ պարզ որոշել թէ ինչ է, ուստի խկոյն իջաւ խոռոչը եւ մեծ ուրախութեամբ տեսաւ, որ գտածը ազ էր եղել, այդ աղը գոյացել էր ծովի ջրերից, որ մակընթացութեան ժամանակ գետնի փոսերի մէջ հաւաքուելով գոլորշիացել էին: Թէպէտ մինչեւ այն ժամանակ ծալի ջուրը աղի տեղ էր գործածում բայց այդ միեւնոյնը չէր: Ծովի ջուրը փոքր ինչ դառն է եւ մի տեսակ անախորժ համ ունի, բացի գորանից թէպէտ Ռօբինզոնը կարծում էր թէ ծովի ջրով միսը երկար ժամանակ կը պահպանուի, բայց սխալվում էր, որովհետեւ այդ ջուրը գետի ու ջրհորի ջրի պէս՝ կանգնած ժամանակ պականվում էր: Ուրեմն աղը շատ հար-

կաւոր էր նորան, ուստի իսկոյն գրապանները լցրեց նորանով: Այնուհետեւ ուրախ ու շաբունակեց ճանապարհը եւ գնաց հասաւ լամաների անցնելու տեղը բայց ոչ մի հատ չդառնաւ այնտեղ, դեռ վաղ էր եւ հարկաւոր էր մինչեւ ճաշը սպասնել: Նատաւ մի ծառի տակ, տոպրակից հանեց խր ճանապարհի պաշարը, այն է խորոված միսն ու գետնախնձորը, եւ սկսաւ ուտել: Կերաւ պրծաւ թէ չէ, տեսաւ որ լամաները հեռուից թռչկոտելով գալիս են: Ռօբինզոնը խկոյն կրակի մօտ մի հաստատուն ծառի ետեւը թաքկադաւ եւ առաջուց պատրաստած որոգայթը ձեռքին սպասում էր, որ նոցանից մինը մօտենայ իրան: Նատերն եկան անցկացան առանց նորան մօտենալու եւ նա ոչինչ չկարողացաւ անել, վերջապէս մէկը այնքան մօտեցաւ, որ հարկաւոր էր միայն ձեռքը մեկնել ու չուանը լիզը ձգել: Եւ այս այնպէս յաջողեցաւ նորան, որ մատաղահամ լաման ընկաւ նորա ձեռքը: Խեղճը հէնց որ ուզում էր մայել, Ռօբինզոնը վախենալով թէ մի գուցէ ոորա ձայ-

նից միւսները խրտնեն, կապը պինդ քաշեց, այնպէս որ կենդանին ստիպուեցաւ լուել, Յետոյ նորան ձգեց մօտակայ թփի մէջ, որ միւս լամաները չտեսնեն:

Բռնած լաման երկու ձագ ունէր, որո՞նք գնացին մօր ետեւից եւ կարծես ամենեւին չէին վախենում Ռօբինզօնից: Սա գրկումէր նոցա եւ նոքա էլ լիզումէին իւր ձեռքերը, իբր թէ խնդրումէին որ ազատէ իրանց մօրը:

Երբ լամաները հեռացան ջուր խմելու տեղից՝ Ռօբինզօնը կարճ ճանապարհով տուն տարաւ բռնած լաման, ձագերն էլ վազեցին նորա ետեւից: Այս փոքրիկ գերդաստանը տեղաւորելու համար որոշեց իւր քակի մօտ շուտով մի փոքրիկ փարախ շինել ու այնտեղ պահել իւր գերիները, մինչեւ որ մի աւելի յարմար բնակարան գտնէ:

Լաման ձառին կապեց ու խսկոյն գործի կացաւ. մանր ձառեր կտրտեց եւ այնպէս իրարու մօտ տնկեց, որ մի հաստ պատ կազմուեցաւ: Լաման յոգնած էր, ուստի խոտի վրայ պառկեցաւ եւ ձագերն էլ ամենեւին չմոտածելով որ գերի են, ուրախ ուրախ ուտումէին մօր կաթը: Տասն անգամ

գործը թողեց Ռօբինզօնը որ այս տեսարանին նայի եւ անասելի ուրախութիւն էր զգում: Երբ մտածումէր թէ այլ եւս մենակ չէր ինքը: Եւ այս ուրախութիւնը այնպէս ոյժ ու քաջութիւն տուեց նորան, որ կարճ միջոցում փարախը շինեց պրծաւ: Լաման ու ձագերը ներս տարաւ փարախը եւ հաստ ճիւղերովէլ գուռը ամուր փակեց: Ռօբինզօնը յոյս ունէր որ լամաները շատ մեծ օգուտ պիտի տան իրան. Ժամանակով կարող էր նոցա բրդից իրան համար մի տեսակ հագուստ շինել, իսկ կաթից՝ իւղ եւ պանիր պատրաստել:

Կարճ միջոցում լաման իւր ձագերով ընտելացաւ նորան: Երբ Ռօբինզօնը տուն էր գալիս, նոքա առաջ էին վազում եւ հոտոտելով նայումէին թէ իրանց համար մի որեւէ բան ըերել է թէ ոչ եւ երբ իրանց թարմ խոտ կամ կանաչ տերեւ էր տալիս, շնորհակալութեամբ լիզումէին նորա ձեռքերը:

Նուտով նա ձագերը մօրից բաժանեց ու սկսաւ շարունակ առաւօտ երեկոյ կթել կաթ ստանալու համար:

Որովհետեւ կօկոսի ձառը շատ մեծ օգուտ

Էր տալիս Ոօբինզօնին, ուստի ցանկացաւ շատացնել այդ ծառը, բայց ի՞նչպէս անէր: Աւրիշ ճար չկար, պէտք է մի քանի կօկոսի ընկոյզներ ցանէր: Ոէպէտ եւ շատ գժուար էր նորա համար այդպիսի համեղ ու հազուագիւտ կերակուրը զոհել, բայց եւ այնպէս վերցրեց ցանեց եւ կարծ միջոցից ու բախութեամբ նկատեց, որ իւր յոյսը սկսում էր իրագործուիլ եւ որ մի քանի կօկոս շառափզներ էին արձակել:

Կամաց կամաց մեծ ու պատիկ լամաները տյնպէս ընտանի ու հեղ գարձան ինչպէս մեր շները, եւ Ոօբինզօնը սկսաւ բեռնակրի աեղ գործածել նոցա, երբ որ հարկաւոր էր լինում՝ մի ծանր բան տեղափոխել:

Վերջապէս աղիւսներն էլ չորացան: Նա կաւոտ հող գտաւ, որ կրի տեղ ծառայեց, յետոյ տափակ քարից ծեփիչի նման մի բան շինեց: Եւ այսպէս քարէ պատ չինելու համար ամէն պատրաստութիւնները վերջացնելով, իւր ծեռքով շինած կողովով աղիւսները բարձեց լամայի վրայ ու բերեց կրակ վառած տեղը:

Գործը բաւական յաջող էր գնում: Նա արդէն կանգնել էր իւր խոհանոցի մի պա-

տը եւ երկրորդի հիմքն էր գրել, բայց մի բոլորովին նոր ու անակնկալ դիպուած գագարեցրեց նորա շինութիւնը: այս բայց այս մասնաւուայ բարձրացաւ: այս բայց այս այս այս իրար նոր սիզաւուն նույն պահապահ նույն միջն այս մասնաւուայ այս Վ. Գիշեր էր: Ոօբինզօնը հանգիստ պառկած էր իւր անկողնում: իսկ լամաները, որոնց փոքր ինչ առաջ տեղափոխել էր իւր բնակարանը, պառկած էին նորա ոտների մօտ: Լուսինը պայծառ լուսով փայլում էր կապոյտ երկնքում: ոչինչ ձայն ձուն չկար: Ոօբինզօնը ցերեկուայ աշխատանքից յոգնած, անոյշ քնի մէջ էր արդէն, երբ յանկարծ գետինը սաստիկ շարժուեցաւ եւ այնպիսի զարհուրելի ճայթիւններ ու ձայներ լսուեցան, որ կարծես շարունակ ամէն կողմից որոտում էր: Ոօբինզօնը զարթեցաւ եւ երկիւղից վեր թռաւ անկողնից, խեղճը չէր իմանում թէ ի՞նչ է պատահել եւ թէ ի՞նչ պէտք է անէ: Այդ ըոպէին մի քանի զարհուրելի հարուածներ լսուեցան գետնի տակից, երկիրը շարժուեցաւ, եւ մի սարսափելի փոթորիկ բարձրացաւ: Ոօբինզօնը երկիւղից կիսամեռ դուրս վազեց բնակարանից

բակը, լամաներն էլ վախից վազեցին նորա
ետեւից: Հազիւ թէ դուրս էին եկել այնուե-
լից, երբ քարայրի վրայ կախ ընկած ժայռը
փուլ եկաւ: Ուօքինզօնը լամաների համար
շինած անցքից դուրս գալով՝ ոկսաւ վա-
գել. լամանէրն էլ յետ չէին մնում նորանից:
Ամէնից առաջ մոտածեց ժայռի տակ ըր-
ճը լիսուելու համար՝ վախչել ազատուիլ մօ-
տակայ սարի ետեւ գտնուած ընդարձակ
դաշտավայրը: Վազելիս զարհուրելով ու զար-
մանքով տեսաւ, որ հէնց սարի այդ տեղը
ահագին անդունդ էր բացուել, որի միջից
ծուխ ու բոց, մոխիր ու քար էր դուրս
ժայթքում եւ կրակի նման մի հեղուկ էր
հոսում: որ կոչվում է լուս: Մեծ դժուա-
րութեամբ կարողացաւ վախչելով ազատուիլ
այդ վտանգից, որովհետեւ կրակէ գետը ա-
րագ առաջ էր վազում եւ կրակած
քարեր ամէն կողմից անձրեւի պէս թափ-
փում էին:

Նա գիմեց գէպի ծովը: Բայց այստեղ մի
ուրիշ՝ աւելի զարհուրելի վտանգ էր սպա-
սում նորան: Սաստիկ փոթորիկը ամպերը
հաւաքեց եւ մի այնպիսի հեղեղ եկաւ, որ
մի բոպէի մէջ ողջ ափը ծովացաւ:

Ուօքինզօնը հազիւ հազ կարողացաւ մա-
գրլցելով ծառը բարձրանալ, բայց խեղճ լա-
մաներին ջուրը տարաւ: Նորա սիրալ կը-
տըրտվում էր լսելով խեղճերի սրտաշարժ-
ազաղակները եւ մինչեւ անգամ իւր կեանքը
վուանգի մէջ դնելով կ'ազատէր նոցաւ եթէ
նոյն վայրկենին աչքից հեռացած չլինէին:

Երկրաշարժը փոքր ինչ էլ տեւեց յեաոյ
ամէն բան միասին դադարեցաւ. հողմը հան-
գարտուեցաւ, լաւայի արտաթորութիւնը
կարուեցաւ, ստորերկրեայ ձայները լռեցին.
Երկինքը պարզուեցաւ, եւ մի քառորդ ժա-
մուայ մէջ բոլոր ջրերն էլ քաշուեցան:

Այսպիսի երկրաշարժեր պատահում են
հետեւեալ պատճառով. գետնի տակ կան
շատ գատարկ տեղեր կամ փոսեր, որոնք
ընդարձակ նկուզների նման են. այն իսուները
օգով ու գոլորշիներով լի են: Միեւնոյն ժա-
մանակ երկրի խորքում զանազան գիւրա-
վառ նիւթեր կան, օրինակ ծծումբ ձիւթ-
եւ այն, որոնք զանազան պատճառներից
վառուելով՝ նոր գոլորշիներ են տալիս ահա-
գին քանակութեամբ:

Այս պատճառներով գատարկ փոսերում
եղած օգը այնչափ լսյնանում է, որ բա-

ւական տեղ չէ մնում նորա համար, ուստի եւ աշխատում է գոլորշիների հետ մի կերպով դուրս գալ. ահա թէ ինչու այդ տեղում գետինը սաստիկ շարժվում է, մինչեւ որ միջի ճնշուած օդը կարողանում է մի կողմից ճանապարհ բանալ, որտեղից դուրս է գալիս փոթորկի պէս, հետը հանելով գետինի տակ գտնուած դիւրավառ ու հալուած նիւթերը, որցա հետ էլ դուրս է ածում քար, հող եւ ամէն բան ինչ որ պատահում է: Ահա այս հալուած այրուող նիւթերը, որոնք գետի հոսանքի պէս դուրս են հոսում երկրի միջից կոչվում են լախ, որ սառելով քարի նման է դառնում: Լավան ջարդուիշուր է անում ամէն բան ինչ որ պատահում է, երեմն մինչեւ անգամ ամբողջ գիւղեր ու քաղաքներ է կործանում: Բարեազգաբար այդպիսի տեղեր խիստ քիչ կան երկրի վրայ եւ եղածները մեղանից հեռու են: Այն սարերը, որոնցից երկրաշարժից յետոյ լավա է հոսում կոչվում են հրաբուղիս սարեր:

Երբ Ռօբինզոնը իջաւ ծառից, ուր թառել էր հեղեղից ազատուելու համար, այնչափ շփոթուած ու յուսահատուած էր այս

նոր ձախորդութեան վրայ, որ չգիտէր թէ ինչ անէր: Եւ ճշմարիտ, նորա այժմեան դրութիւնը առաջուանից շատ աւելի զարհուրելի էր: Քարայրը, իւր միակ ապահով բնակարանը, անշուշտ քանդուած էր, լամաներին ջուրը եկել տարել էր, իւր բոլոր աշխատութիւնները ոչնչացել էին, պէտք էր ամէն բան նորից սկսել: Սարը թէպէտ այլ եւս կրակ չէր ժայթքում բայց նորա միջից դուրս էլ գալիս գեռեւս թանձր ու սեւ ծուխը: Ո՞վ կարող էր երաշխաւորել թէ նոր երկրաշարժ չի լինի: Այս դրութեան մէջ կարո՞ղ էր նա գէթ մի ըոպէ հանգիստ մնալ. ամէն օր չպիտի սպասէր մի նոր գժբաղդութեան:

Այս տխուր մտածմունքները բոլորովին յսւսահատեցրին նորան: Երկիւղից ու տագնապից մէջքը կրմնեց ծառին եւ լալով ու հառաջելով անցկացրեց մինչեւ արշալոյսի բացուիլը:

Կերջապէս մի կերպով իւր սյժերը հաւաքեց ու գնաց գէպի իւր կործանուած բնակարանը: Բայց ո՞չ ըշափ ուրախացաւ, երբ անակնկալ կերպով իւր տան գաւթից փոքր ինչ հեռու տեսաւ իւր լամաներին որ իւր

առաջը գալիս էին։ Երեւում է որ ջուրը տարել հանել էր նոցա մի բլուրի վրայ, ուրեւ մնացին, իսկ յետոյ երբ ջուրը քաշուեցաւ, իսկոյն վաղեցին եկան իրանց սովորական բնակարանը։ Ակզբում Խօթինզօնը իւր աչքերին չհաւատաց, բայց տեսաւ որ լամաները վաղեցին իւր մօտ ու սկսան խաղալ հետը, ձեռքերը լիզել, թռչկոտել ու մկկալ։ Այս անակնկալ դէպքը քաջալերեց, սիրո տուեց նորան, նա ամաջում էր այդպէս շուտ յուսահատուելուն համար։ Ակրսաւ փայփայել իւր հաւատարիմ լամաներին, կարծես հարազատ որդիքը լինէին, եւ նոցա հետ միասին գնաց տեսնելութէ ինչ դրութեան մէջ է իւր բնակարանը։ Երբ մօտեցաւ բակին, առաջուանից աւելի ամաչեց իւր փոքրոգութեան համար երկրաշարժը իւր կարծածից շատ աւելի փոքր վնաս էր տուել իրան։ Իրաւ բնակարանի վրայի ժայռի կէսը փուլ էր եկել այրը հողով ու քարերով լցրել, բայց շատ հեշտ էր այդ բոլորը մաքրել, մանաւանդ որ այն ժամանակ առաջուանից աւելի կը մեծանար բնակարանը եւ աւելի յարմար կը լինէր բնակութեան համար։

Խօթինզօնը ծունկ չոգեց ու գոհութիւն տուեց Աստծուն այս նոր ազատութեան համար, յետոյ արիութեամբ սկսաւ աշխատել իւր բնակարանը ժայռի վլուածքից մաքրելու համար։ Հողը շուտով դուրս ածեց, բայց տակը ժայռի մի մեծ կտոր կար, որ թէեւ երկու կտոր էր եղած, սակայն այդ կտորներն էլ այնքան մեծ մեծ էին, որ մէկ մարդ տեղից շարժել անդամ չէր կարող։ Շատ մոտածեց թէ ինչպէս գլորէ այս մեծ քարերը. վերջը միտն եկաւ, որ մանկութեան օրերում տեսել էր, թէ ինչպէս են բարձրացնում ծանր բաները աշխատաւոր մարդիկ։ Մի բաւական հաստ ու բարձր ծառ կարեց, որի մի ծայրը ամրացրեց մի մեծ քարի տակ, յետոյ այդ գերանի տակ որքան կարելի էր մեծ քարին մօտիկ մի ուրիշ աւելի փոքր քար դրեց եւ բոլոր մարմնով ծանրացաւ գերանի երկայն ծայրի վրայ։ Այսպիսով կարողացաւ դուրս գլորել իւր այրից երկու ահագին քարերը, որ ուրիշ կերպով անկարելի էր տեղից շարժել։ Քարայրը առաջուանից երկու անդամ մեծացաւ եւ բացի սորանից աւելի տապահով դարձաւ, որովհետեւ այժմ՝ թէ նորա պատարձաւ,

տերը եւ թէ առաստաղը պինդ քարերից
էին բազկանում, որոնց մէջ ամենափոքր
ձեղք անգամ չէր երեւում:

Երբ այս գործը վերջացրեց, Աօքինզօնը
դեռ ահուգողը սրտում՝ գնաց հրաբուղիս
սարը տեսնելու. Նորա միջից դեռ եւս բարձ-
րանումէր սեւ ու թանձր մուխը: Մօտե-
նալու հնար չկար, միջից էլի գուրս էր
գալիս փոքր ինչ սառած լավա: Նկատելով
որ լաւան իւր գետնախնձորի բուսած կող-
մըն է հոսում; շատ վախեցաւ որ չլինի
թէ այն բոյսերը բոլորովին չորանան: Եւ
չկարողացաւ հանգստանալ մինչեւ որ չը-
տեսաւ որ գետնախնձորները անշնաս են
մնացել. իսկոյն միտքը դրաւ կղզու զանա-
զան կողմերը գետնախնձոր տնկել, որ չլի-
նի թէ մի որեւէ գժբաղդութեան ժամանակ
յափտեան զրկուի այս հրաշալի բոյսից:

Այսուհետեւ նա դարձեալ զբաղուեցաւ
իւր խոհանոցի շինութեամբ: Երկրաշարժը
այս գործին էլ մեծ օգուտ էր բերել, որով-
հետեւ հրաբուղիսը ուրիշ տեսակ տեսակ
նիւթերի հետ իւր բերանից շատ կրաքա-
րեր էլ գուրս էր թափել: Այսպիսի քարե-
րից հանգած կիր ստանալու համար՝ առ-

հասարակ կրային հնոցներում այրում են
նոցա, բայց նորան հարկ չէր այդպէս անե-
լու, որովհետեւ այդ քարերը արդէն պ-
րուել էին նոյն իսկ սարի բերանի մէջ: Աօ-
քինզօնին միայն մնումէր փոս փորել այդ
քարերը մէջն ածել, վրան ջուր ածել եւ
թիով խառնել: Այսպիսով կիրը պատրաս-
տուեցաւ. հետը աւազ խառնեց եւ ուրախ
ուրախ սկսաւ իւր գործը: Վերջապէս հրա-
բուղիսի մուխը կտրելով՝ Աօքինզօնը սիրտ
առաւ, մօտեցաւ նորա բերանին: Տեսնելով
որ լավան սառել է եւ ոչ մի տեղ ծուխ չէ
երեւում; Հասկացաւ որ ստորերկրեայ կրա-
կը բոլորովին հանգել է եւ թէ այլ եւս ու-
րիշ երկրաշարժից վախենալու բան չունի:

VII.

Այս յուսով քաջալերուեցաւ ու սկսաւ
մտածել թէ ինչպէս անէ որ ձմեռուան պա-
շար պատրաստէ իւր համար:

Այս նպատակով նա որսաց էլի ութ լա-
մա, նոյն հնարքով ինչպէս եւ առաջ, բո-
լորը մորթեց, բացի մէկից՝ որ իւր երեք
ընտանի լամաների հետ խառնեց, եւ մնի

մեծ մասը վառարանի մուխի մէջ կախեց որ ապուխտ դառնայ՝ նախապէս միքանի օր աղի մէջ պահելով։

Թէպէտ Ռօբինզոնը այդպիսով բաւական մեծ պաշար ունեցաւ, բայց դարձեալ քիչ էր թվում նորան, որովհետեւ վախենում էր, որ ձմեռը ցուրտ լինի ու երկարատեւ, ուստի միտքը դրաւ որ միքանի լամաներ էլ բռնէ։ Սակայն այս անգամ չյաջողուեցաւ նորան իւր մոտադրութիւնը կատարելու, որովհետեւ լամաները վերջապէս նկատեցին նորա խորամանկութիւնը ու սկսան զգուշանալ։ Ուրեմն պէտք էր ուրիշ եղանակ գտնել նոյն որսալու համար։

Նա նշանաբեց որ ամէն անգամ որ լամաները իրան տեսնում էին աղքիւրի մօտ, մի փոքրիկ բըրակի վրայով արագ արագ վախցում էին անտառը։ Այս բըրակը մի կողմից ցանկի պէտ պատաժ էր փոքրիկ մացառներով, որի ետեւը մի քարքարոտ պատ էր բարձրանում երկու արշին երկայնութեամբ։ Տեսաւ թէ ինչպէս լամաները մի թռոյցքով բըրակից մացառների վրայով ցած էին վազում, ուստի եւ մոտածեց այդ տեղը խոր փոս փորել ու ծառի ճիւղերով ծածկել։

Հետեւեալ օրն եւ եթ երկու մեծ լամաներ ընկել էին փոսը։ Այժմ միսը բաւական էր, իսկ երկրաշարժի շնորհիւ մի նկուղ էլ գլուտաւ պաշարը մէջը պահելու համար։ Երան մէկ կողմը իւր քարայրի մօտ երկու սաժէն խորութեամբ մի ճեղք էր բացուել եւ այս ճեղքից նոր քարայր էր կազմուել, որի անցքը նոյնպէս իւր բակի կողմից էր։ Այսպիսով նա այժմ ունեցաւ մի բնակարան իւր խոհանոցով եւ նկուղով, որոնք հինգ կարծես այդ նպատակով շինուած լինէին։

Ամբողջ ձմեռը ապահով լինելու համար՝ մնում էր էլլի միքանի բան։ Հարկաւոր էր լամաների համար խոտ ճարել, վառելու փայտ հաւաքել եւ շատ գետնախնձոր ժողովել։

Խոտ այնքան հաւաքեց, որ ամբողջ տարի բաւական էր եւ դիղեց բակումը, ինչպէս որ դիւղացքը առհասարակ դիղում էն, պինդ սեղմելով մէկ մէկու վրայ, որ անձրեւը չթափանցէ դէզի մէջ։ Բայց այս աշխատութեան ժամանակ դարձեալ մի նոր բան սովորեցաւ։ Խոտը առանց բաւական չորացնելու հաւաքել երար վրայ էր դիղել։

Նա շատ զարմացաւ երբ տեսաւ որ խոտը
սկսումէ ծխալ, իսկ երբ ձեռքը դէզի մէջ
կոխեց, զգաց որ շատ տաք էր: Ոչընչով
չկարողացաւ բացատրել այս բանը, այլ մի-
այն կարծեց թէ կրակ է ընկել նորա մէջ,
բայց թէ ինչպէս՝ այդ բոլորովին անհաս-
կանալի էր նորա համար:

Նա իսկոյն դէզը ցրուեց եւ մեծ զար-
մանքով տեսաւ որ մէջը կրակ չկայ, բայց
խոտը չափազանց տաք էր ու խոնաւ: Այժմ
վերջապէս վրայ ընկաւ, որ հէնց այդ խո-
նաւութիւնիցն է գոյացել տաքութիւնը:

Երբ խոտը չորացրեց՝ նօրինդօնը դար-
ձեալ կազմեց մի պինդ դէզ, այնպէս որ
ոչ քամին եւ ոչ փոթորիկը կարող էին մի
վնաս տալ նորան: Բայց դէզը անձեւից
ու ձիւնից աւելի լաւ պահպանելու համար՝
եղեգնից մի տանիք շինեց վրան, որ իւր
ամրութեամբ ոչնչով չէր զանազանվաւմ մեր
յարդեայ տանիքներից:

Հետեւեալ օրերը այնքան փայտ հաւաքեց,
որչափ որ հարկաւոր էր ձմեռուայ համար-
յետոյ բաւական գետնախնձոր հանեց հո-
ղից, վերջապէս լիմօնի ծառից բոլոր հա-
սած լիմօնները կտրեց եւ այսպիսով ապա-

հովացրեց իրան ամէն տեսակ անհրաժեշտ
պաշարով տարուայ խիստ ժամանակի հա-
մար:

Սակայն այդ խիստ եղանակը գեռ եւս
չէր վրայ հասել, թէպէտ հոկտեմբեր ամիսը
արգէն լրանութէր: Ցրտի տեղ անձրեւ սկսաւ
գալ, այն էլ յորդ ու անընդհատ անձրեւ:
Ռօբինդօնը չգիտէր թէ ինչ անէ. ամբողջ
երկու շաբաթ չկարողացաւ ոտք գուրս դը-
նել իւր բարայրից, բացի միայն նկուղ մըտ-
նելուց. երբեմն երբեմն նկուղն էր մտնում
իւր ու լամաների համար կերակուր բերե-
լու, երբեմն էլ գնումէր առուակի ջուր բե-
րելու, իսկ մնացած ժամանակը ստիպուած
էր բանդարգեալի պէս տանը նստել:

Ի՞նչպէս երկար էր թիվում նորան այժմ
ժամանակը: Ամենաձանձրակի գիրքը անգին
գանձ կը լինէր այստեղ նորա համար, ամէն
մի թերթի համար կարծես յօժարութեամբ
մի մի օր կը տար իւր կեանքից:

Զտնձրութիւնը ստիպեց նորան զանազան
աշխատութիւնների ետեւից ընկնել, որ մին-
չեւ այն ժամանակ գեռ չէր փորձել: Վա-
ղուց մտքովն անց էր կենում: թէ արգեօք չէր
կարող պտուկ ու կանթեղ շինել, երկու կա-

բասիներ, որոնք շատ օգտակար էին նորան
իւր ներկայ դրութեան մէջ։ Թէպէտ անձ-
րեւը գալիս էր, բայց նա վազեց կաւ բե-
րեց ու սկսեց աշխատել։

Ի հարկէ գործը դեռ շատ յաջող չէր
գնում։ Ակզբում շատ անյաջող փորձեր ա-
րաւ, եւ որովհետեւ բացի գորանից ուրիշ պա-
րապմունք չունէր, ուստի այն բանի մէջ էլ
զուարձութիւն էր գտնում; որ շինած պտուկը
կոտրում ու նորից շինումէր, եթէ շատ լաւը
չէր գուրս գալիս։ Այսպէս անցաւ մի քանի
օր, մինչեւ որ վերջապէս այնքան լաւ պտուկ
ու կանթեղ շինեց, որ ափսոս կը լինէր կոտ-
րել։ Ուստի գարսեց խոհանոցում՝ կրակի
մօտ չորանալու. յետոյ սկսաւ էլի շատ պր-
տուկներ ու զանազան չափի ուրիշ տեսակ
ամաններ շինել։

Իսկ անձրեւը դեռ շարունակ գալիս էր
եւ Ռօբինզոնը ստիպուած էր ուրիշ մի գործ
գտնել՝ ձանձրութիւն չզգալու համար։ Նա
մտածեց ձկնորսի թու շինել։ Վազուց ար-
դէն պատրաստած ունէր խիստ շատ չուան,
որ այժմ շատ հարկաւոր էր նորան։ Որով-
հետեւ մի բան մի քանի անգամ շինելու
համար ժամանակ չէր խնայում; Իսկ համ-

բերութիւն հօ շատ ունէր, ուստի եւ վեր-
ջապէս ցանց հիւսելու ամենաընտիր կերպը
գտնաւ։ Դանակով ծառի փշոտ ճիւղերը
կտրեց եւ նոցա օգնութեամբ կարողացաւ
այնպիսի թօռ շինել, որ իւր ամրութեամբ
ու յարմարութեամբ մեր ձկնորսների գոր-
ծածական թօռերից յետ չէր մնում։

Յետոյ նորա մտքովն անցաւ նետ ու ա-
ղեղ շինել։ Ո՞քան ուրախացաւ, երբ մտա-
ծեց թէ ինչ օգուտ կարող էր բերել այդ
բանը իրան։ Նետով որչափ լամա կամ ու-
րիշ թուչուն ուղէր՝ կարող էր սպանել եւ
որ գլխաւորն է՝ կարող էր պաշտպանուիլ
վայրենիների յարձակումներից։ Այսքան ան-
համբեր էր աղեղն ու նետերը պատրաստ
տեսնելու, որ չնայելով անձրեւին ու հող-
մին վազեց գնաց աղեղի յարմար փայտ
գտնելու։

Ամէն ծառ պէտքական չէր թվում նորան
այդ բանի համար։ Նա որոնում էր այնպիսի
մի փայտ, որ ամուր ու ծանր լինելով՝ մի-
եւնոյն ժամանակ թեքուէր ու կարողանար
ինքն իրան ուղղել։ Վերջապէս ուղած փայ-
տը գտաւ, գարձաւ տուն եւ խիլոյն սկսաւ
հաշխատել։ Նուտով աղեղը պատրաստեց, մը-

նում էին լարն ու նետերը: Մի ամենապինդ չուան ոլորեց ու լար շինեց. յետոյ սկսաւ նետեր շինել: Բայց ոչ մի երկաթի կտոր չունէր, որ նետերի ծայրին ամրացնէր: Մի անգամ լսել էր, թէ վայրենիները իրանց նետերի ծայրերին ձկան ոսկոր ու սրածայր քարեր են ամրացնում: ուստի մոտածեց հետեւել նոցա. միեւնոյն ժամանակ մոքումը զրեց տէգ էլ շինել:

Վազեց ծովի ափը եւ իւր բաղդիյ շատ ձկան ոսկորներ ու սրածայր քարեր գտաւ այնտեղ: Յետոյ մի ուղիղ ու երկայն ծառ կտրեց տէգի համար ու տուն դարձաւ՝ մինչեւ մարմինը թրջուելով անձրեւից, որ դեռ հեղեղի պէս գալիս էր:

Մի քանի օրուայ մէջ տէգն ու նետերը պատրաստեց: Տէգի ծայրին մի ոսւր քար նստացրեց, նետերի ծայրերին՝ պինդ, ասզանման ձկան ոսկորներ, խոկ գոցա միւս ծայրերին վետուրներ ամրացրեց, որ նետերը ուղիղ նպատակին հասնեն:

Երբ որ աղեղը փորձեց, տեսաւ որ որքան էլ վատ լինէր, այնուամենայնիւ կարելի էր նորանոլ թռչուններ ու փոքրիկ կենդանիներ սպանել. բացի գորանից Ոօրինզօնը չէր տա-

րակուսում: թէ կարողէր այդ զէնքով մեծ վնաս հասցնել այն վայրենուն, որ կը համարձակէր մօտենալ նորան: Տէգի վրայ աւելի շատ էր ուրախանում:

Տեսնելով, որ պտուկներն ու կանթեղը արդէն բաւական չորացել են, նա ուղեց այդ իրերը գործածել: Ամէնից առաջ մոտածեցնոր պտուկներից մէկի մէջ հալել սպանած աւգը տից հանած ճարպը կանթեղի ձէթի տեղ գործածելու համար. բայց շատ ցաւեցաւ, երբ տեսաւ որ իւղը հալուելով պտուկը ծըծեց ու սկսեց գուրս գալ, այնպէս որ ամանի մէջ շատ քիչ բան մնաց: Նորանից եղրակացրեց, որ անկասկած բոլոր պտուկներն ու կանթեղն էլ սորա պէս պէտք է ծծեն, եւ յիրաւի չսխալուեցաւ:

Ուրիշը որ լինէր կը վհատէր, բայց Ոօրինզօնը, որ անյաջողութեան ու համբերութեան սովոր էր, կանոն դրեց իւր համար սկսած գործը անկատար չթողնել: Ակըսաւ գլուխը պատռել, թէ ինչպէս անէ որ կաւէ պտուկները չծծեն: Արդեօք, մտածեց նա, նորա համար չե՞ն ծծում պտուկներս, որ ապակէ խառնորդով թրծած չեն, ինչպէս որ անումեն եւրոպայում. բայց ես ինչ-

պէս թրծեմ: Նա մի ժամանակ կարդացել էր, որ բացի աւաղից կան եւ ուրիշ նիւթեր, որոց թվում եւ կաւը, որոնք նոյնպէս թունդ կրակի մէջ այրվում են ու ապակու նման են գառնում: Եւ յիրաւի պտուկներն էլ նոյն ձեւով են այրում: Նախ դարսում են տաք վառարանի մէջ եւ հէնց որ կաւն սկսումէ հալուիլ խակոյն դուրս են հանում: Որ բոլորովին ապակիի չփոխուի:

Այդպէս էլ արեց. իւր խոհանոցում թէժ կրակ վառեց եւ պտուկներից մինը դրեց մէջը: Բայց փոքր ժամանակից յետոյ ճայթիւն լրսուեցաւ եւ պտուկը երկու մասն եղաւ: Ի՞նչ պէտք է արած, մտածեց Ռօբինզոնը: Այժմ սյսպէս պէտք է փորձեմ: պտուկը յանկարծ դնեմ կրակի մէջ, այլ աստիճանաբար տաքացնելով եւ միեւնոյն ժամանակ աշխատեմ: Որ մի կողքը միւսից շուտ չտաքանայ:

Այս նոր փորձը աւելի յաջողեցաւ. պտուկը չճղքուեցաւ, բայց եւ յթրծուեցաւ էլ:

Բայց ինչո՞ւ համար, դարձեալ մտածեց Ռօբինզոնը, կրակը բաւական թէժ էր, ուրեմն ի՞նչն էր պակաս: Երկար մտածելուց յետոյ՝ վճռեց այժմ ոչ թէ վառարանում: Այլ բաց օդի մէջ փորձել: Վառարանից տա-

գութիւնը շատ շուտ էր ներգործում եւ միեւնոյն ժամանակ այնպէս շուտ էր տարածվում ամէն կողմի: Որ կաւը ինչպէս հարկըն է այնպէս չէր արտաշիկվում: Ռօբինզոնը միտքը գրաւ մի լաւ փուռ շինել: Բայց սորս համար հարկաւոր էր լաւ եղանակի սպասել:

Անձրեւն էր հէնց գալիս էր ու գալիս, մինչեւ որ վերջապէս երկու ամսից յետոյ երկինքը սկսաւ կամաց կամաց պարզուիլ: Աչա այժմ ձմեռը կը սկսուի, մտածեց Ռօբինզոնը. բայց բանն այն էր որ ձմեռն արդէն անցել էր: Նա իւր աչքերին չէր հաւատում: Երբ տեսնում էր որ նոր խոտ, նոր ծաղիկներ ու բոյսեր էին բումնում եւ գարձեալ գարունը գալիս էր: Նոգ երկիրներում առհասարակ միշտ այսպէս է լինում:

VIII.

Գարունը գալուն պէս նորա մտածմունքներն էլ հեռաւոր հայրենիքի մասին սկսան յաւզել նորան. վախենալով թէ մի գուցէ ինքը ափի մօտ չեղած ժամանակ կզզու մտից մի նաւ անցնի կամ թէ չէ խարիսխ

Ճգէ նորա վրայ, մոտածեց որ կղզու դուրս ցցուած լեզուի վրայ մի նշան դնէ, սրով ամէնքը կարողանային իմանալ թէ մարդ կայ այդտեղ: Ուստի մի երկայն սիւն տնկեց, որի վրայ կախեց մի դրօշակ, իւր միակ շապիկը, որ չէր կարելի գործածել:

Այժմ նորա ամենամեծ մոտածմունքն ու հոգան այն էր, թէ ի՞նչպէս իւր համար գուլբաներ ու ոտնամաններ պատրաստէր, որովհետեւ հագինները բոլորովին քրքրուել էին. եւ ճանձերը բորիկ ոտներին կծոտելով՝ չարաշար տանջում էին նորան: Զեռքերը, ոտքերն ու գէմքը յորդ անձրեւներից յետոյ բազմացած զանազան մեջատների խայթելուց այն աստիճան ուռել էին, որ այլ եւս մարդու չէր նմանում:

Նատ անգամ՝ ի զուր մոտածումէր, որ մի հնար գտնէ մարմինը ծածկելու. բայց ոչ հարկաւոր գործիքներն ունէր մոտածածը գործադրելու, ոչ էլ շինելու կերպը գիտէր: Խսկ նորա դրութիւնը անտանելի էր դառնում: ոչ ցերեկը կարողանում էր գործ շինել, ոչ էլ գիշերը քնել այնպէս անողորմ կերպով խայթում էին խեղճին ճանձերն ու մոծակները:

Լամայի կաշին վերցրեց ու նորանից նախ մի զոյգ ոտնաման կարեց, յետոյ էլ մի զոյգ գուլբա: Կարել ոչ մէկը չէր կարող, ուստի միմիայն ծակծկեց այդ կաշուէ կտորները եւ չուանով ոտքերին կապեց: Ի հարկէ այս բոլորը անյարմար բաներ էին. չնայելով որ մորթը ներսից արաւ, այնուամենայնի բուրդը սաստիկ տաքութեամբ ոտքերն այրում էր եւ բացի դորանից խոնաւ ու կարծը կաշին այնպէս շփում էր ոտքերին, որ վէրքեր գոյացրեց նորա վրայ, այդ վէրքերը մեծ ցաւ էին պատճառում նորան:

Մի ուրիշ աւելի պինդ ու մի փոքր փոս ընկած կաշու կտորից գիմակ շինեց իւր համար, որի մէջ երկու ծակ բաց արաւ աչքերի եւ մի ծակ էլ բերանի համար, որ կարողանայ ազատ շունչ քաշել:

Որովհետեւ արդէն այսպիսի գործերի էր ձեռք տուել, որոշեց այդ կաշիներից վերարկու եւ վարտիկ էլ շինել: Նատ պէտք է գլուխ ծաքացնէր այդ բաները շինելու համար, սակայն իւր սովորական համբերութեամբ կարողացաւ շինել վերջայնել ամէնը:

Վերարկուն երեք կտոր կաշուց էր բաղկացած, որոնք չուանով ամրացած էին մի-

մեանց հետ, իսկ վարտիկը կազմուած էր առջեւի ու ետեւի երկու կէսերից եւ կողքէրին չուաններով միմեանց հետ կապկապած էին:

Սյօ հագուստները պատրաստելուց յետոյ՝ իսկոյն հագաւ եւ միտքը դրաւ, որ իւր կիսամաշ վերաբկուն միմիայն նշանաւոր տօներին հագնի:

Նոր շորերը շատ օտարութի բաներ էին. գլխից ոտք կողուած էր անպատրաստ մորթու մէջ. կողքին սրի փոխարէն քարէ կացին ունէր ամրացրած. մէջքին կախած էր որսի պարկը, նետն ու ազեղը աջ ձեռքին երկար տէգ, ձախ ձեռքին հիւսած ու կօկօսի տերեւներով ծածկուած հովանոց, իսկ գլխին գլխարկի տեղ ծածկած էր նոյնպէս մորթուց շինած սրածայր կողովի պէս միքան. Այսպիսի անսովոր շորերով տեսնողը անհնարին էր թէ մարդ կարծէր նորան. ինքն էլ երբ մաքուր ջրի մէջ տեսաւ իւր պատկերը, քիչ մնաց որ ծիծաղու մեռնէր:

Սյօ բաները վերջացնելուց յետոյ, նորից սկսաւ պառկները շինել: Փուռը շինած պատրաստ էր, ուստի մնածեց փորձել թէ կը յաջողի՛ արդեօք ամաները թունդ կըտի

մէջ թրծել: Պտուկները եւ ուրիշ բոլոր ամանները դարսեց փուռը եւ փոքր առ փոքր այնպէս թունդ կըակ վառեց, որ փուռը ամբողջապէս կըակ դարձաւ: Այն սոսկակի կըակը պահէց մինչեւ երեկոյ, յիտոյ կամաց կամաց քչացրեց, անհամբերութեամբ սպասելով թէ ինչ պիտի լինի:

Մի պտուկ հանեց, տեսաւ որ իւր ուղածի պէս չէր թրծուել, երկրորդը, երրորդն էլ նոյնպէս: Երբ ամենայետինը հանեց, տեսաւ որ միայն յատակն է քարցել. սորա պատճառն ինչ պիտի լինէր: Խիստ շատ մտածեց նա. վերջապէս մտաբերեց, որ այդ պտուկի մէջ վոքը ինչ ազէր եղել փուռը գնելու ժամանակ: Այսպէս ուրեմն պարզուեցաւ, որ միակ պատճառը ազն է, որով միքանի նիւթեր կըակը դրուելով՝ ապակիանում են: Այժմ հարկաւոր էր միայն պտուկները ծովի ջրով լուանալ կամ մէջները մի քէչ աղ գնել ու խկոյն ապակի կը դառնային:

Ուստի կամեցաւ նոյն իսկ հետեւեալ օրը մի փորձ անել: Կրակը պատրաստել էր, մի ջանի պտուկներ ծովի ջրով լուացել էր, իսկ միւսների մէջ կոշտ աղ էր դբել, մի-

եւնոյն ժամանակ երկու փորձ իմիամին ա-
նելու համար, երբ յանկարծ սիրով սկսաւ
խառնել, գլխի ցաւ եկաւ վրան ու բոլոր
մարմնով թուլացաւ:

Արարիչ Աստուած, ասում էր նա ինքն
իրան, ինչ պիտի անեմ եթէ այլ եւս չկա-
րողանամ տեղից վերկենալ. օգնական չու-
նիմ եւ եթէ հիւանդութիւնից էլ չմեռ-
նիմ այսու ամենայնիւ քաղցից կը մեռնիմ:
Այս ասաց ու անզգայ ընկաւ գետնին...

Թէպէտ փոքր առ փոքր սկսաւ ուշի
գալ, բայց գեռ երկար ժամանակ չկարո-
ղացաւ ոտի կանգնել: Զեռքերն իրար կա-
պած՝ ոչ կարողանում էր խօսել, ոչ մտա-
ծել, այլ միայն մթնած ու թուլացած աչ-
քերով նայում էր երկնքին եւ նուղած ձայ-
նով հազիւ արտասահեց .,, Տէր Աստուած,
ողորմիր ինձ: ”

Վերջապէս ինչպէս եւ իցէ վերջին ոյ-
ժերը հաւաքելով վերկայաւ բոլոր ան-
հրաժեշտ բաները ժողովեց իւր անկողնի
շուրջ, որպէս զի առանց կերակրի չմնայ,
եթէ հիւանդութիւնը բոլորովին ուժից
ձգէ նորան: Մեծ նեղութեամբ կարողացաւ
կրիայի պատեանով, որ ամանի տեղ էր բա-

նեցնում: Նոր ջուր բերել, անկողնի մօտ
դրեց քանի մի խորոված գետնախնձոր եւ
մնացած չորս լիմոնը, յետոյ դարձեալ ան-
զգայ ընկաւ անկողնի վրայ:

Այս միջոցին սաստիկ տենդ եկաւ նորա
վրայ. չնայելով, որ լամայի մորթով ծած-
կուեցաւ, բայց ամենեւին չկարողացաւ տա-
քանալ: Դողը երկու ժամ տեւեց. յետոյ
այնպէս խիստ տաքութիւն առեց, որ կար-
ծես թէ բոլոր երակները կրակի մէջ այր-
վում էին: Այս սարսափելի վիճակի մէջ
այնպէս սպառել էին նորա ոյժերը, որ հա-
զիւ թէ կարողանում էր պատեանով ջուրը
բերանը տանել՝ չորացած լեզուն գոնէ մի
փոքր թայ անելու համար:

Վերջապէս մի լաւ քրտինք եկաւ վրան
եւ մի փոքր թեթեւացը նորա տանջան-
քը: Քրտինքը մի ժամ աւելի տեւեց: Այդ
միջոցին փոքր առ փոքր նորա խելքը գլուխն
եկաւ. առաջին անգամ նա մտածեց, որ
եթէ իւր կրակին փայտ չաւելացնէ, կը հանգ-
ժի: Չնայելով, որ ամենեւին ոյժ չունէր,
բայց եւ այնպէս չորս ոտքով գնաց վա-
ռարանի մօտ եւ այնքան փայտ դարսեց,

որ մինչեւ առաւօտ բաւական լինի: Արդէն գիշերը վրայ էր հասել: Այն գիշերուայ պէս տիսուր ու ծանր գիշեր չէր անցկացրել իւր կեանքում: Մինչեւ լոյս շարունակ փոխէփոխ դողացնում էր ու տաքացնում: սոսկալի գլխացաւը շարունակ տանջում էր նորան: ամենեւին չկարողացաւ սողալով գնալ մինչեւ վառարանը դարձեալ կրակին փայտ աւելացնելու համար:

Երեկոյին հիւանդութիւնը նորից սաստկացաւ: Նորից կամեցաւ գնալ կրակի մօտ, բայց այս անդամին չկարողացաւ: Կրակին մնաս բարեաւ պէտք էր ասել, բայց նօքինզօնը համոզուած լինելով, թէ շուտով իւր վերջին ժամը կը հնչէ, սառնութեամբ տարաւ այդ էլ:

Այդ գիշերն էլ առաջուայ գիշերների պէս անցկացրեց: Վառարանի կրակը հանգաւ, պատեանի մնացած ջուրն էլ սկսաւ հոտել, իսկ նօքինզօնը մէկ կողմից միւսը շուռ գալու կարողութիւն չունէր: Նորան այնպէս էր թվում: թէ արդէն մահը մօտեցել է:

Տագնապը աւելանում էր, կուրծքը ա-

լեկոծկում: շնչառութիւնը քիչ քիչ դժուարանում: Կարծես վերջին վայրկեանը հասել էր. այնպիսի թուլութիւն եկաւ վրան, որ երբէք չէր տեսել: յանկարծ շունչը կրտրուեցաւ, անդամները սկսեց ցնցել: Մէկ էլ գլուխը ծռեց ու անշնչացաւ . . .

Երկար ժամանակ մնաց նօքինզօնը կատարեալ անզգայութեան մէջ. վերջապէս... մի խոր հոգուց հանեց աչքերը բայց եւ սկսաւ այս եւ այն կողմ նայել, որ տեսնէ թէ ուր է. սրովհետեւ ինքն էլ տարակուսութեան մէջ էր չգիտէր, մեռած է թէ կենդանի: Երբ համոզուեցաւ, որ դեռ կենդանի է, շատ տրտմեցաւ. այդ անմիտթար դրութեան մէջ մահը շատ աւելի քաղցր էր համարում քան կեանքը:

Թէսկէտ շափազանց թոյլ էր, բայց ոչ մէկ տեղը չէր ցաւում: Այն սարսափելի չոր տաքութեան փոխարէն այժմ նորա բոլոր մարմնից առատ ու առօղջարար քրտինք էր հոսում: Աւելի լաւ քրտնելու համար՝ պինդ ծածկուեցաւ լամայի մորթու մէջ. կէս ժամ անցնելուց յետոյ՝ բաւական հանգստացաւ: Այժմ էլ ծարաւն էր խիստ տանջում նորան: Մնացած ջուրը բոլորովին փշացել էր.

բարեգաղդաբար մտաբերեց որ մօտը լիմոն
ունի դրած. մեծ դժուարութեամբ կծեց
մէկը եւ ախորժանօք ծծեց նորա հիւթը.
յետոյ քունը տարաւ եւ մինչեւ լոյս քնեց:
Առաւոտը երբ վերկացաւ, բաւական հան-
գիսոր զգաց իրան, միմիայն դեռ շատ թոյլ
էր. ախորժակն էլ բայցուեցաւ ու քանի
մի խորոված գետնախնձորի վրայ լիմոն
քամելով՝ զուարձութեամբ կերաւ:

Երկու օր կարողութիւն չէր ունեցել իւր
լամաներին հոգ տանելու. խեղճերը իւր սո-
քի տակ պառկած՝ շարունակ իւր աչքերին
էին նայում: կարծես հարցնում էին, թէ
արդեօք առաջուանից լաւ է: Բարեգաղդա-
բար այս կենդանիներն էլ ուղտերի պէս
երկար ժամանակ կարողանում են առանց
ջուր խմելու դիմանալ, թէ չէ՝ նոցա վի-
ճակը շատ վատ կը լինէր, որովհետեւ երկու
օր շարունակ ոչինչ չէին խմել, եւ այժմ
էլ Ռօբինզոնը դեռ այնքան թոյլ էր, որ
չէր կարող վեր կենալ եւ ջուր բերել նոցա
համար:

Երբ մեծ լաման իրան բաւական մօտե-
ցաւ, նա իւր ոյժը հաւաքեց եւ կթեց նո-

րան, որովհետեւ վախենում էր թէ մի
գուցէ կաթը ցամաքի:
Այս կաթը որ խմեց, իրան բաւական կազ-
գուրուած զգաց եւ նորից քնեց քաղցր ու խոր
քնով: Միւս առաւօտ տեսաւ որ ախոր-
ժակը խիստ բաց է. մի քանի գետնախըն-
ձորի վրայ լիմոնի ջուր քամեց ու կերաւ
գարձեալ քնեց:

Այս բարերար քունը այն աստիճան կազ-
գուրեց հիւանդին, որ արդէն կարողացաւ
տեղից վերկենալ եւ թոյլ ու դողդոջուն ոտ-
քերով մի քանի քայլ անել:

Մէկ կերպով իւր քարայրից դուրս գնաց
բակը եւ նայեց երկնքին: Առաւօտեան արե-
գակի ախորժելի ու կենդանաբար ճառա-
գայթը խիտ ծառերի միջից ընկաւ նորա
վրայ. նորան այնպէս թուեցաւ, իբր թէ
նոր կենդանութիւն ստացաւ: Ծունկ չոգեց
ու ջերմ շնորհակալութիւն արաւ ևստր-
ծոն, որ իրան առողջութիւն պարփեւեց:
Միքանի օրից յետոյ արդէն բոլորովին ա-
ռողջացաւ եւ կարողանում էր գարձեալ
առաջուայ գործերով պարապել:

Նախ եւ առաջ գնաց տեսնելու թէ ինչ
եղան իւր պտուկները: Երբ որ փուռը բաց

արեց, ի՞նչ էք կարծում ի՞նչ տեսաւ. բոլոր պտուկները այնպէս լաւ թրծուել էին ու քարացել, որ կարծես բրուտիշինած լինէին: Ուրախութիւնից մինչեւ անգամ մռացաւ, թէ այլ եւս նոքահամարեա բանի պէտք չէին, որովհետեւ վաղուց արդէն կրակը հանգել էր, Երբ այս բանը միտն եկաւ, գլուխը կախեց եւ տխուր տըրտում մէկ պտուկներին, մէկ վառարանին էր նայում նայց այլ եւս ձմեռուայ երկիւղ չունէր եւ թէպէտ մանկութիւնից լաւ մաէ կերակրների սովոր էր, սակայն յոյս ունէր, որ առանց դորան էլ կարող էր կառավարուիլ իւր լամաների կաթնով եւ հում մսով:

Ամենեւին չէր ափսոսում որ այնքան պտուկներ շինեց, որովհետեւ նոցա մէջ կարող էր կաթ պահել, որից մտադիր էր կարգ հանել: Որովհետեւ փայտէ աման չընէր, կամեցաւ փորձել, թէ կարելի չէ սրդեօք իւր պտուկներից մէկի մէջ իւղ պատրաստել: Սորա համար կաթի սերը հուաքեց, յետոյ մի փոքրիկ փայտէ շրջանակ շինեց մէջը ծակ, որի մէջ մի փայտ ամրացրեց. յետոյ այս շրջանակով սերը այն-

քան հարեց պտուկի մէջ, մինչեւ որ կարագ հանեց վերջն էլ կարագի վրայ փոքր ինչ ջուր ածեց աւ ազեց: Բայց այս նոր յաջողութեան վրայ ուրախանալիս՝ յանկարծ Ռօբինզօնի միտն եկաւ որ էլ գետնախնձոր խորովել չէ կարող, ուստի տխուր տրոտում նայում էր իւր շինած հիանալի կարագի վրայ, որ համարեա բանի պէտք չպիտի գար: Տեսաւ որ գարձեալ առաջուայ նման կարօտութեան մէջ է, նորա միակ սնունդը պիտի լինէին առաջուան պէս՝ ոստրէն, կաթը, կոկոսի ընկոյզը եւ հում միսը, այն էլ Աստուած գիտէ թէ միշտ կարող էր գտնել:

Մտածում էր թէ այժմ ինչ գործի ձեռք տայ, ինչ որ միայն իւր երկու ձեռքով կարելի էր գլուխ բերել՝ շինեց: Այնպէս էր երեւում, որ քնելուց ու պարապ ժամանակ անցկացնելուց աւելի բան չընէր անելու: Այս մոտածմունքը նորա միրտը շատ կոտրեց, որովհետեւ մանկութիւնից աշխատելու, սովոր էր: Գիշեր ցերեկ մոտածում էր, թէ ինչպէս անէ որ մէկ նաև շինէ: Անգաղար միտք էր անում մի կերպով միայնութիւնից ազատուելու, որ աւելի նեղում

էր նորան մանաւանդ կրակը հանգցնելուց
յետոյ: Յոյս ունէր որ Ամերիկայի ցամաքը
մօտ էր իւր կղզուն եւ միտքը դրաւ: որ
եթէ յաջողի նորան մէկ նաւ շինել, ամէն
վտանդ աչքն առած՝ գնայ հասնի այդ ցա-
մաքին:

Այս մոքով վերկացաւ գնաց մի յարմար
ծառ գտնելու, որի մէջը փորելով կարողա-
նայ նաւակ շինել: Այս եւ այն կողմ պտտե-
լու ժամանակ՝ ուրիշ բաների յետ եգիպ-
տացորենի թուփ էլ գտաւ, որին մենք սո-
վորաբար սիմինդր ենք ասում: եւ միքանի
հատ վերցրեց իւր բնակարանի մօտ ցանելու
համար: Ով գիտէ, ասում էր նա ինքն
իրան, կարող է պատահել որ ժամանակով
ինձ օգուտ տան: Յետոյ գտաւ մի պտղա-
տու ծառ, որ իրան բոլորովին անյայտ էր,
տեսաւ որ նորա վրայից մեծ մեծ պատիճ-
ներ են կախ ընկած, մինը պոկեց, կոտրեց
ու մէջը մօտ 60 հատ լորի գտաւ: Այս լո-
րիների համը անախորժ թուեցաւ նորան,
բայց եւ այնպէս մի հատ հասած պատիճ
դրաւ իւր պարկի մէջ: Դա կակաօ էր, որից
շոկալատ են շինում: Վերջապէս նա էլի գտաւ
մի մեծ ու իրան միանգամայն անծանօթ

ծառ, որի պտուղները կօկօսի ընկուզի չափ
էին, բայց կճեպ չունէր ու խիստ համով
էր: Վերջը կմացաւ որ այդ հացի ծառ է
եղել: Հացի ծառ կոչվումէ այն պատճա-
ռով, որ նորա պտուղները թէ հում եւ թէ
փշրած ու խմորի պէս հունցած շատ վայրե-
նի ազգերի հացի տեղէ բռնում:

Այս ահագի ծառի բնի մէկ կողմը հնու-
թեան պատճառով փոս էր գոյացել: Ոօբին-
գօնը այս որ տեսաւ, իսկոյն մոտածեց կորել
այդ ծառը եւ նաւակ շինել:

Սակայն դժուարը գալիս էր այդպիսի օգ-
տակար ծառը փշացնել՝ քանի որ հաստատ ըր-
գիտէր թէ արդեօք կը յաջողէր նորանից նա-
ւակ շինել, ուստի եւ նորա տեղը մի նշան
գնելով՝ դարձաւ տուն:

Ճանապարհին գտաւ իւր վաղուց ցանկա-
ցած թութակի բոյնը մէջը ձագերով: Երբ
ձեռքը տարաւ թութակները բռնելու, բո-
լորը թուան, մէկը միայն կարողացաւ բռ-
նել: Ոօբինգօնը ուրախ ուրախ շտապեց
տուն: կամենումէր թութակին խօսել սո-
վորեցնել, որ գոնէ այդպէսով մարդկային
ձայնի նման մի ձայն լսէ: Ինչպէս եւ իցէ
շուտով մէկ վանդակ շինեց, իւր ապագայ

աշակերտին բանտարկեց մէջը, դրեց անկողնի մօտ եւ հանգիստ պառկեցու քննց բայց գիշերը մի քանի անգամ զարթեցաւու ինքն իրան սկսաւ մտածել, թէ արդեօք այն մեծ պտուղներով ծառը կտրէ թէ ոչ:

Առաւօտեան հետեւեալ եղրակացութեան հասաւ. միթէ համբերութեամբ ու աշխատութեամբ չեմ կարող ես այն հին ծառից մի նաւակ շինել իսկ եթէ յաջողի, ինչո՞ւ չյուսամ ուրեմն որ կարող եմ վերջապէս աղատուիլ իմ այս տիսուր միայնութիւնից:

Այս մտածմունքը այնպէս շարժեց Թօրինզօնի սիրտը որ իսկոյն վեր թռաւ, կացինը վերցրեց ու լազեց ծառի մօտ, որպէս զի էլ ժամանակ չկորցնի, գործի կանգնի:

Այս աշխատանքը այնպէս տաժանելի էր, որ եթէ ուրիշը լինէր, կացնի առաջին հարուածին իսկոյն ձեռք կը վերցնէր եւ անկարելի կը համարէր ծառը կտրել. փայտը քարի պէս կարծր էր. Բայց Թօրինզօնը իրան կանոն էր զրել թէ որչափ էլ մեծ դժուարութեան ու արգելքի հանգիսի՝ ձեռնարկած գործը անկատար չժողոնէ, ուստի այժմ էլ որոշեց սկսած գործը շարունակել, որքան

Ել ժամանակ եւաշխատութիւն պահանջէ; Առաւօտից մինչեւ երեկոյ համարեա առանց հանգստանալու աշխատեց եւ հազիւկարողացաւ այնքան կտոր փայտ փորել միջից, որ ձեռքն էլ չէր կարողանում մոնել մէջը: Ուրքան ժամանակ էր հարկաւոր ուրիեմն այդ հաստ փայտը ամբողջապէս փորելու եւնաւակ դարձնելու համար:

Նա հասկացաւ որ այդ գործը մէկ տարուայ բան չէ, ուստի հարկաւոր համարեց իւր օրական պարապմունքները կանոնաւոր կերպով բաժանել, որպէս զի ամէն գործ իւր որոշ ժամանակն ունենայ: Թօրինզօնը փորձով գիտէր որ ոչինչ բան այնպէս չէ ընտելացնում աշխատանքին, ինչքան կարգն ու պարապմունքների կանոնաւոր բաժանումը: Ահա այսպէս էր բաժանել նա իւր ժամանակը:

Առաւօտը վազ վեր էր կենում եւ վազում էր աղբիւրը երեսը, ձեռքերն ու ոտքերը լուանալու: Սրբելու բան չունենալով ստիպուած օդումն էր չորացնումն գորա համար վաղէ վազ գնում էր մինչեւ իւր ընակարանը: Փալիս էր տուն հագնվում էր,

յետոյ բարձրանում էր իւր քարայրի վրայի լեռան վրայ, ծունկ էր չոգում ու աղօթում: Աղօթքը վերջացնելուց յետոյ կթում էր իւր լամաները, որոնք փոքր առ փոքր շատացել էին: Կթած կաթի մի մասը պահում էր նկուղի մէջ, իսկ մնացածը նախաճաշին ուտում: Այս զբաղմունքը տեւում էր մի ժամ: Այսուհետեւ ամէն պէտք եղած բաները վերցնելով ուղղակի գնում էր իւր ծառի մօտ. կամ եթէ ջուրը քաշուած լինէր՝ կ'երթար ծովի ափը ճաշի համար ոստրէ ժողովելու: Լամաները գնում էին հետը եւ մինչ Ռօբինզօնը իւր գործով պարապում էր, նոքա մօտը խոտ էին արածում:

Տասը ժամի մօտերը առ հասարակ այնպէս շոգ էր անում, որ անհնար էր գործինել: Ուստի դարձեալ գնում էր ծովի ափը ու լողանում:

Տասն եւ մի ժամին իւր լամաների հետ միասին տուն էր դառնում դարձեալ կթում էր նոյսա, մածունից պանիր էր շինում եւ ճաշի պատրաստութիւն տեսնում: սովորաբար նորա ճաշը բաղկանում էր կաթնից, թարմ պանրից, միքանի ոստրէից ու կօ-

կօսի կէս ընկուզից: Նատ սրտով ուզում էր միս ուտել, ուստի եւ կրակ չունենալու պատճառով դարձեալ ստիպուած էր սկըզբում մոտածած հնարքը գործ դնել, այն է տաքացրած հում միս ուտել:

Ճաշի ժամանակի թութակին խօսել էր սովորեցնում: Ճաշից յետոյ մի ժամ հանգչում էր ծառերի ստուերի տակ կամ իւր քարայրում՝ լամաների ու թութակի մէջ: Նստում էր ու խօսում իւր կենդանիների հետ, ինչպէս մանուկը խօսում է իւր տիկինի հետ, երեւակայելով թէ ասածը հասկանում է: Այսպէս սրտով ուզում էր իւր մորքերն ու զգացնեները մի որ եւ է կենդանի էակի հալորդել, որ նա շատ անգամ մոռանում էր, թէ անբան կենդանու հետ է խօսում եւ ուրախութիւնից խելքը կորցնում էր, երբ թութակը, որին ինքը Պօղոս էր անուանում երբեմն երբեմն պարզ արտասանում էր որ եւ է բառ. նա կարծում էր թէ մարդու ձայն է լսում:

Կէս օրից երկու ժամ անցած ժամանակը (նա արեգակով էր հաշվում) սովորաբար գնում էր իւր նաւակի մօտ եւ երկու ժամ շարունակ անց էր կացնում այդ ծանր աշ-

խատանքի մէջ, յետոյ գնումէր ծովի ափը
կրկին լողանումէր ու ոստրէ հաւաքում:
Օրուայ մնացած մասը պարապումէր պար-
ափում. երբեմն սիմինդը կամ գետնա-
խնձոր էր ցանում: երբեմն հացի ծառի
ոստերը պատուաստումէր ուրիշ ծառերի
վրայ, երբեմն պարտէզն էր ջրում: երբեմն
ցանկ էր շինում պարտիզին, երբեմն քար-
այրի ծառաշէն պատն էր մաքրում եւ ճիւ-
ղերը այնպէս էր հիւսում միմեանց հետ,
որ միասին աճին եւ ժամանակով մի տե-
սակ հովանոց կազմեն: Մի բոպէ պարապ
չէր մնում: միայն շարունակ աշխատելով
կարողանումէր անտանելի միայնութեանը
դիմանալ: Մեծ նեղութիւն էր Ռօբինզոնի
համար, որ այդտեղ ամենամեծ օրը միայն
տասներեք ժամ տեսողութիւն ունէր, այն-
պէս որ երեկոյեան եօթ ժամին միանգա-
մայն մութն էր լինում:

Երեկոյեան վեց ժամին, երբ ուրիշ հար-
կաւոր պարապմունք չէր ունենում զինուո-
րական կրթութիւններ էր անում: սովո-
րումէր նետ արձակել ու տէգը խիել ճիշտ
նպատակին, որ հարկաւոր ժամանակ կա-
րողանայ պաշտպանուիլ վայրենիների յար-

ձակումններից, որոնցից խիստ շատ էր
վախում:

Այս կրթութիւններով վոքր առ վոքր
այնպէս վարժուեցաւ, որ շատ հազիւ էր
սխալում նորա աչքը:

Երեկոյեան նորից կրթում էր լամաները եւ
կերակրի պատրաստութիւն էր տեսնում:
ընթրիքի ժամանակ ճրագի փոխարէն լոյս
էին տալիս լուսինն ու աստղերը:

Երեկոյեան մնացած ժամերը անց էր կաց-
նում կամ սարի գլխին նստած եւ կամ
ծովի ափին զրօննելով եւ իւր վիճակի վրայ
մտածելով: Այսպէս էին անցնում նորա օ-
րերը:

VIII.

Ռօբինզոնը այս կերպով ապրեցաւ կղզու
վրայ երեք տարի: Այդ ժամանակամիջո-
ցում նա շարունակ աշխատում էր նաև
շինութեան վրայ, բայց գեռ կէսն էլ չէր
փորել, այնպէս որ ինչքան էլ շատ աշխա-
տէր, ամենեւին յոյս չունէր թէ երեք չորս
տարուայ մէջ կարողանար բոլորովին վեր-
ջացնել նաւակի շինութիւնը: Մակայն ամէն

օր կամակորութեամբ առաջ էր տանում
գործը:

Մի օր նորա մոքովն անցաւ, որ այդքան
տարիներ ապրել է կղզու վրայ եւ դեռ այդ
երկրի ամենափոքր մասն է յայտնի իրան։
Մեծ ամօթ էր համարում որ իւր յիմար
երկչոտութիւնից ամբողջ կղզին դեռ չէր
ման եկել ուր կարող էր շատ օգուակար
բաներ գտնել։ Այս մնածմունքը այնչափ զբա-
զեցրեց նորան, որ միտքը դրաւ նոյն իսկ
միւս առաւօտ ճանապարհ ընկնել։

Նոյն երեկոյին ճանապարհի բոլոր պատ-
րաստութիւնը տեսաւ։ Առաւօտը կաղ վեր-
կացաւ, լամաներից մէկի վրայ բարձեց չորս
օրուայ ուտելիքի պաշար, իւր բոլոր զէն-
քերը կապեց, աղօթք արաւ Աստծուն եւ
ուրախ ուրախ ճանապարհ ընկաւ։ Բայց
այնու ամենայնիւ վայրի գագանների երկիւ-
զից աշխատում էր իսիտ ու մեծ անտառ-
ներից հեռու փախչել եւ մեծ մասամբ ափէ
ափ էր գնում։

Առաջին օրը մօտ քսան վերստ ճանա-
պարհ գնաց եւ որքան առաջ էր գնում՝
աւելի ու աւելի համոզվում էր, որ իւր
քնակարանի համար ընտրել էր կղզու ամե-

նասնպտուղ տեղը։ Ճանապարհին տեսաւ
բազմաթիւ անձանօթ պտղատու ծառեր,
որոնց պտուղները համեղ էին ու սննդա-
րար։

Որպինզօնը առաջին գիշերը մի ծառի
վրայ անցկացրեց եւ առաւօտը վաղ շարու-
նակեց իւր ճանապարհը։ Նուտով հասաւ
կղզու հարաւային ծայրին։ Հենց որ մօտե-
ցաւ վերջին մի փոքրիկ ծովի մէջ դուրս
ցցուած լեզուակին, յանկարծ կայծակ խփա-
ծի պէս կանգնած տեղը քարացած մնաց.
մազերը ցցուեցան, երեսի գոյնը թռաւ
եւ սկսաւ ամբողջ մարմնով դողալ...աւազի
վրայ տեսել էր մարդու ոտքի նշաններ։ Պարզ
էր որ այդ նշանները կրթուած եւրոպա-
ցու ոտքի տեղեր չէին, այլ վայրենի մարդա-
կերների։

Ահուզովնայեցաւ իւր շուրջը, թփերի տե-
րեւների ամենաթեթեւ խշխոցը սարսափ էր
36 բում նորա վրայ։ Վերջապէս այնպէս սկսաւ
վազել կարծես ետեւից մարդ էր հասնում։
վազելու ժամանակ չհամարձակեցաւ գէթ
մի անգամ յետ նայել։ Սակայն յանկարծ
մի աւելի զարչուրելի տեսարանի հանդիպե-
ցաւ։ տեսաւ որ ծովի ափին մի տեղ փոս

էր փորած ու մէջը այրուած ածուխ կար:
Այդ փոսի շուրջը թափած էին մարդա-
կերների կերած՝ մարդոց գլխների, ձեռնե-
րի, ոտների ու այլ ոսկորներ:

Քիչ մնաց Ռօբինզօնի սիրտը գնար այս զզուե-
լի տեսարանից. մի կերպ ուշքը միտքը հաւաքեց
ու այնպէս արագ ոկսաւ վազել, որ իւր հա-
ւատարիմ լաման հազիւ թէ կարողանում
էր ետեւից հասնել, բայց եւ այնպէս չէր
կամենում ետ մնալ: Վախը այնպէս շփո-
թել էր խեղճ Ռօբինզօնին, որ նա բոլորո-
վին մոռացաւ իւր սիրելի կենդանին եւ սո-
րա ոտների ձայները լսելով՝ կարծում էր թէ
մարդակերներն էին վազում. իւր ետեւից:
Սուս չէ ասած, թէ ահը վաս է քան մահը:

Նա որքան ոյժ ունէր վազում էր. իւր
բոլոր զէնքէրը՝ տէգը, նետը, կացինը, որոնք
այժմ աւելի կարող էին պէտք գալ նորան,
վայր թափեց ձանապարհին, որ վաղելիս
չխանգարեն:

Սակայն այդպէս առանց առաջը նայելու
վազելով, ինքն էլ չգիտէր թէ ուր է գնում
եւ վերջապէս մի ժամ շարունակ վազելուց
յետոյ, եկաւ հասաւ այն զարհուրելի տեղը:
որ իրան այնպէս վախ ու զզուանք էր բերել:

Դարձեալ զարհուրեցաւ խեղճը. արիւնը
նորից սառեցաւ նորա երակների մէջ: Այն-
նեւին չկարողացաւ ճանաչել, թէ այդ իւր
տեսած տեղն է եւ կարծեց թէ արիւնածա-
րաւ մարդակերների մի նոր հետք է գտել
որոնցից աշխատում էր ծածկուիլ: Նորից
սկսաւ բոլոր ուժով վիախչել այդ տեղից եւ այն
ժամանակ միայն կանգ առաւ, երբ բոլորովին
ոյժը հատաւ թուլացաւ:

Մինչ անզգայ ընկած էր գետնին, լաման էլ
հասաւ ու չոփեց նորա ոտների մօտ: Բարեբաղ-
դաբար նոյն տեղն էր վայր ընկել, ուր առաջ
թափել էր իւր զէնքերը, ուստի եւ երբ աչքերը
բաց արաւ, տեսաւ որ իւր բոլոր բաները ընկած
էին իւր մօտ խոտերի մէջ: Եւ այս բոլորը
նա կարծում էր թէ երազի մէջ է տեսնում:

Երկար ժամանակ այդպէս ուշաթափ
պառկած էր. վերջապէս ոտքի կանգնեցաւ ու
սկսաւ խելքը գլուխը ժողովել: Հաւաքեց
իւր բոլոր զէնքերը ու կամենում էր նորից
առաջ վազել, բայց չկարողացաւ, որովհե-
տեւ շատ թոյլ էր. ամենեւին ուտելու ա-
խորժակ չունէր. հաղիւ մօտեցաւ մի աղքիւ-
րի ծարաւը յագեցնելու եւ նորա վճիտ ջրով
զուարթանալու համար:

Ոօբինզօնը յոյս ունէր տուն հասնել բայց
անկարելի էր, որովհետեւ օրը մթնել էր,
խակ տունը գեռ շատ հեռու էր. ուստի կա-
մայ ակամայ ստիպուեցաւ գիշերը անցկա-
ցնել ճանապարհին:

Առաւօտը երբ վերկացաւ, մտածեց որ իւր
երկիւղը չափազանց է եղել: Ահա քանի տա-
րի է որ բնակում եմ այստեղ, մտածեց նա,
բայց գեռ մի վայրենի մարդ չէ մօտեցել իմ
բնակարանիս. սա պարզ ապացոյց է, որ
կղզու վրայ չեն բնակում վայրենիները, այլ
գուցէ երբեմն երբեմն ուրիշ կղզիներից գալիս
են այստեղ իրանց գաղանական տօնախմբու-
թիւնները կատարելու եւ, ինչպէս նշաննե-
րը ցոյց են տալիս, կղզու միայն այս, հա-
րաւային կողմին են մօտենում:

Երբ վերադարձաւ իւր բնակարանը, որո-
շեց աւելի ապահով լինելու համար՝ էլի փո-
քը ինչ ամրացնել իւր տունը. նախ եւ ա-
ռաջ մտածեց իւր ծառաշնչն պատից փոքը
ինչ հեռու խիտ անտառ տնկել, որի մէջ բոլո-
րովին ծածկուէր իւր տունը: Այս նպատակով
փոքը առ փոքը տնկեց մօտ երկու հազար մա-
նը ուռի ծառեր, որովհետեւ փորձով գիտէր
որ ուռենին թէ՝ լաւ է կպչում եւ թէ՝ շու-

տով աճում է: Այդ ճառերը կարգով չանկեց,
այլ գիտութեամբ խառն ի խուռը, որպէս
զի անտառակը մարդու ձեռքով շինած ծա-
ռատունկի չնմանի, այլ բնական երեւայ:

Յետոյ որոշեց որ գետնի տակից մի ճա-
նապարհ շինէ իւր բնակարանից մինչեւ սա-
րի միւս ծայրը, որ հարկաւոր ժամանակ,
եթէ մէկը յարձակուելու լինի իւր ամրոցի
վրայ, այս գետնափոր ճանապարհով փախ-
չի ազատուի:

Սա էլ դժուար ու երկար աշխատանք էր,
եւ պարզ բան է որ ստիպուած էր առ ժա-
մանակ յետաձգել նաւակի շինութիւնը:

Բոլոր փորած հողը ածեց իւր պարսպի
մօտ, այնպէս որ դառաւ մի հողէ պատ մօտ
մի սածէն հաստութեամբ եւ չորս արշին
բարձրութեամբ: Այս պատի մէջ տեղ տեղ
ծակեր բաց արաւ դուրս նայելու համար եւ
քանի մի սանդուղ շինեց ելնել իջնելու եւ
կարեւոր ժամանակ այդ պատից իւր ամրոցը
պաշտպանելու համար: Այսպէս յանկարծա-
կի յարձակումից ապահովելով իրան՝ հար-
կաւոր համարեց մի ճար գտնել, որ երկա-
րաւեւ պաշտպան ժամանակ սովից կամ
ծարաւից չմեռնի: Այս նպատակով որոշեց

որ իւր մօտ գոնէ մի լամա ունենայ միշտ,
իսկ սորա սննդեան համար պատրաստի մեծ
գէղ խոտ, յետոյ բաւականաչափ պանիք
շինէ եւ միշտ մեծ քանակութեամբ պտուղ-
ներ ու սուրբ ունենայ:

Առանց ջուր էլ չմնալու համար մի շատ
հրաշալի բան մոտածեց, այն է կամեցաւ իւր
բնակարանի մօտից վազող առուակը իւր բա-
կի մէջ բերել աղբիւր շինել, բայց որովհետեւ
դորա գլուխ բերելը խիստ շատ ժամանակ
էր պահանջում ստիպուեցաւ թող տալ:

Այսպէս քանի մի տարի անցաւ եւ ոչինչ
մի նշանաւոր գիպուած չպատահեցաւ այդ-
քան ժամանակուայ մէջ:

Մի գեղեցիկ ու մեղմ առաւօտ, երբ Ռօ-
բինզօնը պարապած էր նաւակի շինութեամբ,
յանկարծ փոքր ինչ հեռու իրանից սեւ մուխ
նկատեց, որ բարձրանում էր անտառակի մի-
ջից: Սկզբում երբ մուխը տեսաւ, երկիւղ
տիրեց նորան, յետոյ հետաքրքրութիւնը
շարժուեցաւ, ուղեց իմանալ թէ ի՞նչ բան
է այդ. ուստի շտապեց բարձրացաւ իւր
տան ետեւի սարի գագաթը, որ իմանայ այդ
մուխի պատճառը: Եւ զարհուրելով տեսաւ
ծովի տիին մօտ հինգ նաւակ, իսկ ափի

վրայ մօտ երեսուն վայրենի մարդ, որոնք
գազանի ձայներ հանելով ու ծամածուելով՝
պարում էին կրակի չորս կողմը:

Ռօբինզօնը այս տեսարանից քիչ էր մնում
որ գարձեալ խելքը կորցնէր երկիւղից. ու-
կայն այս անգամ սիրու առաւ եւ շտապեց
մտաւ իւր ամրոցը ու սկսաւ պատրաստուիլ
պաշտպանուելու համար. առնելով իւր բոլոր
զէնքերը՝ վճռեց մինչեւ յետին շունը պաշտ-
պանել իւր կեանքը: Այս մտքով եւ աղօթքով
զօրացաւ եւ այնչափ թեթեւացաւ նորա սիր-
ուը, որ արձակ համարձակ նորից բարձրացաւ
սարի գագաթը եւ սկսաւ այնտեղից դիտել
թշնամուն:

Բայց որքան բարկացաւ եւ զարհուրեցաւ,
երբ պարզ տեսաւ, որ վայրենիները նաւակնե-
րից գուրս էին քաշում իրանց նման երկու
թշուառներին եւ տանում էին կրակի մօտ:
Համոզուեցաւ, որ այս երկու գերիները ան-
գութ մարդակերների զոհի համար են նշա-
նակուած. վայրենիները նոցանից մէկին վայր
ձգեցին եւ երկու հոգի վրայ թափեցան
մորթելու նորան եւ իրանց գազանական
խնջոյքի համար կերակուր պատրաստելու:
Խոկ միւս գերին, որին գեռ հերթը չէր

հասել, ազատ կանգնած էր: Տեսնելով որ
բոլոր վայրենիները իւր ընկերով են պարա-
պած եւ իրան ամենեւին չեն նայում, այս
ողօրմելին փորձ փորձեց փախչելով ազա-
տուիլ եւ անհաւատալի արագութեամբ
սկսաւ վազել ուղիղ դէպի Ռօբինզօնի բնա-
կարանը: Ուրախութիւնը, յոյսն ու սարսափը
խառնուեցան Ռօբինզօնի սրտի մէջ. երեսի
գոյնը մէկ կրակի պէս կարմրեցաւ, մէկ
էլ մեռածի պէս դեղնեցաւ: Նա տեսաւ
որ այս ողօրմելին աւելի շուտ էր վազում
քան թէ նորա ետեւից վազող վայրենիները,
բայց այն էլ տեսաւ, որ թէ՝ հալածուողը
եւ թէ հալածողները ուղիղ դէպի իւր բնա-
կարանն էին վագում, ուստի պէտք է ան-
պատճառ գտնէին իւր ապաստանարանը:

Նոքա հասան մի փոքրիկ ծովածոցի, այն-
պէս որ գերին անշուշտ պէտք է լողալով
անցնէր միւս ափը. առանց երկար մոտա-
ծելու նա ջուրն ընկաւ եւ զարմանալի արա-
գութեամբ սկսաւ լողալ դէպի դիմացի ափը:

Երկու վայրենի միւսներից առաջ անցնե-
լով՝ նոյնպէս ջուրն ընկան նորա ետեւից,
մնացածները յետ դարձան իրանց խնջոյքը
շարունակելու: Ռօբինզօնը տեսաւ որ այն

երկու վայրենիները այստեղ էլ շատ հեռու
մնացին իրեանց գերուց, որը արգէն շատ
առաջ էր գնացել, մինչդեռ նոքա դեռ ճա-
նապարհի կէսն անգամ չէին անցել:

Այդ րոպէին Ռօբինզօնը մի անսակնունելի
քաջութիւն գգաց. սիրտն իրան ասում էր,
թէ շտապիր, օգնութիւն հասիր թշուառ
գերուն: Էլ երկար չմտածեց, վերցրեց իւր
տէգը, ցած վազեց սարից ու մի րոպէի մէջ
ընկաւ գերու եւ վայրենիների մէջ: Կանգ-
նիր, ձայնեց նա առաջինին աչաւոր ձայ-
նով, գուրս վազելով մայառների միջից:
Խեղճը շուռ եկաւ եւ տեսնելով Ռօբինզօնին
ոտից գլուխ գաղանի մորթու մէջ փաթա-
թուած՝ այնպէս վախեցաւ, որ չգիտէր
փախչի թէ վայր ընկնի գետին:
Ռօբինզօնը նշաններով հասկացրեց թէ
նորան պաշտպանելու է եկել եւ իսկոյն դար-
ձաւ դէպի թշնամիները: Բաւական մօտե-
նալով նոցանից մէկին՝ իւր ոյժերը հաւա-
քեց եւ այնպէս ուժով տէգով խփեց նորան,
որ իսկոյն գետին գլորուեցաւ: Միւս վայ-
րենին, որ գեռ յիսուն քայլ հեռու էր,
կանգնեցաւ, իւր նետը ուղղեց դէպի Ռօ-
բինզօնը եւ արձակեց: Նետը գիպաւ նորա

կրծքին, բայց բարեբաղդաբար այնպէս կամաց, որ Ոօբինզօնի հագած պինդ կաշուն գիպչելով՝ յետ գարձաւ ընկաւ գետնին առանց որպիսի եւ իցէ վնաս տալու նորան:

Ոօբինզօնը միջոց չտալով թշնամուն նետը երկրորդ անգամ արձակելու, վրայ վագեց նոյն իսկ վայրկենին, երբ նա մի քանի քայլ առաջ վազելով արդէն նորից պատրաստվումէր նետն արձակելու եւ մի հարուածով գլորեց գետին:

Խեղճ գերին գեռ անշարժ կանգնած էր նոյն տեղը եւ չգիտէր ազատուած էր թէ հերթն իրան էլ պէտք է հասնէր: Ոօբինզօնը կանչեց նորան իւր մօտ նա հնազանդեցաւ, բայց մի քանի քայլ առաջ եկաւ ու կանգնեցաւ, դարձեալ մի քայլ արաւ եւ նորից կանգնեցաւ, նայելով Ոօբինզօնին ահուգողով եւ միեւնոյն ժամանակ աղացելու կերպով: Ոօբինզօնը աշխատումէր բարեկամութեան եւ հովանաւորութեան նշաններ ցոյց տալ նորան եւ կանչեց նորից իւր մօտ: Վերջապէս խեղճը որոշեց մօտենալ իւր աղատարարին, բայց ամէն տասը քայլին չոգումէր, երկրպագութիւն էր անում, կա-

մենալով այդպիսով թէ՛ շնորհակալութիւնը եւ թէ հնազանդութիւնը յայտնել:

Ոօբինզօնը դիմակը վերցրեց եւ մարդասէր ու բարեկամական դէմք ցոյց տաւաւ նորան: Ազատուած վայրենին վերջապէս մօտեկաւ նորան, խոնարհեցաւ մինչեւ գետին եւ Ոօբինզօնի ոտը գրաւ իւր վզին, հասկացնելու համար թէ ցանկանումէ նորա գերին լինել: Ոօբինզօնը քազցրութեամբ վերկացրեց նորան, աշխատելով նշանացի հասկացնել թէ վախենալու ոչինչ չունի եւ թէ ամենեւին վնաս չէ հասցնելու նորան:

Սակայն վայրենիներից մէկին Ոօբինզօնը չէր սպանել, այլ միայն վիրաւորել էր եւ այն էլ կարծես թեթեւ կերպով, որովհետեւ նա փոքր առ փոքր սկսաւ ուշքի գալ խոտ քազեց, գրաւ իւր վէրքի վրայ որ արիւնը կտրի: Ոօբինզօնը ցոյց տուաւ այդ բանը վայրենի ստրուկին եւ սա իւր լեզուով ինչ որ պատասխանեց: Թէպէտ Ոօբինզօնը նորա խօսքերը ամենեւին չէր էլ հասկանում: բայց երկար տարիներ մարդու ձայն լսած չինելու պատճառով մեծ ցանկութեամբ լսումէր նորան:

Հնդիկը ցոյց տուաւ նորան կացինը եւ
մատնանիշ արաւ իրան, նշանացի հասկա-
ցնելով, թէ ինքը կարող է թշնամու հետ
հաշիւը վերջացնել: Ուօբինզօնը կացինը տո-
ւաւ վայրենուն իսկ ինքը երեսը շուռ տու-
եց: Հնդիկը վրայ ընկաւ վիրաւորուած
թշնամուն եւ մէկ հարուածով գլուխը կըտ-
րեց. յետոյ ուրախ ուրախ դարձաւ իւր
ազատարարի մօտ եւ տեսակ տեսակ օտա-
րոտի շարժմունքներով եւ ծամածութիւն-
ներով իրեւ յաղթանակ նորա ոտքի մօտ
դրեց կացինն ու սպանածի արիւնաթա-
թախ գլուխը:

Ուօբինզօնը նշաններով հասկացրեց, որ
սպանածների նետն ու աղեղը վերցնի եւ
գնայ իւր հետ, բայց վայրենին ընդ հակա-
ռակն նշաններով ցոյց տուաւ, որ նախ եւ
առաջ հարկաւոր էր սպանածների մարսին-
ները աւազի մէջ թաղել որպէս զի միւս
ընկերները չգտնէին նոցա: Ուօբինզօնը հա-
մաձայնութեան նշան տուաւ եւ վայրենին
այնպէս արագութեամբ սկսաւ աշխատել,
որ դեռ քառորդ ժամ չանցած առանց
որ եւ է գործիքի լոկ իւր ձեռքերով երկու
մարմինն էլ թաղեց աւազի մէջ: Յետոյ եր-

կուսը միասին դարձան Ուօբինզօնի բնակա-
րանը եւ բարձրացան սարի գագաթը:
Սարի գագաթին ծառի ետեւից գիտում
էր Ուօբինզօնը վայրենիների ծամածու-
թիւնները եւ կրակի շուրջ արած զգուեկի
պարերը, միեւնոյն ժամանակ սոսկում էր
մոտածելով, որ նոքա իրանց խնջոքը աւար-
տելուց յետոյ պիտի սկսէին որոնել փախած
գերուն ու իրանց ընկերներին եւ կարող
են գտնելիւր ապաստանարանը: Վայրենիների
աշխին չերեւելու համար՝ նա թփերի ետե-
ւից սողալով վայր իջաւ մինչեւ իւր պարա-
նէ սանդուղը եւ նշան արաւ իւր ազատած
վայրենուն էլ որ հետեւի իրան: Այսպիսով
երկուսն էլ վայր իջան:

Մեր վայրենին զարմացած մնաց, երբ տե-
սաւ իւր ազատողի բնակարանը. իւր կեան-
քում ամեննեւին չեր տեսել այդպիսի բան:
Ուօբինզօնը նշաններով հասկացրեց, որ ին-
քը երկիւզ է կրում թէ մի գուցէ իւր երկ-
րացիք սկսին որոնել իրան եւ հասկացրեց
թէ ինքը պատրաստ է մինչեւ վերջին շունչը
պաշտպանուելու: Վայրենին սպառնացող
կերպարանք առաւ, ձեռքին բռնած քարէ
կացինը քանի մի անգամ իւր գիսի կրացից

պտոյտ տուեց եւ սպառնալի ձեւերով գար-
ձաւ թշնամիների կողմը, որպէս թէ պատե-
րազմի էր հրաւիրում նոցա: Սորանով նա
ուզում էր հասկացնել իւր բարերարին թէ
բաւական քաջութիւն ունի: Ուօրինզօնը նետն
ու տէգը տուեց նորան եւ կանգնեցրեց պահ-
պանութիւն անելու մի անդքի մօտ, որ գի-
տութեամբ թողած էր ծառաշէն պատի մէջ՝
այդ պատից մինչեւ իւր տնկած անտառակը
գտնուած տարածութիւնը տեսնելու հա-
մար, իսկ ինքը բոլոր զէնքերը վրան առած՝
տեղաւորուեցաւ մի նոյնպիսի ծակի մօտ
ծառի միւս կողմը: Մօտ մի ժամ շարունակ
կանգնած էին այդ գրութեամբ, երբ յան-
կարծ լսեցին բազմաթիւ մարդկանց բարձր,
բայց գեռ բաւական հեռաւոր աղաղակներ:
Երկուսն էլ պատրաստուեցան պատերազմե-
լու եւ նշաններով սիրտ էին տալիս մի-
մեանց:

Մի քանի ըոպէից յետոյ ամէն բան հան-
դարտուեցաւ. յետոյ նորից նոյն աղաղակը
լսուեցաւ, բայց այս անգամ արդէն աւելի
մօտից, եւ նորից զարհութելի լուսութիւն
տիրեց: Մէկ անգամ էլ բաւական մօտից մի

կոպիտ ձայն լսուեցաւ եւ այնուհետեւ այլ
եւս չկրկնուեցան ձայները:

Ուօրինզօնն ու իւր ընկերը մինչեւ երե-
կոյ այնպէս զինուորուած կանգնած էին.
վերջապէս համոզուեցան, որ վայրենիները
ի զուր որոնելուց յետ թողել են իրանց
մտադրութիւնը եւ քաջուել են իրանց կըզ-
զիները: Մեր հերոսները զէնքերը վրաներից
վերցրին եւ Ուօրինզօնը իւր նկուզից մի փոքր
բան բերեց ընթրիքի համար:

Որովհետեւ այդ նշանաւոր օրը ուրբաթ-
էր, որոշեց իւր ազատած վայրենու անունը
Ուրբաթ դնել: Այժմ Ուօրինզօնը կարողա-
ցաւ ուշագրութեամբ նայել իւր ընկերոջը.
սա մի շնորքով երիտասարդ էր մօտ քսան
տարեկան հասակով: Նորա մարմինը սեւ էր
ու փայլուն, մազերը սեւ, բայց խափշիկնե-
րի մազերի պէս գանգուր չէր, այլ հարթ
ու երկայն. քիթը կարծ էր, բայց շատ տա-
փակ չէր, շրթունքները փոքր ու ատամնե-
րը ձիւնի նման սպիտակ: Երկու ականջնե-
րին անցկացրած ունէր տեսակ տեսակ ծո-
վային խեցիներ ու փետուրներ եւ այս զար-
դարանքներով երեւի թէ նա բաւական

Հպարտանումէր: Սակայն ոտից մինչեւ
գլուխ մերկ էր:

Ամէնից առաջ Ռօբինզոնը ուզեց նորա
մերկութիւնը ծածկել ուստի մորթից մի
տեսակ գոգնոց շինեց ու չուաներով ամ-
րացրեց նորա մարմնի շուրջը, յետոյ նշան-
ներով պատուիրեց նորան նստել իւր մօտ
եւ հաց ուտել: Ուրբաթը զանազան նշան-
ներով եւ ձեւերով յարգանք ու շնորհա-
կալութիւն ցոյց տալով՝ մօտեցաւ նորան,
ընկաւ գետնին երկրպագութիւն արաւ եւ
դարձեալ գրեց իւր վզին նորա ոտը: Ռօ-
բինզոնը աշխատումէր նորան հասկացնել որ
իւր հովանաւորութեան եւ պաշտպանու-
թեան տակ է առնում նորան, միայն այն
պայմանով, որ սա էլ անպայման հնազան-
դութիւն ու հպատակութիւն ցոյց տայ:

Ուրբաթը հասկացաւ իւր տիրոջ կամքը
եւ ի նշան հնազանդութեան ընկաւ նորա
ոտները, յետոյ ցոյց տալու համար թէ
շատ լաւ է հասկանում տիրոջ իրաւունքը
եւ իշխանութիւնը ստորագրեալի վրայ,
վերցրեց տէգը, տուաւ Ռօբինզոնին եւ
սուր ծայրը գրաւ իւր կրծքին, անշուշտ
հասկացնել ուզելով թէ տէրը իւր կեանքի

եւ մաշուան վրայ իշխանութիւն ունի: Իսկ
Ռօբինզոնը բարեկամաբար ձեռքը մեկնեց
նորան ի նշան իւր ողորմածութեան եւ պա-
տուիրեց նստել ու հաց ուտել: Ուրբաթը
հնազանդեցաւ բայց գետնին նստեց իւր
տիրոջ ոտների մօտ, որ նստած էր խոտից
շինած նստարանի վրայ:

Այսպիսով այժմ Ռօբինզոնը կատարեալ
իշխան էր՝ չնպաւրով որ ընդամէնը մէկ
հպատակ ունէր՝ Ուրբաթը, մի հատ էլ թու-
թակ եւ քանի Ֆի լամա: Սակայն աշխա-
տումէր, որքան պատիւր ու արժանաւո-
րութիւնը թոյլ էին տալիս բարեկամանալ
Ուրբաթի հետ:

Ընթրելուց յետոյ Ռօբինզոնը սկսաւ մի
լամա կթել ծառային սովորցնելու համար,
որ նախ եւ առաջ սկզբէ նորա մօտ անաս-
նապահի պաշտօն կատարէր: Ուրբաթը սկզ-
բում ամենեւին չեր հասկանում թէ՝ ի՞նչ
է անում իւր տէրը, որովհետեւ թէ՝ ի՞նքը
եւ թէ՝ իւր երկրացիք մտքով անգամ չէ-
ին անցկացրել, թէ անասունների կաթը
այդպէս համեղ եւ սննդարար կերակուր
կարող էր լինել: Նա իւր կեանքում կաթի
համ չէր աեսել եւ երբ որ Ռօբինզոնը տուեց

նորան համը տեսնելու սեծ զուարճութեամբ
խմեց:

Այդ օրուայ այնքան աշխատանքից ու
հոգսերից յետոյ՝ թէ տիրոջը եւ թէ ծառա-
յին հանգստութիւն էր հարկաւոր, ուստի
Ռօբինզոնը Ուրբաթին պատուիրեց որ գնայ
նկուղի մէջ պառկի, իսկ ինքը բոլոր սրտով
շնորհակալութիւն անելով Աստծուն այն
մեծ վտանգից իրան ազատելու եւ իրան
օգնական ու ընկեր շնորհելու համար՝ պառ-
կեցաւ իւր անկողնի մէջ:

IX.

Միւս օրը Ռօբինզոնի առաջին գործն այն ե-
ղաւ, որ Ուրբաթի հետ միասին գնայ այնտեղ,
ուր երեկ վայրենիները կատարեցին իրանց
գաղանական տօնալսմբութիւնը: Ճանապար-
հին նոքա հանգիպեցան այն տեղին, ուր
որ թագուած էին Ռօբինզոնի սպանած եր-
կու վայրենիները: Ուրբաթը ցոյց տուեց այդ
տեղը իւր տիրոջ եւ նշանացի պարզ հաս-
կացրեց, որ շատ ցանկանում էր այն մար-
մինները հանել եւ նոցանից կերակուր պատ-
րաստելի ր համար. բայց Ռօբինզոնը սպառ-
նալով նայեցաւ նորան, տէգը բարձրացրեց եւ

նշաններով հասկացրեց, որ եթէ երբ եւ
իցէ համարձակի մարդու միս ուտել' տեղ-
նուտեղը կը սպանէ նորան: Ուրբաթը հաս-
կացաւ նորա սպառնալիքը եւ յօժարու-
թեամբ հնազանդեցաւ իւր տիրոջ կամքին:
Թէպէտ եւ չէր հասկանում թէ ինչու էր
զրկում նորան այս բաւականութիւնից:

Հասան այնտեղ ուր երեկ վայրենիները
տօն էին կատարում: Ի՞նչ զարհուրելի տե-
սարան էր այնտեղ: Ամէն կողմ թափած
էին սկորներ եւ մսի կտորտանք. տեղ տեղ
էլ գետինը արիւնով էր ներկած: Ռօբին-
զոնը երեսը չուռ տուեց եւ պատուիրեց
Ուրբաթին բոլոր սկորներն ու մսի կտոր-
ները՝ ի միասին հաւաքել եւ հողի մէջ
թագիլ:

Մինչ Ուրբաթը կատարումէր այս պա-
տուէրը, ինքը Ռօբինզոնը սկսաւ ամէն կողմ
որոնել թէ արդեօք մոխրի տակ գոնէ մի փոք-
րիկ կայծ մնացած չէր լինի, բայց ՚ի զուր,
կրակը բոլորովին հանգել էր: Այս բանը շատ
վշտացրեց նորան, ուստի գլուխը կախած
կանգնած էր եւ տիրութեամբ նայումէր
կրակի մոխրին: Այդ միջոցին Ուրբաթը որ
վաղուց արդէն ապշած նայումէր նորան,

յանկարծ նշաններով ինչ որ սկսեց հասկացնել, իսկ յետոյ կացինն առաւ ձեռքն ու կայծակի արագութեամբ վազեց գնաց անտառը եւ Ռօբինզօնին տարակուսանքի մէջ թողեց:

Այս ինչ է նշանակում մտածումէր Ռօբինզօնը, նայելով Ուրբաթի ետեւից, չի նի՞ թէ ապերախտ գերիս ուզումէ թողնել ինձ եւ բացի դորանից դեռ կացինոէլ տանել: Չինի՞ թէ նա միտք ունի մատնել ինձ երկրացիներին եւ նոցա հետ միասին գալ ինձ տանիցս գուրս անել եւ բնտկարանիս տիրել:

Այդպիսի ապերախտութեան վրայ մտածելով այնպէս բարկացաւ, որ առաւ տէզը եւ ընկաւ Ուրբաթի ետեւից, որպէս զի հասնի եւ միտքը դրած մատնութեան առաջն առնէ: Դեռ մի քանի քայլ շարած՝ տեսաւ որ Ուրբաթը վազէվազ յետ է դառնում: Ռօբինզօնը ապշած կանգնեցաւ եւ տեսաւ, որ վայրենին երկու ձեռքով խոտած չոր խոտ բերեց, որի միջից սեւ ծուխ էր բարձրանամ: Նուտով սկսաւ բոց երեւալ խոտի մէջ: Ուրբաթը խոտը վայր թափեց գետնին, չոր ծառի ճիւղեր գարսեց վրան:

Եւ չուտով մի վառտւոր կրակ վառեց նոցանով: Այժմ միայն հասկացաւ Ռօբինզօնը Ուրբաթի վախչելու պատճառը եւ ուրբախութիւնից չգիտէր ինչ ասէր, վաթաթուեցաւ նորա վզին, համբուրեց ու սեղմեց նորան իւր կրծքին եւ նշանացի հազոր անգամ ներողութիւն խնդրեց իւր անիրաւ կասկածների համար:

Բայց կրակ ո՞րտեղից ստացաւ Ուրբաթը: Կացինը որ վերցրեց, ուզզակի գնաց անտառը, չոր կոճղից երկու մեծ կտոր վայտ կախեց եւ այնպէս արագ եւ ուժով քսեց միմեանց, որ չուտով վառուեցան: Յետոյ այդ այրուող վայտերը շտապով վաթաթեց բաւականաչափ չոր խոտի մէջ եւ ձեռքին վերցրած՝ որքան ոյժ ունէր ոկտաւ վագել: Այս արագ շարժողութիւնից խոտը վառուեցաւ:

Ռօբինզօնը երկար ժամանակ զմայլած նայումէր կրակի հրաշալի բոցին եւ չէր կշտանում: Վերջապէս մի խանձող առնելով՝ Ուրբաթի հետ միասին ճանապարհ ընկաւ գէպի իւր բնակարանը:

Տուն որ հասաւ, իսկոյն կրակ վառեց խոչանոցում: մի քանի գետնախնձոր դար-

սեց կրակի շուրջ եւ գնաց իւր լամաներից մի ձագ բռնելու: Քանի մի բռպէից յետ լամայի ձագի մի քառորդը արդէն շամփրի վրայ անց էր կացրած եւ Ուրբաթը կանգնած խորովում էր: Խակ ինքը Ռօբինզոնը դօշի մները կտրտեց, լաւ լոււաց եւ ածեց պտուկի մէջ: յետոյ մի քանի հատ գետնախնձոր իստակեց, երկու քարի մէջ մի բուռը սիմինդր վշրեց եւ այս բոլորը ածեց մախ վրայ նոյն պտուկի մէջ, վրան ջուր ածեց, աղ արեց եւ լիքը պտուկը դրաւ կրակի մօտ:

Ուրբաթը զմայլած նայում էր այս ամէն պատրաստութեան վրայ եւ չէր հասկանում թէ ի՞նչ բանի համար են դոքա:

Ռօբինզոնին հարկաւոր եղաւ մի բանի համար մտնել իւր քարայրը: այդ միջոցին ջուրը սկսաւ եռ գալ: Ուրբաթը հետաքրքրութեամբ մօտեցաւ պտուկին, նա չէր կարողանում հասկանալ թէ ինչու է շարժվում ջուրը: իսկ երբ ջուրը բոլորովին եռեկաւ եւ սկսաւ պտուկի ափերից ցած թափուիլ նա մի յիմար բան մտածեց: կարծեց թէ պտուկի մէջ մի որեւէ կենդանի է ընկել, որ եւ շարժում է ջուրը: Կամենալով այդ կենդանին բռնել, որ բոլոր ջուրը դուրս չթափի,

շտապով ձեռքը դրեց պտուկի մէջ, բայց նոյն բռպէին այնպէս զարհուրելի ձայնով գոռաց, որ բոլոր քարայրը շարժուեցաւ:

Ռօբինզոնը այս աղաղակը որ լսեց՝ շատ վախեցաւ: նա իսկոյն կարծեց թէ վայրենիները յարձակուել են իւր բնակարանի վրայ եւ Ուրբաթին բռնել են: Մէկ մտածեց իւր գետնափոր անցքից վազելով աղաղուելով բայց ամօթ համարեց իւր ընկերոջը վտանգի մէջ թողնելու ուստի, փոքր ինչ մտածելուց յետոյ, կացինը ձեռքին դուրս վազեց իւր այրից, միտքը գնելով թէ ինչ էլ որ լինի՝ այս անգամ եւս ազատէ Ուրբաթին թշնամու ձեռքից:

Բայց որչափ ապշեցաւ ու գարմացաւ երբ տեսաւ որ Ուրբաթը բոլորովին միայնակ էր եւ անխելքի պէս գոռալով ու ծամածուելով վազվզում էր բակի մէջ: Բաւական ժամանակ գեռ չկարողացաւ նորանից պատճառն իմանալ, վերջապէս բանը պարզուեցաւ եւ երեւաց որ Ուրբաթը ձեռքն այրել էր:

Նատ աշխատեցաւ Ռօբինզոնը, մինչեւ որ կարողացաւ հանգստացնել վայրենուն եւ ստիպեց դարձեալ շարունակել միս խորո-

իելը: Ուրբաթը որքան հնար էր ապուրով իի պտուկից հեռու կանգնեցաւ եւ նայում էր նորան զարհութելով. իսկ որովհետեւ իւր տիրոջը մի գերբնական հոգի կամ ուղղակի կախարդ էր համարում: ահուղողով ու մեծարանքով էր նայում նորա վրայ: Ուօքինզօնի այսպէս ահաւոր եւ զարհութելի երեւալու գլխաւոր պատճառն էր՝ մէկ երեսի սպիտակութիւնը, մէկ էլ երկար մօրուքը, որ գեռ ամենեւին չէր ածիել, որովհետեւ վայրենիների ծնօտին համարեած թէ ամենեւին մազ չի բուռնում:

Ապուրը, գետնախնձորն ու խորովածը վերջապէս պատրաստ էին: Գդալ չունենալու պատճառով Ուօքինզօնը մեծ պտուկից ապուրը երկու փոքրերի մէջ ածեց: Բայց Ուրբաթին ամենեւին չկարողացաւ ստիպել, որ իւր բաժինն ուտէ. Նորա կարծիքով այդ կերակուրը կախարդած էր, Ուօքինզօնին էլ սոսկալով էր նայում: երբ սա ուտումէր էր կամ աւելի լաւ ասենք, խմումէր ապուրը: Իսկ խորովածն ու գետնախնձորը մեծ ախորժակալ ու բաւականութեամբ կերաւ Ուրբաթը:

Ուօքինզօնի ներկայ դրութիւնը շատ աւելի լաւ էր առաջուանից: այժմ այլ եւս միայնակ չէր, այլ օգնական ընկեր ունէր: որի հետ թէպէտ եւ գեռ չէր կարողանում խօսել բայց որի լոկ ներկայութիւնը, իւր այդքան տարուայ միայնութիւնից յետոյ, միսիթարութիւն էր իւր համար. վերջապէս այժմ նորից կրակ ունէր եւ սորանով համով ու սննդարար կերակուր: Նորա գլխաւոր հոգուն ու մտածմունքն այն էր, որ վայրենիները կարող էին յետ դառնալ իրանց ընկերներին եւ գերուն որոնելու եւ այն ժամանակ իւր բնակարանը կարող էին գլունել, իսկ ինքն ու Ուրբաթը կարող էին զարհուրելի մարդակերներին գոհ դառնալ:

Վաղուց արգէն Ուօքինզօնը միտքը դրել էր իւր բնակարանը մի տեսակ փոքրիկ ամրոց դարձնել. բայց որովհետեւ մենակ էր, անհնարաւոր էր համարում այդ բանը կատարել: այժմ որ արգէն աշխատող ընկեր ունէր, որոշեց գլուխ բերել այդ գործը: Բարձրացաւ լերան գագաթը, որ աւելի լաւ քննէ տեղի զիրքը եւ տեսնէ թէ ինչ կերպով կարող է ամրացնել իւր տունը: Տեսաւ որ հարկաւոր է միայն իւր բնակարա-

նի շուրջը գտնուած ծառաշէն պարսպի չորս
կողմը լայն ու խոր փոս փորել ու փորած
հողից պատն էլ շինել. իսկ փոսի երկու
կողմերը ապահովութեան համար հարկաւոր
էր սրածայր ցիցեր ամրացնել եւ մօտիկ վա-
զող ջուրը նորա մէջ անցկացնել, այնպէս
որ միեւնոյն ժամանակ իւր բակի միջով
անցնէր եւ երկարատեւ պաշարման ժամա-
նակ ջրի պակասութիւն չզգացուէր իւր ամ-
րոցում:

Այս բոլոր մոտադրութիւնները Ուրբաթին
հասկացնելու համար շատ մեծ դժուարու-
թիւն էր կրում Ռօբինզոնը. սակայն մէկ
կերպով հասկացրեց եւ Ուրբաթը այդ իմա-
նալուն պէս՝ իսկոյն վաղեց ծովի ափը հո-
գը փորելու անհրաժեշտ գործիքներ գրա-
նելու, այն է մեծ խեցիներ եւ հարթ ու
սրածայր քարեր ժողովելու: Յետոյ երկուսն
էլ սկսեցին աշխատել:

Այս գործը թեթեւ չէր: Այնպիսի մի փոս
փորելու համար, որ իրանց փոքր ՚ի շատէ
օգուտ բերէր, հարկաւոր էր որ փոսը քիչ
քիչ երեք արշին խորութիւն եւ չորս արշին
լայնութիւն ունենար՝ ութսուն կամ հա-
րիւր քայլ երկայնութեամբ: Յցապարիսպ շի-

նելու համար մօտ չորս հարիւր ցից էր հար-
կաւոր, որոնց պէտք է կտրէր ու սրէր լոկ
իւր քարէ կացինով: Բացի գորանից այդ
փոսի մէջ ջուր անցկացնելու համար պէտք
էր մի ուրիշ, համարեա նոյնպիսի փոս փո-
րել եւ նոյնպէս կտրել ու հաւասարեցնել
այն բրակը, որ գտնվում էր ամրոցի ու
վտակի մէջ տեղը:

Այս բոլոր դժուարութիւնները ամենեւին
չվախեցրին Ռօբինզոնին: Ինքն ու Ուրբա-
թը ամենայն օր առաւտից մինչեւ երեկոյ
անընդհատ աշխատում էին եւ այն էլ սի-
րով եւ առանց ձանձրանալու, ուստի եւ
չնայելով որ վատ ու անյարմար գործիքնե-
րով էին աշխատում: բայց եւ այնպէս գոր-
ծը զարմանալի կերպով առաջ էին տանում:

Այս աշխատանքի ժամանակ Ռօբինզոնը
փոքր առ փոքր անգլիերէն խօսել սովորե-
ցրեց իւր օգնուկանին եւ սա այնպէս ազքա-
բաց էր, որ կարճ միջոցում բաւական լաւ
խօսել սովորեցաւ: Ռօբինզոնը այս ձեւով էր
սովորցնում Ուրբաթին: ցոյց էր տալիս այն
առարկան, որի մասին ուզում էր խօսել,
եւ յետոյ բարձր ձայնով պարզ հնչում էր
այդ առարկայի անունը: Եթէ պատահում

Եր որ խօսքը այնպիսի բաների մասին էր
լինում, որ չէր կարող ցոյց տալ աշակեր-
տին, խօսքերով ու նշաններով հասկացնում՝
էր նորան, այնպէս որ աշակերտը պարզ
ըմբռնումէր նորա ասածը: Այս եղանակով
մօտ կէս տարուայ մէջ Ուրբաթը այնչափ,
սովորեցաւ անգլիերէն խօսել, որ կարողա-
նումէր բառերը կոտրտելով իւր տիրոջ հետ
խօսակցել: Մինչեւ այդ ժամանակ նա լոկ հա-
մըր մարդու պէս էր ընկերութիւն անում
Ոօբինզօնին: Խոկ այժմ կարող էր նորա խօ-
սակիցը բարեկամը դառնալ: Այսպիսի ու-
րախութիւնից յետոյ շատ ստոր եւ չնչին
էր թվում Ոօբինզօնին այն զուարճութիւ-
նը, որով նա առաջ ականջ էր դնում իւր
թութակի անմիտ խօսքերին:

Օրէցօր երեւումէր որ Ուրբաթը մի բա-
րի ու հաւատարիմ ծառայ էր, որ ամե-
նաշնչին նենգութիւն չունէր եւ որ հոգւով
մարմնով կապուած էր իւր տիրոջ հետ: Այս
պատճառով էլ Ոօբինզօնի սէրը գէպի նա
օրէցօր աւելանումէր եւ ոչինչ երկիւղ չու-
նէր նորան քարայրում իւր մօտ քնեցնելու:
Չորս ամիս գեռ լրացած փոս փորելը
վերջացրին, այնպէս որ կարելի էր հան-

գիստ հոգւով վայրենիների յարձակմանը
սպասել որովհետեւ մինչեւ որ նոյանից մէ-
կը լողալով կ'անցնէր փոսի միւս կողմը եւ
մագլցելով կըթումէր ցցապատի վրայից իրանց
համար շատ հեշտ էր նետով կամ երկայն
տէգով խփել ու սպասել նորան:

Մի անգամ Ոօբինզօնն ու Ուրբաթը պա-
տահմամբ կանգնած էին ծովի ափին դըտ-
նուած բարձր բլուրի վրայ: այդ բլուրից ծովը
մինչեւ հեռու երեւումէր եւ Ուրբաթը ապ-
շած նայումէր այն կողմը, ուր սեւ ամպի
պէս երեւումէին քանի մի կղզիներ: Յան-
կարծ սկսաւ թռչկոտել ու ծամածուիլ:
Ոօբինզօնը հարցրեց թէ ինչ է եղել նորան.
նա ուրախ ուրախ հասկացրեց թէ այնտեղ
են կենում իւր հայրենակիցները, այնտեղ է
իւր հայրենիքը: Իւր բորբոքուած գէմքն ու
բոցափայլ աչքերը ցոյց էին տալիս, թէ որ-
քան միրումէր նա իւր հայրենիքը եւ թէ
ի՞նչպէս ցանկանումէր գնալ այնտեղ: Թէ-
պէտեւ այս զգացմունքը բոլորովին արժա-
նի էր գոլասանքի, սակայն Ոօբինզօնը մա-
խենումէր, թէ մի՛ գուցէ Ուրբաթը յանող
գէպք գտնեյով թռղնէ իրան եւ տուն վե-
րադառնայ, ուստի որոշեց հէնց խկոյն փոր-

ձել նորա հաւատարմութիւնը։ Հարցրեց նորան, թէ կարող է արդեօք որպիսի եւ իցէ մի նաւակ շինել, որով կարելի լինէր ծովի վրայ ճանապարհորդել։ Ուրբաթը պատասխանեց թէ կարող է շինել։ Եթէ կարող ես այդպիսի նաւակ շինել, ասաց Ոօրինզօնը, ուրեմն եւ կարող ես գնալ քո հայրենակիցների մօտ։ Ուրբաթը տիսուր տրտում գլուխը կախեց ու սկսաւ նայել գետնին։ Ի՞նչ է պատահել քեզ, ինչու այդպէս տիսուր ես, հարցրեց նորան Ոօրինզօնը։ Նատ դառն է ինձ համար, պատասխան տուաւ Ուրբաթը, որ իմ բարի տէրս բարկանումէ ինձ վրայ եւ ուզումէ գուրս անել ինձ։ Ասաց եւ գօտկից քարէ կացինը հանեց, տուաւ իւր տիրոջ, գլուխն էլ գէմ արաւ, ուզելով հակացնել, թէ աւելի լաւ է համարում սպանուիլ, քան հեռանալ նորանից եւ կսկծից լաց եղաւ։

Ոօրինզօնի սիրոը շարժուելով՝ գրկեց նորան ու ասաց. հանգիստ կաց, բարի Ուրբաթս, ես ինքս էլ չեմ ուզում բաժանուիլ քեղանից, որովհետեւ սրտանց սիրում եմ քեզ։ Ես միմիայն ցանկանում էի քեզ փոր-

ձել, թէ դու էլ այնքան սիրում ես ինձ, որչափ ես քեզ եմ սիրում։
Ոօրինզօնը երբ լսեց թէ Ուրբաթը կարող է նաւակ շինել, իսկոյն տարաւ նորան այնտեղ, ուր արդէն մի քանի տարի շարունակ պարապում էր նաւակի փայտը փորելով։ Յոյց տուեց նորան այդ կտրած ծառը, որի դեռ երրորդ մասն էլ չէր փորուած եւ պատմեց, թէ քանի տարի չարչարուել է նորա վրայ։

Ուրբաթը գլուխը շարժեց ու սկսաւ ծիծաղել . . . Ոօրինզօնը հարցրեց ծիծաղելու պատճառը եւ նա պատասխանեց թէ այդ ամէն աշխատանքը բոլորովին անօգուտ եւ 'ի զուր է եղել. քանի որ այդպիսի կտրած ծառի փայտից աւելի հեշտ եւ շուտ կարելի էր բաւական մեծ նաւակ շինել կրակի օգնութեամբ։ Այս բանը Ոօրինզօնի մոքովն անգամ երբէք չէր անցել, մանաւանդ որ մինչեւ Ուրբաթի լոյս ընկնելը կրակ էլ չունէր։ Նորա ուրախութեանը չափ չկար. վճռուեցաւ որ նոյն իսկ հետեւեալ առաւոտը նաւակի շինութիւնը սկսեն։

X.

Բայց բանը այնպէս հեշտ գլուխ գալու չէր: Միւս օրից սկսուեցան շարունակ անձրեւներ գալ, այնպիսի յորդահոս անձրեւներ որ սովորական են այնուեղ գիշերահաւասարի ժամանակ: Ոօքինզօնն արդէն փորձով գիտէր, որ այդ տարին երկու անգամ է պատահում: գարնան եւ աշնան ժամանակ, եւ երկու ամիս է շարունակվում: նա գիտէր որ այդ միջոցին տանից դուրս գալու հնար չկար, որովհետեւ անձրեւը առանց կտրուելու հեղեղի պէս էր գալիս: Բացի դորանից այս էլ նկատել էր, որ չափազանց վնասակար էր առողջութեան համար անձրեւին դուրս գնալ թրջուիլ մանաւանդ ոտների կողմից եւ մրսելը: Այսպէս ուրեմն ստիպուեցաւ կամայ ակամայ նաւակի շինութիւնը յետաձեկ եւ ուրիշ ընտանեկան գործերով պարապիլ:

Բայց ո՞չչափ ուրախութիւն էր Ոօքինզօնի համար, որ այժմ այս ձանձրալի եղանակին թէ կրակ ունէր եւ թէ խօսակից ընկեր: Առաջ Ոօքինզօնը այդ տխուր տըրտում օրերը ստիպուած էր համարեա մթու-

թեան մէջ ու պարապ սարապ անցկացնել այժմ իւր Ուրբաթի հետ միասին նստում էր կանթեղի կամ վառարանի մօտ, աշխատումէր, խօսակցում նորա հետ եւ այդպիսով այդ ձանձրալի օրերը անցնումէին աննկատելի կերպով:

Ուրբաթը սովորցրեց նորան այն ամէն մանր մունր բաները շինել, որ վայրենիները լաւ ճաշակով շինում են, Ոօքինզօնն էլ շատ բան սովորցրեց նորան, որոնց մասին վայրենիները ոչինչ հասկացողութիւն չունէին: Եւ այսպէս նորա երկուսն էլ սովորեցան եւ շինեցին շատ այնպիսի իրեր, որ նոցանից ոչ մինը առանց միւսի օգնութեան չէր կարող շինել: Այն ժամանակ երկուսն էլ հասկացան, թէ ո՞չչափ օգուտ է մարգուս միաբանութեամբ եւ բարեկամական սիրով ապրել իւր նմանների հետ:

Ուրբաթը ուրիշ շատ բաների հետ գիտէր նաև ծառի կեղեւից բարակ ու ընտիր փսիաթ հիւսել, որից հեշտ կարելի էր լաւ հագուստ պատրաստել: Ոօքինզօնը սովորեց նորանից այս արհեստը եւ երկուսը միասին այնքան փսիաթ պատրաստեցին, որքան պէտք էր երկուսի շորերի համար: Կարող էր երե-

ւակայել թէ որբան հանգստացաւ Ռօքին-
զօնը, երբ իւր մորթուց շինած կոշտ ու ծա-
նր շորերը հանեց եւ թեթեւ ու փափուկ
փսիաթի հագուստ հագաւ:

Բացի դորանից, Ուրբաթը գիտէր նաեւ
կօկոսի ընկուզի թելերից եւ մեր վուշի տե-
սակ ուրիշ բոյսերից թել մանել, այն էլ Ռօ-
քինզօնի չուաններից շատ աւելի լաւ:

Այս տնային պարապմունքների հետ Ռօքին-
զօնը աշխատում էր փոքր ի շատէ իւր փայ-
քենի ընկերակցի խաւար միտքը լուսաւորել
եւ փոքր ինչ հասկացողութիւն տալ նորան
ծշմարիտ Աստծու վրայ: Ուրբաթը խորին ու-
շագրութեամբ լսում էր նորան եւ քրիստո-
նէական ճշշմարտութիւնները փոքր առ փոքր
տպաւորուեցան նորա սրտի մէջ: Այնուհե-
տեւ Ռօքինզօնը աշխատում էր միշտ ալօթք
անել Ուրբաթի առաջ, որ ջերմեռանդու
թեամբ եւ մաքուր սրտով հետեւում էր նո-
րա օրինակին:

Վերջապէս անձրեւային եղանակը անցաւ.
Երկինքը նորից պարզուեցաւ, հողմերը դա-
գարեցան եւ անձրեւաբեր սեւ ամպերը ցրուե-
ցան: Նորից օդը պարզուեցաւ եւ մեր բա-
րեկամները գարնան անուշահոտ եւ առող-

ջարար օդը ծծեցին ուրախ ուրախ սկսե-
ցին շինել նաւակը, որ գեռ անձրեւային եղա-
նակից առաջ մոտագիր էին վերջացնել:

Ուրբաթը, որպէս վարպետ նաւաշինու-
թեան գործի մէջ, սկսաւ կրակով փորել
ծառի կոճղը: Գործը այնպէս արագ եւ յա-
ջող էր գնում: որ Ռօքինզօնը ակամայ կա-
մօք սկսաւ ծիծաղել իւր յիմարութեան վր-
րայ, թէ ինչպէս այդ բանը վազուց ինքը
չէր մտածել: Սակայն ինքն իրան արդարա-
ցրեց, մտածելով որ եթէ միտք արած էլ լինէր,
կրակ չունենալու պատճառով չէր կարող սյդ
հնարքը գործ դնել:

Այս կերպով այն նաւակը, որի վերայ ովլ
գիտէ թէ քանի տարի էլի պէտք է աշխա-
տէր Ռօքինզօնը, երկու ամսուան մէջ հա-
մարես բոլորովին պատրաստուեցաւ: Մնաց
առագաստն ու թիերը: Առագաստը Ուր-
բաթն սկսաւ շինել, իսկ թիերը՝ Ռօքինզօնը:
Առագաստը բարակ փսիաթից շինուեցաւ
եւ երկուսն էլ իրանյ գործերը համարեա
միասին վերջացրին: Այժմ մնայ միայն որ
նաւակը քաշէին ծովը:

Տարաբաղդաբար այն տեղը ուր մեր նա-
ւատէրերը իրանց նաւակը շինեցին բաւա-

կան հեռու էր ափից: Մեծ դժուարութիւնը
նաւը ջրին մօտեցնելն էր. հրելով եւ քաշե-
լով անհնար էր տեղափոխել, որոշետեւ շատ
ծանր էր. ուստի չգիտէին թէ ինչ անեն:

Ոօբինզօնը մոտածում էր որ իւրլծակը գոր-
ծածէ, ինչպէս որ միանգամ իւր քարայրի
մէջ գլորուած քարերը հրելով դուրս էր
տարել նորանով. բայց սորանով գործը բա-
ւական կ'ուշանար. պարզ երեւում էր որ
նոքա երկուսով մի ամսուայ մէջ էլ հա-
զիւ կարող էին իրանց նաւակը ծովին մօ-
տեցնել: Իր բաղդից Ոօբինզօնը մոտաբերեց
մի ուրիշ, նոյնպէս շատ հասարակ գործիք,
որով հիւսներն ու միւս վարպետները շատ
ծանր բաները մի տեղից միւսն են տեղա-
փոխում այդ գործիքը պտուտակն է որ
կազմվում է բաւական երկար գլանաձեւ
փայտերից, որոնք նոյն իսկ կլոր լինելու
պատճառով՝ հեշտութեամբ գլորվում են: Ոօ-
բինզօնը այդպիսի կլոր գերաններ դարսեց
իւր նաւակի տակը եւ երբ սկսաւ առաջ
շարժել՝ տեսաւ որ գործը յաջող է գնում:
Երկու օրից յետ նաւակն արդէն ջրի վրայ
էր եւ մեր նաւատէրերը անչափ ուրախա-

ցան, տեսնելով որ իրանց նաւակը, որտեղ
կամենան, կարող են տանել:

Այժմ մնաց միայն որ կերակրեղէնի պատ-
րաստութիւն տեսնեն եւ Աստուծով ճանա-
պարհ ընկնեն: Բայց չգիտէին թէ ուր
գնան: Ուրբաթը ցանկանում էր իւր բնա-
կած կղզին գնալ. Ոօբինզօնն ընդհակառա-
կը ուզում էր որ Ամերիկայի ցամաքը գնան,
ուր յոյս ունէր թէ Սպանիացի կամ ուրիշ
Եւրոպացի կը տեսնէ: Ուրբաթի հայրենիքը
քսան եւ հինգ վերատ հեռու էր Ոօբինզօնի
կղզուց, իսկ ցամաքը աւելի հեռու էր եւ
հետեւաբար այնկողմ նաւելը աւելի վտան-
գաւոր եւ անցուսալի էր: Բայի սորանից,
Ուրբաթը նաւարկութեան արուեստին ան-
տեղեակ էր եւ միմիայն իւր կղզու ճանա-
պարհը գիտէր, իսկ թէ ինչպէս եւ ո՞ր կող-
մով պէտք է նաւէր ցամաքը հասնելու հա-
մար՝ այդ ամենեւին չէր իմանում:

Վերջապէս Ոօբինզօնի կրթուած մարդոց
մօտ գնալու ցանկութիւնը յաղթեց Ուր-
բաթի առաջ բերած բոլոր արգելքներին եւ
գիմաղբութեանը: Որոշուեցաւ որ պատրաս-
տութիւն տեսնուի միւս օրը ճանապարհ
գնալու, այնպէս որ հէնց յաջող հողմ

փէելուն պէս՝ ճանապարհ ընկնեն դէպի այն կողմը, ուր Ուրբաթի գուշակելովը Ամերիկայի ցամաքը պէտք է լինէր:

Յաջողակ հողմը սկսաւ վշել: Նոյեմբերի 30-ին, առաւատեան ութ ժամին, Ոօրինգոնի՝ կղզին գալու իններորդ տարին նոքա հրաշալի եղանակով եւ անոյշ հովի ժամանակ հեռացան կղզու ափից: Բայց հաղիւթէ մի քանի սաժէն հեռացան ափից որ ծովի մէջ ապառաժ քարերի հանդիպեցան: Այս ապառաժը կամ ժայռերի շղթան ափի լեռներից սկսուելով ծուռ գծով ներս էր գնացած ծովի մէջ համարեա տասնեւչորս վերատ հեռու: Այդ ժայռերի մէջ անցնելը վտանգաւոր էր, ուստի մեր նաւորդները մտածեցին նաւը ուրիշ կողմ գարձնել:

Թէպէտ այդ քարերը կամ աւելի ճիշտ ժայռերը ծածկուած են լինում ջրի մէջ, բայց պարզ երեւում են ալեկոծութեան ժամանակ, երբ ալիքները փրփրում գոռում ու փշրփում են նոցա վրայ: Հաղիւթէ Ոօրինգոնն ու Ուրբաթը կարողացան ժայռերից անցնել, որ յանկարծ նոցա նաւակը այնպէս ուժով առաջ գնաց, որ կը կարծէիր թէ բազմաթիւ առագաստներ են բացած վրան եւ

ամենասաստիլ հողմը յանկարծ վչեց այդ առագաստների վրայ: Մեր ճանապարհորդները շատ վախեցան եւ շուտով առագաստը ցածրողին, կարծելով թէ նաւի արագընթացութեան պատճառը սաստիկ հողմն է: Սակայն այս զգուշութիւնը ոչինչ չօգնեց նոցա եւ նաւակը առանց առագաստի էլ միշտ նոյն արագութեամբ էր լողում: Այն ժամանակ նոքա սարասկելով հասկացան որ ընկել էին հոսանքի, կամ աւելի լաւ է սել, ծովային գետի մէջ:

Ծովի յատակը երկրի մակերեւոյթի պէս խորտուբորտ է. նորա վրայ էլ նոյնպէս կան լեռներ, բլուրներ ու հովիտներ. Զուրը առհասարակ այսպիսի հովիտներն է վազում եւ հոսանք կազմելով՝ դառնում է մի ահագին գետ, որի մէջ ընկնելը շատ երկիւղալի է բոլոր նաւերի եւ առաւելապէս փոքրիկ նաւերի համար, որովհետեւ չեն կարողանում այնտեղից դուրս գալ եւ շատ յաճախ Աստուած գիտէ թէ ուր է տանում նոցա հոսանքը:

Ոօրինգոնն ու Ուրբաթը շատ աշխատեցան որ թիով կարողանան հոսանքից դուրս գալ. բայց ի զուր: Հոսանքի անյաղթելի

ոյժը կայծակի արագութեամբ փախցրեց նոցա եւ այնպէս հեռու տարաւ, որ նոքա համարեա բոլորովին աչքից կորցրին իրանց կղզին: Այնպէս էր թվում թէ նոցա վերջը մօտեցել էր, որովհետեւ այնքան առաջ էին գնացել, որ այլ եւս իրանց կղզու ամենաբարձր լեառների գագաթներն անգամ գրեթէ չէին տեսնում, այնպէս որ եթէ մինչեւ անգամ հոսանքը վերջապէս դադարէր՝ առանց կողմնացուցի չէին կարող իրանց կղզու ճանապարհը գտնել, որպէս զի կարող լինէին յետ դառնալ: (*)

Ուրբաթը յետին յուսահատութեան մէջ ընկաւ այլ եւս չկարողանալով աշխատել՝ թիերը հաւաքեց. սիրտը կոտրած նայեցաւ

(*) Կողմնացոյնը մի պողպատէ սլաք է, որ շփուածէ բանիս ասուած քարի հետ. Այս շփումից մագնիսական սլաքը այն յատկութիւնն է ստանում, որ միշտ հիւսիսային կողմն է ցոյց տալիս: Ծովագնացները, երբ իրանց չորս կողմը երկնքից ու ջրից աւելի ոչինչ չեն տեսնում, այդ սլաքով են ճանապարհ գտնում իրանց համար: Առանց այդ գործիքի նոքա կը մոլորուէին, որովհետեւ չէին իմանայ թէ ո՞րն է արեւելքը, ո՞րն է արեւմուտքը, հիւսիսն ու հարաւը:

իւր տիրոջը եւ հարցրեց թէ աւելի լաւ չէ որ ծովին ընկնենք խեղդուինք ու այդպիսով ազատուենք սովամնահից, որ սպառնումէ մեզ: Ոօքինզօնը աշխատումէրքաջալերել նորան, յետոյ փոքր ինչ յանդիմանեց, որ այդպէս շուտով յոյսը կտրել է Աստծուց եւ չէ հաւատում նորա ողորմութեանը: Ուրբաթը այդ խօսքերից ոգեւորուած՝ նորից թին ձեռքն առաւ:

Իսկ հոսանքը շարունակ առափ էր տանում նաւակը, այնպէս որ իրանց կղզու լեառների գագաթները հազիւ թէ երեւում էին: Վերջապէս կղզու ամենաբարձր լերան գագաթն էր միայն երեւում. սա էր նոցա աղատութեան վերջին յոյսը:

Ինքը Ոօքինզօնը սկսել էր արգէն բոլորովին յուսահատուիլ եւ շատ յոգնելուց էլ չէր կարողանում թիւավարել: Յանկարծ տեսաւ որ իրանց նաւակը էլ այնպէս արագ չէ լողում. նայեցաւ ջրին, տեսաւ որ առաջուայ պէս պղտոր չէր, յետոյ համոզուեցաւ որ հէնց այդ տեղ հոսանքը երկու ճիւղ է բաժանվում, որոնցից մէկը արագ փառում էր դէպի հիւսիս, իսկ միւսը, որի

մէջ գտնվում էր այժմ նաւակը, յետ էր ծռվում դէպի հարաւ:

Այս գիւտը անպատմելի ուրախութիւն պատճառեց Ռօբինզօնին, որեւիսկոյն հաղորդեց Ուրբաթին եւ երկուսը միասին շտապով թիերը ձեռքերն առին: Ազատուելու անհկալ յօյսից միրտ առած՝ նոքա սկսեցին բոլոր ուժով հոսանքի հակառակ թիավարել եւ ապշած մնացին, երբ տեսան որ իրանց ջանքերը զուր չանցան: Տեսնելով որ հողմն էլ յաջող էր փչում, Ռօբինզօնը իսկոյն առագաստը բարձրացրեց եւ շուտով առագաստի ու թիերի օգնութեամբ դուրս եկան կատաղի հոսանքի միջից եւ ընկան ծովի հարթ ու խաղաղ մակերեւոյթի վրայ:

Ուրբաթը ուրախութիւնից լաց եղաւ, տեղիցը վեր թռաւ եւ ուզեց իւր տիրոջը փաթաթուիլ, սակայն Ռօբինզօնը խնդրեց որ չափաւորէ իւր ուրախութիւնը, որով հետեւ դեռ շատ աշխատանքի կարօտ էին որ բոլորովին ազատուէին վտանգից: Հոսանքը այնչափ հեռու էր տարել նոցա, որ իրանց կղզին սեւ կետի նման էր երեւում:

Անդադար թիավարում էին, յաջողակ քամին էլ քշում տանում էր նոցա իրանց

կղզու արեւելեան կողմը. այնպէս որ շուտով նորից սկսան տեսնել իրանց ծանօթիւների գագաթները: Բայց յանկարծ նաւակը սաստիկ ցնցուեցաւ եւ երկուսն էլ վայր ընկան նորա յատակի վրայ: Նոյն վայրկենին նաւը կանգնեցաւ եւ ալիքները չորս կողմից սկսան մէջը թափուիլ....Մեր նաւագնացներին այնպէս թուեցաւ թէ նաւը քարի դէմ է ընկել:

Ռօբինզօնը թիով չափեց ծովի խորութիւնը եւ տեսաւ որ կէս կանգունից աւելի չէ. ուստի իսկոյն թռաւ ծովի մէջ, Ուրբաթն էլ հետեւեցաւ նորան եւ երկուսն էլ ուրախութեամբ տեսան, որ իրանց նաւակը ոչ թէ քարի, այլ ծանծաղի էր հանդիպել:

Մեր ծովագնացները սկսեցին բոլոր ուժով նաւակը այդ ծանծաղոտ տեղից առաջ մղել: Շատ աշխատելուց յետոյ նաւակը դրածեալ առաջուայ պէս սկսաւ սահել ծովի վրայ: Միջի ջուրը ձեռքով ու թիերով դատարկելուց յետոյ՝ որոշեցին այնուհետեւ աւելի զգոյշ լինել եւ առանց առագաստի թիավարել, որ կարողանան նաւակը աւելի ազատ եւ յարմար կերպով ուղղել ո՞ր կողմը կա-

մենան։ Եւ այսպէս սկսեցին աւազուտ տեղի երկայնութեամբ նաւել, յուսալով որ շուտով ծանծաղը կը վերջանայ, բայց խեղճերը չորս ժամ գնացին մինչեւ որ իրանց յոյսը կատարուեցաւ։ Ոօքինզօնը յիշեց որ ինը տարի առաջ նոյն տեղն էր պատահել իրան նաւաքեկութիւնը եւ հետեւապէս նոյն աւազի մէջն էր խրուել այն ժամանակ մեծ նաւը։

Արեւն արդէն մայր էր մտնում։ Երբ մեր ծովագնացները կզզուն մօտեցան եւ երկուսն էլ թէպէտ եւ խիստ յօդնած, բայց վտ անգից յաջողութեամբ ազատուելնուն համար՝ ուրախ ցամաքը գուրս եկան։

Ամբողջ օրը նոքա ոչինչ չէին կերել, այս պատճառով որոշեցին տեղն ու տեղը ծովի ափին նստել եւ իրանց քաղցը յագեցնել հետները առած պաշարով։ Յետոյ տարան իրանց նաւակը մի փոքրիկ ծոցի^{*)} մէջ կապեցին եւ նաւակի մէջ ունեցած բաները հաւաքելով՝ գնացին տուն։

(*) Ծոց կոչ վում է ծովի մի փոքրիկ խորշը, որ մտնում է ցամաքի մէջ։

— Ասա՛, տեսնեմ։ Ուրբա՛թ, հարցրեց նորան միւս օրը Ոօքինզօնը նախաճաշի ժամանակը կը համաձայնէի՞ր դարձեալ երեկուայ նման ծովի վրայ ճանապարհորդել։

— Աստուած մի՛ արասցէ։

— Ուրեմն միտքդ դրել ես բոլոր կեանքդինձ հետ անցկացնել այս կղզու վրայ։

— Ուրախութեամբ . . . միայն թէ կը ցանկայի, որ հայրս էլ այստեղ լինէր . . .

— Ուրեմն հա՞յր էլ ունիս։

— Ունիմ։ Եթէ միայն կենդանի է մնացել։

Այս խօսքերի վրայ երկու խոշոր կաթիլ արտասուք թափուեցան Ուրբաթի այտերից։ Ոօքինզօնն էլ մտաքերեց իւր ծնողներին եւ նորա աչքերին էլ արտասուքը երեւեցաւ։ Մի քանի րոպէ երկուսն էլ լուցին։

— Մի լաց լինիր, Ուրբաթ, ասաց Ոօքինզօնը, հայրդ դեռ կենդանի կը լինի եւ եթէ Աստուած կամենայ՝ մենք շուտով կերթանք եւ նորան այստեղ կը բերենք։

Ուրբաթը որ այս խօսքերը լսեդ՝ ուրախութիւնից խելքը կորցրեց, վեր թռաւտ տեղից եւ զանազան շարժմունքներով ու աղաղակներով փաթաթուեցաւ Ոօքինզօնի ծնկներին եւ լացն ու փողձկոցը յթողին որ ձայն

հանէ: Երբ փոքր ինչ հանդարտեցաւ, Ոօ-
բինզօնը հարցրեց նորան թէ արդեօք լաւ
գիտէ իւր հսյրենիքի ճանապարհը, որ եթէ
պատահի գնան՝ նոյն ձախորդութիւններին
չհանդիպին, ինչպէս եղաւ նախընթաց օրը:
Ուրբաթը հաւատացրեց Ոօբինզօնին թէ այն-
պէս լաւ գիտէ այն ճանապարհը, որ պատ-
րաստէ գիշերն էլ վստահ կերպով գնալ այն-
տեղ, որովհետեւ խիստ շատ անգամ եկել
է Ոօբինզօնի կղզին իւր կղզեցոց հետ ի-
րանց գաղանական տօնախմբութիւնը կատա-
րելու համար:

Պարտիզի համար աշխատելու ժամանակն
եկաւ: Երկուտը միասին սկսեցին գետինը փո-
րել իսկ պարապ ժամանակները զանազան
տեսակ օգտակար ու անհրաժեշտ գործիք-
ներ էին պատրաստում: Ոօբինզօնը վերջա-
պէս կարողացաւ մի բաւական շնորհքով տրը-
մուխ շինել, չնայելով որ առամներ ամրա-
ցնելու ծակերը ստիպուեցաւ սուր քարով
փորել: Այդ միջոցին Ուրբաթն էլքարէ դա-
նակով երկու բահ շինեց կարծր փայտից,
որ համարեա երկաթի պէս ամուր էր:

Ոօբինզօնը որ այժմ ամէն անհրաժեշտ
բաներն ունէր, սկսաւ իւր տան կեանքին

յարմարութիւնների վրայ մտածել: Նախ եւ
առաջ պարտիզից սկսեց ճանապարհներբաց-
արաւ մէջը, հովանոց շինեց, մի մասը յատ-
կացրեց մրգաբեր ծառերի համար, միւ-
սը՝ ծաղիկների համար, երրորդը՝ բանջարե-
ղէնների ու պարտիզի բոյսերի համար: Տըն-
կեց նա եւ լիմոնի բազմաթիւ մանր ծառեր:
Ուրբաթը շատ վարպետ ձկնորս եւ որսորդ
էր, այնպէս որ նոքա միշտ մեծ քանակու-
թեամբ ձուկ եւ որսի մսեր ունէին:

Վերջապէս պարտիզի աշխատանքը վերջա-
ցաւ եւ օր նշանակեցին որ գնան Ուրբաթի
հօր մօտ: Բայց ինչքան աւելի մօտենում էր
այդ նշանակուած օրը, այնքան աւելի միտք-
էր անում Ոօբինզօնը, թէ մի գուցէ Ուրբա-
թի հայրենակիցները թշնամու պէս վարուին
իւր հետ, այսինքն ուտեն իրան: Նա իւր
երկիւղը յայտնեց Ուրբաթին, բայց սա եր-
գումնվ հաւատացրեց նորան թէ ամենեւին
վախենալու բան չկայ, թէ ինքը շատ լաւ
ճանաչում է իւր հայրենակիցներին եւ թէ
նոքա բացի թշնամուց՝ ոչոքի ամենափոքր
վնաս անգամ չեն տալիս: Ոօբինզօնը հաւա-
տաց իւր բարեկամի խօսքերին ու ազնուու-
թեամբ, բոլոր ունեցած երկիւղը մէկ կողմ

Ճգեց եւ որոշեց Աստուծոյ օդնութեամբ միւս
օրն եւ եթ ճանապարհ ընկնել:

Այս նպատակով նոքա նորից ջուրը Ճգեց
իրանց նաւակը եւ գետնի մէջ ցցած
Հաստ փայտից կապեցին: Երեկոյեան գետնա-
խնձոր խորովեցին եւ ուրիշ ուտելիքի պա-
շարներ պատրաստեցին, այնքան որ ճանա-
պարհին մօտ ուժ օր հերիք գար:

IX

Ոօբինզօնը եւ Ուրբաթը ճանապարհի ա-
մէն պատրաստութիւնները վերջացնելուց յե-
տայ՝ պառկեցան քնելու: Դեռ նոր էր քուն-
ները տարել, երբ մի սաստիկ փոթորիկ զարթե-
ցրեց նոցա: Յանկարծ մի թնդիւն լսուեցաւ,
որ հեռուից եկող թնդանօթի ձայնի նման էր:
Ուրբաթը կարծեց թէ որոտում է. Ոօբին-
զօնը, ընդհակառակը, հաստատ համոզուե-
ցաւ որ թնդանօթի ձայն էր: Նորա սիրուը
ուրախութիւնից եւ միեւնոյն ժամանակ սար-
սափից գողում էր: Խսկոյն վեր թուաւ ան-
կողնից եւ վազեց խոհանոցը, Ուրբաթին էլ
պատուիրեց որ հետը գնայ: Այնտեղից մէկ
վառած փայտ վերցրեց եւ չուանէ՛սանդու-

ղից բարձրացաւ. Ուրբաթն էլ ետեւից բար-
ձրացաւ, առանց հասկանալու իւր տիրոջ
միտքը: Ոօբինզօնը սարի գագաթին հասնելով՝
սկսաւ շուտով մեծ կրակ վառել որ նշան
տայ թշուառ ծովագնացներին թէ կարող
են այդտեղ ապահով օդնութիւն եւ ապաս-
տանարան գտնել: Նա ենթագրեց, թէ կղ-
զու մօտ որեւիցէ մի տեղ նաւ կայ վտան-
գի ու ալեկոծութեան մէջ եւ թէ իրանց
լած ձայնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նաւից ար-
ձակած թնդանօթի ձայն, որ նորա վտանգա-
ւոր գրութեանը նշան էր: Բայց գեռ նոր էր
կրակը կպել, երբ մի յորդ անձրեւ խսկոյն
բոլոր կրակը հանգցրեց: Ոօբինզօնը եւ Ուր-
բաթը նորից ստիպուեցան իրանց քարայ-
րը քաշուիլ:

Մըրիկը կատաղեցաւ. անձրեւը հեղեղի
պէս էր գալիս, զարհուրելի կերպով որո-
տում էր, հարուածը հարուածի ետեւից էր
գալիս եւ թէպէտ Ոօբինզօնը կարծում էր,
թէ երբեմն երբեմն գարձեալ լսվում էին
թնդանօթի ձայներ, սակայն վերջապէս ինքն
էլ տարակուեցաւ՝ թէ գուցէ այն ձայները
ամպի գոռոց լինին: Բայց ողջ գիշերը
չկարողացաւ քնել, անդադար երեւակայելով՝

թէ իւր կղզու մօտ մի նաւ կայ, թէ այդ նաւը
գուցէ յաջողութեամբ ազատուի սպառնացող
վտանգից եւ իրան ու իւր հաւատարիմ նւրբա-
թին միւս օքն եւ եթ Եւրոպա կը տանի: Տան
անգամ վերկացաւ, կրակը նորից վառեց,
բայց յորդ անձրեւը ամէն անգամ հանգ-
ցրեց: Բայցի խեղճ ծովագնացների համար
ազօթելուց ուրիշ ոչինչ չէր մնում նորան
անելու, ուստի եւ սրտանց ազօթում էր:

Առաւօտը միայն դադարեցաւ փոթորիկը
եւ Ռօքինզօնը Ուրբաթի հետ միասին հետը
երկիւղը եւ յոյսը սրտումը՝ շտապեց ծովի
ափը տեսնելու թէ արդեօք իւր ենթադրու-
թիւնները արդարացի էին թէ ոչ: Բայց ա-
ռաջին անգամ ինչոր տեստն՝ չափազանց
վշտացրեց նոցա երկուսին էլ, մանաւանդ Ուր-
բաթին. փոթորիկն ու ալեկոծութիւնը իրանց
նաւակի պարանը կտրել ծովի մէջ էր տարել:
Յաւալի էր նայել Ուրբաթի տիսուր դէմքի
վրայ, որ հօրը մօտ գնալու քաղցր յոյսը յան-
կարծ կորցրեց: Երկար ժամանակ անշարժ
կանգնած մնաց մի տեղ, աչքերը գետնին
խոնարհած, լուռ ու մունջ. յետոյ արտա-
սուքները սկսան թափուիլ եւ նա ձեռքերը

կոտրտում էր, կուրծքը ծեծում եւ մաղերը
վետում էր:

Ռօքինզօնը, որ իւր սեպհական նեղութիւն-
ներից ու տանջանքներից սովորել էր ու րիշնե-
րի թշշառութեանը կարեկից լինել, բոլորովին
հասկացաւ նորա վիշտը եւ սկսաւ բարեկամա-
բար միսիթարել նորան, միեւնոյն ժամանակ
աչքը շարունակ ծովի վրայ ունէր, որ
կարելի է մի տեղ մի նաւ տեսնէ, բայց ի
դուր, ծովի երեսին ոչինչ չտեսաւ. ուստի
վշտացած սրտով տուն դարձաւ:

Սակայն տանն էլ մի բոպէ հանգիստ չկարո-
ղացաւ մնալ. նորա աչքին շարունակ երեւում
էր մի նաւ՝ իւր կղզու մօտ խարիսխ ձգած:
Նիրուը չհամբերեց, նորից բարձրացաւ սարը,
որ այնտեղից գիտէ կղզու արեւելեան ափը,
բայց դարձեալ ոչինչ չտեսաւ ծովի վրայ:
Մտածեց բարձրանալ մի ուրիշ աւելի բարձր
սարի գագաթը, որ արեւմտեան ափն էլ
տէսնէ.... բարձրացաւ նորա ծայրին եւ
նայեցաւ ծովին՝ յանկարծ բարձր եւ ուզախ
ձայնով սկսաւ կանչել Ուրբաթին. նորա աչ-
քին երեւեցաւ մի նաւ եւ թէպէտ ափից բա-
ւական հեռու էր, բայց կասկած չկար, որ
տեսածը նաւ էր եւ այն էլ շատ մեծ նաւ:

Ուրախութիւնից շունչը հատնելով վաղէ վազ գնաց իւր բնակարանը, վերցրեց իւր զէնքերը, որովհետեւ առանց զէնքի առհասարակ տեղ չէր գնում: այս բոլորի վրայ զարմացած Ուրբաթին գոչեց՝ «շուտ արա, նոքա այնտեղ են», նորից բարձրացաւ իւր սանդուղը եւ կայծակի արագութեամբ վաղեց ափը:

Ուրբաթը իւր տիրոջ սովորականից դուրս շտապելուց, նորա խոռովութիւնից եւ կըցկուր խօսքերից կարծելով թէ վայրենիները նորից եկել են իրանց կղզին, ինքն էլ վերցրեց իւր զէնքերը եւ Ռօբինզօնի ետեւից ընկաւ:

Մինչեւ ափի այնտեղը, որի գէմուգէմ ինչպէս երեւում էր խարխսին էր ձգել նաւը, երեք վերստ ճանապարհ ունէին վաղելու. երբ այնտեղ հասան, այն ժամանակ միայն Ուրբաթն իմացաւ թէ բանն ինչումն է: Ռօբինզօնը ցոյց տուեց նորան նաւը եւ Ուրբաթը զարմացաւ բերանը բաց մնաց, որովհետեւ չնայելով որ նաւը բաւական հեռու էր, բայց շատ լաւ տեսնում էր որ իւր տեսած ամէն նաւակներից շատ մէծ էր: Ուրախութիւնից Ռօբինզօնի խելքը գլախն չէր. երբեմն թոշկոտում էր երեխայի պէս,

երբեմն լաց էր լինում: երբեմն էլ գրկում էր Ուրբաթին: Նաւի մէջ եղած մարդոց հասկացնելու համար թէ կզզու վրայ մարդ կայ՝ փորձեց իւր աղաղակը յաել տալ նոցա, բայց իսկոյն տեսաւ որ այդ աշխատանքը զուր էր, չնայելով մինչեւ անգամ որ քամու ուղղութիւնն էլ արդէն փոխուած էր եւ այժմ ափից գէպի նաւն էր փչում: Նա պատուիրեց Ուրբաթին շուտով կրակ անել որ նաւի միջից կարողանային տեսնել:

Միքանի բոսպէից յետ կրակը արդէն վառած էր եւ ծուխն ու բոցը մեծ քանակութեամբ բարձրանում էր միջից: Ռօբինզօնը աչքը նաւից չէր հեռացնում: սպասելով թէ որտեղ որ է՝ մակոյկը կ'իջեցնեն ծովը եւ կը գան իւր կզզին: Ամայն այնտեղ այդ բանի վրայ մտածող անգամ չկար:

Աերջապէս տեսնելով որ կրակը համարեամի ամբողջ ժամ վառաւեցաւ, բայց նաւի մէջինները կենդանութեան նշան չէին ցոյց տալի, Ուրբաթը չնայելով հեռաւորութեանը կամեցաւ լողալով գնալ նաւը եւ մէջը եղող մարդոց կանչել: Ռօբինզօնը սրտանց գրկեց նորան այդ բանի համար եւ Աստուծոյ անունով երդուեցրեց որ իւր կեանքին հոգս

տանի: Ուրբաթը հանեց վրայից իւր փսխաթի շորերը, կանաչ ճիւղ կտրեց ինշան խաղղութեան եւ բերանը դրեց, ընկաւ ծովը եւ Ոօքինզօնի ջեռմեռանդ աղօթքների ուղեկցութեամբ՝ սկսաւ լող տալ գէպի նաւը:

Յաջողութեամբ հասաւ նաւին եւ մի չուտանէ սագուզով, որ կախ էր ընկած նորա մի կողմից՝ բարձրացաւ նաւի մէջ կանաչ ճիւղը ձեռքին: Երբ այնքան բարձրացաւ որ տախտակամածն էլ կարող էր տեսնել՝ չափազանց վախեցաւ, տեսնելով նորա մէջ իրան բոլորովին անձանօթ մի կենդանի: Այս կենդանին սեւ էր ու բրդոտ, որ տեսաւ թէ չէ Ուրբաթին՝ սկսաւ հաչել. Ուրբաթը այսպիսի ձայն երեք լսած չինելու պատճառով վախեցաւ: Բայց իսկոյն լռեց կենդանին եւ ըսկսաւ այնպիսի բարեկամական շարժմունքներ անել որ Ուրբաթը էլ չվախեցաւ: Կենդանին հեղութեամբ մօտեցաւ նորա ոտքերին, սկրսաւ պոչը խաղացնել եւ ցաւալի կերպով ոռնալ, այնպէս որ Ուրբաթը պարզ հասկացաւ, թէ իւր օգնութիւնն է ինդրում: Ուստի գգուեց նորան, եւ կենդանին ուրախ ու զուարթ էր թվում:

Ուրբաթը մանէր գալիս տախտակամածի վրայ ու բարձր ձայնով կանչում էր նաւի տիրովը, բայց ո՛չ ոք չէր երեւում: Նոյն իսկ րոպէին, երբ այս եւ այն կողմն էր նայում եւ իւր չտեսած բաների վրայ զարմանում: Մէջքը գարձնելով այն սանդուղին, որ նաւի խորն էր տանում, յանկարծ այնպիսի սաստիկ հարուած ստացաւ մէջքին, որ փռուեցաւ գետին: Այս ու դողով վերթուաւ տեղից, յետ նայեցաւ եւ տեսնելով մի բաւական մեծ կենդանի երկար ու կեռ եղջիւրներով՝ այնպէս զարհուրեցաւ, որ քիչ մնաց լեզուն փորն ընկնէր: Ուրբաթը մի բարձր աղաղակ արձակեց եւ ընկաւ ծովը:

Առաջին սեւ բրդոտ կենդանին, որի հետ բարեկամացել էր, մի շուն էր: Այս շունը նորա օրինակին հետեւեցաւ, այն է ինքն էլ ընկաւ ծովը եւ սկսաւ լողալով նորա ետեւից գնալ: Ուրբաթը երբորիր ետեւից շան լողալու ձայնը լսեց, կարծեց թէ այն եղջիւրաւոր զարհուրելի կենդանին է ետեւից ընկած եւ այն աստիճան վախեցաւ, որ համարեա լողալու կարողութիւն չմնաց մէջը եւ քիչ էր մնում որ ջուրը տակովն անէր նորան: Ամենեւին չէր համարձակում յետ

նայել եւ մի փոքր խելքը գլուխը ժողովելով, այնպիսի արագութեամբ սկսաւ լողալ որ խեղճ շունը չէր կարողանում ետեւից հասնել: Վերջապէս յաջողութեամբ հասաւ ափին եւ շնչառպառ ու անզգայ ընկաւ Ռօբինզօնի ոտքերը: Փոքր ինչ յետոյ շունն էլ եկաւ հասաւ նորան:

Ռօբինզօնն սկսաւ ամէն հնարք գործ դնել որ յետ բերէ իւր ընկերոջ: Համբուրում էր, գգվում էր նորան, ձեռքերը շփում եւ բարձր ձայնով կանչում էր նորա անունը: Վերջապէս Ուրբաթը ուշքի եկաւ եւ աչքերը բացեց. Ռօբինզօնի ուրախութեանը չափ չկար: Երբ բոլորովին խելքի եկաւ, Ուրբաթը պատմեց իւր տիրոջ այն զարհուրելի արկածը, որ պատահեցաւ իրան այդ, իւր ասելովը, ահագին փայտէ լերան վրայ, ուր բուսած են երեք աշագին ծառեր (այսինքն կայմեր), պատմեց թէ ինչպէս եղջերաւոր ու մօրուաւոր հրէշը կամենում էր սպանել իրան եւ վերջապէս բացատրեց նորան, թէ իւր կարծիքով անշուշտ այդ հրէշ կենդանին է այն լողացող լերան տէրը, որովհեաեւ բացի դռանից ուրիշ մարդ չէր տեսել այնտեղ:

Ռօբինզօնը զարմանալով լսում էր նորան.

Նա իսկոյն հասկացաւ, որ խեղճ Ուրբաթին վախեցնող հրէշը անշուշտ այծ պէտք է լինէր եւ բոլոր հանգամանքներից եղրակացըքեց, որ նաւը նստել է աւագի վրայ, իսկ միջի ճանապարհորդները թողել են նաւը եւ մակոյկներով ազատուել են: Սակայն ամենեւին չկարողացաւ իմանալ, թէ ուր պէտք է գնացած լինեն այդ ճանապարհորդները: Եթէ ազատուելու համար իր կզզին դիմած լինէին, հաւանական է որ ափի նոյն մասնում պիտի գուրս գային, ուր որ Ռօբինզօնն ու Ուրբաթն էին գտնվում: Բայց այնտեղ ամենեւին ոտքի նշան չկար: Իսկ եթէ թշուառները չէին կարողացել ափին հասնել եւ խեղդուած լինէին, պէտք է որ գոնէ նոցա գիակները երեւէին ափին եւ կամ մակոյկի կտորտանքները: Վերջապէս նա մի բան յիշեց, այն է որ վոթորկի ժամանակ յանկած հողմի ուղղութիւնը վոխուեցաւ, արեւմտեան կողմից դադարեցաւ եւ սկսաւ արեւելեան կողմից վշել: այս հանգամանքը ամէն բան կարծես պարզեց:

Նատ հաւանական է, մտածում էր նա ինքն իրան, որ արեւելեան հողմը թող չէ տուել որ նոցա մակոյկը մեր ափին մօտեւած:

նայ. փոթորիկը նորա միջի մարդոց աարել
է դէպի արեւմուտք եւ այնտեղ նոքա կո-
րած կը լինին. . . կամ գուցէ ծովային հո-
սանքի մէջ են ընկել եւ կամ արեւմուեան
կզղիներից մէկի վրայ դուրս են եկել:

Սակայն մենք այժմ ի՞նչ պէտք է անենք,
մտածում է ինքն իրան Ոօբինզօնը. Մեր
ձեռքից ուրիշ ոչինչ չի դուրս գայ, բայց
եթէ աշխատել որքան կարելի է, նաև մի-
ջի բաները դուրս բերել. Բայց ի՞նչպէս կա-
րող էր այդ անել, երբ իւր նաւակը փոթո-
րիկը հեռացը էր ափից եւ տարել ծովի
խորքը. Նատ մտածեց, գլուխ տրաքացրեց,
որ մի հնարք գտնէ, բայց ոչինչ յարմար
բան չգտաւ. Ուրիշ նաւ շինելը երկար ժա-
մանակ կ'ուղէր, լողալով էլ չէր համարձա-
կում գնալ, թէկուզ գնար էլ՝ այդպիսով ի՞նչ
կարող էր նաւից ազատել. Վերջապէս մտա-
ծեց որ լաստ շինելուց յաջող եւ յարմար բան
չէ կարող գտնել: Ուստի որոշուեցաւ որ Ուր-
բաթը տուն գնայ եւ ամբողջ օրուայ համար
կերակուր, բոլոր հարկաւոր գործիքները եւ
լաստը կապելու համար չուան բերէ, իսկ Ոօ-
բինզօնը մնայ ծովի ափին եւ լաստի համար
փայտ կտրտէ:

Օրը մթնում էր, երբ Ուրբաթը վերադար-
ձաւ տանից: Իսկ մինչեւ նորա գալը Ոօբին-
զօնը փայտ կտրտեց լաստի համար եւ շատ
զուարձանում էր շան հետ, որ իբրեւ եւ-
րոպացի հայրենակից շատ թանգ արժէր
այժմ նորա համար: Նունն էլ իւր կողմից
կարծես շատ ուրախանում էր այս նոր
բարեկամութեան համար եւ առանց պա-
տուէր ընդունելու՝ նորա առաջ զանազան
զարմանալի խաղեր էր անում: Երբ Ուրբաթն
եկաւ, Ոօբինզօնը ամէն բանից առաջ կե-
կակրեց շանը, չնայելով, որ ինքն էլ ամ-
բողջ օրը բան չէր կերել:

Բարեբաղդաբար այն գիշերը լուսին դուրս
եկաւ եւ երկուսը միասին մինչեւ կէս գի-
շեր աշխատեցան, յետոյ որովհետեւ խիստ
յոգնեցան՝ ստիպուեցան գործը թողնել եւ
քաղցր քնով քնեցան ափի մօտ: Նունն էլ
պարկեցաւ իրանց ոտքերի տակ:

Հազիւ թէ արշալոյսը բացուեցաւ՝ Ոօբին-
զօնը զարթեցը Ուրբաթին, որ շուտով
գործի կենան: Այնպէս եռանդով աշխատե-
ցան որ երեկոյին լաստը բոլորովին պատ-
րաստ էր: Նա բաղկացած էր երկու կարգ

գերաններից, որոնք չուանով եւ ուռիի ճիւ-
ղերով իրար հետ կապած էին:

Միւս օրը տեղատուութեան ժամանակը հա-
սաւ թէ չէ՝ լաստը իջեցրին ծովի մէջ, ի-
րանք էլ տեղաւորուեցան վրան եւ լաստը
շարժուեցաւ տեղից: Տեղատուութիւնը այն-
պէս քշեց լաստը, որ կէս ժամի մէջ հա-
սան նաւին:

Ուօբինզօնը եւրոպական նաւ տեսնելով
սիրտը շարժուեցաւ, բայց աւանդ. նոցա
տէրերից, իր սիրելի եւրոպացիներից ոչ ոք
չկար նորա մէջ: Նատ կարելի է խեղդուած
լինէին ծովի մէջ:

Բոլորովին յոյսը կտրելով թէ կարող էր
այս նաւով իւր հայրենիքը վերադառնալ,
Ուօբիզօնը շտապով բարձրացաւ տախտակա-
մածի վրայ, որ տեսնէ թէ ինչ կայ միջից
ազատելու եւ թէ եղած բաները հ'օ
չեն փչացել: Ուրբաթը գեռ չէր մոռացել
անցած օրուայ քաշած վախը, ուստի
ակամայ հետեւեցաւ իւր տիրոջը: Թէ-
պէտեւ նա հէնց առաջին քայլափիխում
պատահեցաւ այն մօրուառոր հրէշին, բայց
այս անգամ աւելի հանգիստ տեսաւ նորան.
խեղճը համարեա անշարժ պառկած էր մի

տեղ եւ չէր կարողանում վերկենալ, որով-
հետեւ երեք օր էր որ ոչինչ չէր կերել:
Մինչդեռ Ուօբինզօնը կերակրում էր խեղճ
կենդանուն, Ուրբաթը աչ ու դողով եւ հե-
տաքրքրութեամբ նայում էր:

Ուօբինզօնը սկսաւ շրջել նաւի մէջ. ամէն
խորշերն ու նաւասենեակները ման եկաւ.
ամէն տեղ հազարաւոր բաներ աեսաւ, որոնք
նորա համար անգին գանձեր էին: Ուրբաթը
ամէն բանի վրայ բերանը բաց եւ զարման-
քով էր նայում: որովհետեւ իւր կեանքում
ամենեւին չէր տեսել այդպիսի բաներ եւ
մինչեւ անգամ չգիտէր թէ ինչ բանի հա-
մար պէտք են այն ամէնը: Ուօբինզօնը ու-
զեց նաւի տակն իջնել, բայց տեսաւ որ ջրով
լցուել էր:

Սկսաւ մոտածել թէ առաջին անգամ ինչ
վերցնէր հետը եւ երկար ժամանակ տա-
տամնութեան մէջ մնաց. երբեմն մի բան
աւելի հարկաւոր էր թվում իրան, երբեմն
ուրիշ բան, իսկ բոլորը միասին անհնար էր
տանել: Աերջապէս մի փոքրիկ տակառ վա-
ռուդ վերցրեց եւ մի նոյնափիսի տակառով
մանր գնդակ, երկու հրացան, երկու զոյգ
ատրճանակ, երկու թուր, երկու որսի գա-

նակ, երկու ձեռք հագուստ՝ մէկը իւր եւ
միւսը Ուրբաթի համար, երկու կապոց (24
հատ) շապիկ, երկու կացին, երկու սզոց,
երկու խարտոց, մուրճ եւ քանի մի ուրիշ
գործիք, մի քանի հատ գիրք, թուղթ, թա-
նաք եւ գրիչ, հրաշան իւր կայծքարով
ու աբեթով, մի տակառ պաքսիմաթ, մի
քանի հատ առագաստ, մի զոյգ թի եւ
այծը:

Անտարբեր սառնութեամբ թողեց նաւի
մէջ այն ամէն բաները որ Եւրոպայում
ամէնից առաջ կը յափշտակէին, այն է՝ մի
փոքրիկ տակառ ոսկի եւ մի արկղ թան-
կագին ակներով լի, որ գտաւ նա նաւա-
պետի սենեակի մէջ:

Մինչեւ որ նաւը ման եկաւ, տանելու բա-
ները հաւաքեց, կապկապեց եւ դարսեց՝ բաւա-
կան ժամանակ անցաւ, այնպէս որ մի ժամ էլլի
կար մինչեւ մակընթացութեան սկսուիլը
իսկ Ռօբինզօնը անշուշտ պէտք է սպասէր
մակընթացութեան, որովհետեւ ուրիշ կեր-
պով անհնար էր այսպիսի ժամը բեռնով ջրի
ընթացքի հակառակ գնալ: Մինչեւ որ մակըն-
թացութեան ժամանակը մօտենար, նա մոտ-
ծեց եւրոպական կերպով ճաշել:

Նաւի մէջ որոնեց ու գտաւ մի կտոր
ապուխտ, մի զոյգ աղաձուկ, մի քանի պաք-
սիմաթ, իւղ, պանիր եւ մի շիշ գինի,
այս բոլորը շարեց նաւապետի սենեակի մէջ
սեղանի վրայ եւ Ուրբաթի հետ միասին
նստան գեղեցիկ ու փափուկ աթոռների
վրայ: Լոկ սեղանի մօտ աթոռի վրայ նըս-
տած գանակով պատառաքաղով եւ հասա-
րակ ամաններից ճաշելը մեծ զուարճու-
թիւն պատճառեց նորան:

Ուրբաթը բոլորովին ապշել մնացել էր.
Ճէր իմանում: Թէ գանակն ու պատառա-
քաղը ինչի համար են եւ ինչպէս պիտի գոր-
ծածէ: Ռօբինզօնը այդ բանը սովորցրեց
նորան, եւ նա աշխատելով տիրոջը նմանե-
լու, շատ անդամ պատարաքաղի ճայրով
միսը տանում էր դէպի ականջը, իսկ ըե-
րանին, ըստ սովորութեան, մօտեցնում էր
ձեռքը պատառաքաղի կոթի հետ: Ռօբին-
զօնը փոքր ինչ գինի տուաւ նորան որ հա-
մը տեսնէ, բայց նա չհաւանեցաւ, իսկ պաք-
սիմաթը մեծ զուարճութեամբ կերաւ:

Մակընթացութիւնը սկսաւ, Ռօբինզօնն
ու Ուրբաթը իջան լաստի վրայ եւ ճանա-
պարհ ընկան: Լաստը շատ շուտ ապաւ

նոցա ափի մօտ, ուր բոլոր բեռը ցամաք
դուրս բերին:

Ոօբինզօնը հագաւ եւ ըսպական հագուստ,
յետոյ առաւ նաւաստիի բոլոր շորերը, ցոյց
տուեց Ուրբաթին նոցա հագնելու կերպը
ու հրամայեց հագնուիլ: Ուրբաթը հնագան-
գեցաւ, բայց չնայելով որ Ոօբինզօնը ցոյց
էր տուել նորան, շատ չարչարուեցաւ մին-
չեւ որ կարողացաւ հագնուիլ շապիկը վար-
տիքի պէս էր հագնում: թեւերի մէջ վո-
խանակ ձեռքերի ոտքերն էր կոխում: վար-
տիքը վերեւից հագնելու տեղ՝ ներքեւից
էր հագնում: բաճկոնը առջեւից հագնելով՝
աշխատում էր կոճկել մէջքի վրայ: Բայց
փոքր առ փոքր յաջողեցրեց բանը եւ ինչ-
պէս հարկն էր հագաւ բոլոր շորերը:

Ուրբաթը երեխայի պէս ուրախանում էր նա-
յելով իւր նոր շորերի վրայ, որոնք շատ յար-
մագ էին թվում իրան եւ շատ լաւ էին պաշտ-
պանում նորան մոծակներից: Միմիայն կո-
շիկներից տժգոհ էր նա, ուստի եւ Ոօբինզօ-
նից իրաւունք խնդրեց որ չհագնի, Ոօբին-
զօնն էլ իւր կամքին թողեց:

Յետոյ նորան սովորցրեց նաւից բերած զա-
նազան գործիքների գործածութիւնը. մոտ-

ծեցին իրանց լսուտի համար մի փոքրիկ կայմ
շինել, որին կարողանային առագաստ կըպ-
ցնել եւ այդպիսով նաւը գնալ առանց մակրն-
թացութեան եւ տեղատուութեան սպասե-
լու: Ոօբինզօնը ինքը յանձն առաւ այդ աշ-
խատանքը, իսկ Ուրբաթին ուղարկեց տուն
լամաները կթելու, որովհետեւ արդէն երկու
օր էր չէին կթուել:

Ուրբաթը որ հեռացաւ, Ոօբինզօնը լցրեց
նաւից բերած հրացաններից մինը, որ վա-
ռողի ձայնով եւ ներգործութեամբ զարմացնէ
իւր բարեկամին: Երբ սա վերադարձաւ, Ոօ-
բինզօնը մէկ ծովային բագ տեսաւ, որ կտու-
ցում ձուկ բռնած թռչում էր, իսկոյն վեր-
դրեց հրացանը եւ ասաց Ուրբաթին. նայի՞ր,
այս ըոսկէիս այս բագը գետնին կը փռուի:
Ասաց ու արձակեց հրացանը եւ բագը իւր
որսի հետ ընկաւ նորա ոտների մօտ:

Ուրբաթը այնպէս սարսափեցաւ որ կարծես
գնդակն իրան էր դիպել եւ իսկոյն վայր
ընկաւ գետնին: Նորից մտքովն անցաւ թէ
իւր տէրը կախարդ է: Ոօբինզօնը սկսաւ
հանգստացնել նորան, ցոյց տուեց հրացա-
նի կազմութիւնը եւ հասկացրեց թէ ինչ
յատկութիւն ունի վառօդը, բայց Ուրբաթը

Երկար ժամանակ չկարողացաւ խելքը գլուխը ժողովել: Այդ միջոցին գիշերը վրայ հասաւ եւ Ռօբինզոնը ուրախ մտածմունքների մէջ ծովի ափին քննցաւ:

Առաւոտեան վաղ վերկացան, բոլոր բաները տարան պահեցին թիերի մէջ եւ տերեւներով ծածկեցին, որպէս զի եթէ անձրեւ գայ՝ չթրջուին. յետոյ տեղատուութեան ժամանակ նորից ճանապարհ ընկան դէպի նաւը:

Այսօրուան ճանապարհորդութիւնը աւեմի յաջող անցաւ, որովհետեւ նոքա թիերունէին. շուտով հասան նաւին եւ առաջին գործն այն եղաւ, որ նաւի մէջինչքան տախտակ կար բոլորը հաւաքեցին եւ երկու կարգ շարեցին լաստի վրայ, որ փոխագրելու բեռը ամենեւին չթրջուի:

Յետոյ Ռօբինզոնը նորից շրջեց նաւի ամէն կողմերը աւելի հարկաւոր բաներ ընտրելու համար: Այս անգամ՝ ուրիշ շատ բաներէ հետ որոշեց մի փոքրիկ թնդանօթվերցնել, նոյնպէս մի մի պարկ հաճար, վարսակ եւ միսեռ, մի արկղ տեսակ տեսակ մեխեր, մի տակառ վառօդ, մեծ ու փոքր գնդակներ, առագաստներ եւ մի երկանաքար:

Ափը վերադառնալուց առաջ՝ Ռօբինզոնը մի լաւ քննեց նաւը եւ տեսաւ որ մէջը ջուր շատ է մնել եւ որ սաստկակոծ ալիքներից եւ ծովի տակի ժայրերին խփուելուց քանի մի տախտակ էլ պոկուել էին երկու կողմից: Ռօբինզոնը գուշակեց որ եթէ մի նոր ալեկոծութիւն պատահի, նաւը բոլորովին պիտի խորտակուի, ուստի վճռեց շտապել որ որքան կարելի է աւելի բան ազատէ:

Որովհետեւ այն ժամանակ հողմը ծովից դէպի ցամաքն էր փչում: Նոքա առագաստի ու թիերի օգնութեամբ կարողացան յաջողութեամբ նաւել մինչեւ կզզին, չնայելով որ տեղատուութիւնը սկսած լինելով ջուրը հակառակ կողմն էր վագում: Բոլոր բեռը հանելով ցամաքի վրայ, նոքա՝ դեռ ծովը չբարձրացած՝ կրկին նաւը վերադարձան: Ամէնից առաջ Ռօբինզոնը նաւի մէջ մնացած ուկին ու աղամանդը հանեց դրեց լաստի վրայ, մտածելով, թէ կարող էր պատահել որ նաւի տէրը կենդանի լինէր եւ գար իւր կայքը որոնէր:

Այս անգամ նա վերցրեց երկու սայլակը որ յայտնի չէ թէ ինչի համար գտնվում էին նաւի մէջ, շատ շորեր, սպիտակեղեն-

ներ, մի կանթեղ, որի մէջ գէռ էլի մնացել էր փոքր ինչ իւղ եւ նաւապետի բոլոր թղթերը։ Մակընթացութիւնը սկսուելու պէս Ուրբաթն ու նա յետ դարձան իրանց կզզին։

Օրուայ մնացած մասը Ոօբինզօնը պարապեցաւ նաւից բերած առագաստից վրան պատրաստելով, որ եթէ պատահէր որ անձրեւ գար, պահպանէր իւր ամենամեծ գանձը՝ վառօդը։ Որովհետեւ այժմ՝ ամէն բան ունէր, մկրտու, ասեղ ու թել, ուստի գործը շատ լաւ էր գնում։ Ուրբաթն էլ շուտով սովորեցաւ կարել եւ բաւական օգնեց Ոօբինզօնին։ Օրը գեռ ցերեկ էր, որ վրանը կարած պատրաստ էր։ Երեկոյին երբ լաւ մթնեցաւ, Ոօբինզօնը կանթեղը վառեց եւ սկսաւ նաւից բերած թղթերը քրքրել որ տեսնէ թէ ումն է եղել այդ նաւը, ուր եւ ուրտեղից է նաւել։ Բայց տարաբազարար թէ թղթերը եւ թէ գրքերը իրան անձանօթ լեզուով էին գրուած։

Մէկ շաբաթ շարունակ, օրը երկու երեք անգամ Ոօբինզօնն ու Ուրբաթը գնում էին նաւը եւ որչափ կարելի էր՝ միջի բաները ցամսք էին գուրս բերում։ Նոցա նաւոր-

դութիւնը ամէն անգամ յաջող էր անցնում եւ ամէն անգամ իրանց բեռը անվնաս գուրս էին բերում ցամաք։ Տասն եւ ութ անգամ գնացել էին նաւը եւ երբ տասն եւ իններորդ անգամ նաւի մէջն էին, նկատեցին որ փոթորիկ է բարձրանում։ Նտապով հաւաքած բաները գարսեցին լաստի վրայ եւ ճանապարհ ընկան, յուսալով որ փոթորիկը սաստկանալուց առաջ ցամաքը կը հասնեն։ Բայց նոցա բոլոր աշխատանքը իզնուր անցաւ։ Դեռ կէս ճանապարհը չգնացած՝ յանկարծ զարհուրելի քամի վերկացաւ, հետն էլ կայծակն ու որոտումը։ Ալիքներն սկսան բարձրանալ եւ լաստի վրայ եղած բոլոր բաները ծովը թափեցին։ Իսկ իրանք երկուոր միասին փաթաթուեցան կայմին, որ ալիքները չտանեն իրանց, չնայելով որ երեւմն նոցա գլխներից էլ մի արշինացափ բարձր էին խփում։

Վերջապէս ինքը լաստն էլ չկարողացաւ դիմանալ ալիքների հարուածներին։ չուանը, որով կապկած էին գերանները, կտրտուեցաւ եւ լաստը քայքայուեցաւ։

Ուրբաթն աշխատում էր լողալով ազատուիլ, իսկ Ոօբինզօնը պինդ բռնեց մի գե-

րան եւ ալիքները երբեմն վեր էին բարձ-
րացնում նորան իւր գերանի հետ մէկ-
տեղ, երբեմն ջրի մէջ տանում: Աւելի ջրի
տակ լինելով քան թէ երեսին, նա համա-
րեա խելքը կորցրելէր, այնպէս որ ոչ տես-
նում էր եւ ոչ լսում: Վերջապէս ուժից
ընկաւ եւ բոլորովին ուշաթափուեցաւ: Մի
անգամ էլ աղաղակեց եւ անյայտացաւ մի
ահագին ալիքի մէջ, որ խլեց նորանից գե-
րանն էլ:

Բարեբաղդաբար հաւատարիմ Ուրբաթը
շարունակ նորա մօտից էր լողում եւ չէր
հեռանում: չնայելով որ եթէ կամենար, վա-
զուց արդէն կըհասնէր ցամաքը: Տեսնելով
որ իւր տէրը անյայտանում է ալիքների
մէջ, առանց երկար մտածելու հասաւ նո-
րան, ձախ ձեռքով բռնեց եւ միմիայն աջը
շարժելով գուրս բերեց նորան ծովի երեսը:
Յետոյ վերջին ոյժը հաւաքելով քանի մի բո-
պէի մէջ ցամաքը տարաւ հանեց իւր տիրոջ,
որի մէջ կեանքի նշան անգամ չէր երե-
ւում: Պառկեցրեց նորան խոտի վրայ, ընկաւ
վրան, ձայն էր տալիս, շփում էր բոլոր
մարմինը, շրթունքները համբուրում էր,
աշխատելով շունչ տալ նորան: Երկար ժա-

մանակ Ուրբաթի բռլոր ջանքերը զուր եղան,
բայց վերջապէս անպատմելի ուրախութեամբ
նկատեց նա որ Ոօբինզօնը բոլորովին ան-
կենդան չէ: սա հառաջեց ու աչքերը բա-
ցեց....

Ուրբաթը ուրախութիւնից լաց եղաւ
եւ ընկաւ գրկեց իւր տիրոջն ու բարեկա-
մին:

Մի բաղցը քուն վրանում նաւից բերած
փափուկ անկողնի մէջ այնպէս կազդուրեց
եւ զօրացրեց Ոօբինզօնին, որ միւս օրը վեր-
կացաւ բոլորովին առողջ եւ ուրախ եւ շնոր-
հակալութիւն արաւ Աստծուն, որ իրան
ազատեց մահից եւ առողջացրեց: Փոթորիկը
բոլոր գիշերը տեւեց, այս պատճառով նա
անհամբեր սպասում էր արեւի ծագելուն,
որ տեսնէ թէ ինչ եղաւ նաւը:

Վերջապէս արեւն էլ գուրս եկաւ եւ Ոօ-
բինզօնը տեսաւ, որ նաւը բոլորովին ան-
յայտացել էր: Միքանի տախտակ ու գերան,
որ ալիքները դուրս էին բերել ցամաք, պարզ
ցոյց էին տալիս որ փոթորիկն ու ալեկոծու-
թիւնը բալորովին խորտակել էին նաւը: Ու-
րախ լինելով որ գոնէ առանց ժամանակ
կորցնելու նաւի բեռը աղատեցին, Ոօբինզօնը

Եւ Ուրբաթը ցամաք ձգուած նաւի կտոր-
տանքը հաւաքեցին, քաջ գիտենալով որ
ամենափոքր տախտակը կարող էր որեւէ բա-
նի պէտք դալ:

XII.

Այժմ պէտք էր այս նոր կայքը ամրոցը
փոխադրել. բայց Ռօբինզօնը վտանգաւոր էր
համարում մի քանի անգամ գնալ գալը,
այն էլ այնքան հեռու տեղ, ուստի այն-
պէս կարգադրեց որ մինը բաները տանի
ամրոցը, իսկ միւսը այդ միջոցին մնացած
բաները պահպանէ:

Ռօբինզօնը թնդանօթները լցրեց եւ շա-
րեց ափի մօտ՝ բերանները դէպի ծովը: Յե-
տոյ Ուրբաթն ու նա մեծ կրակ վառեցին.
մնացողը պէտք է զգուշութեամբ պահպա-
նէր կրակը. պատրոյգն էլ վառեցին դրին
թնդանօթների մօտ, որ հարկաւոր ժամա-
նակ էլ չուշացնեն, արձակեն թնդանօթը:

Առաջ Ռօբինզօնը գնաց ամրոցը եւ իւր
սայլով տարաւ մի քանի տակառ վառող
եւ ուրիշ շատ բաներ, որոնք խոնաւութիւ-
նից աւելի շուտ կարող էին փշանալ: Նունը

ամենեւին չէր բաժանվում նորանից: Ռօ-
բինզօնն էլ մի թոկ կապեց սայլիցը եւ նորա
մի ծայրը կապեց շան վզին, որ նա էլ օգ-
նէ բեռը քաշելու. բացի զորանից այնքան
կրթուած էր շունը որ բերանին էլ մի կապոց
ունէր բռնած մանր մունր բաներով, որով-
հետեւ իւր նախկին տէրը այդպէս էր սո-
վորցըել:

Ամրոցից վերադառնալիս Ռօբինզօնը իւր
բոլոր լամաները հետը բերեց, որովհետեւ
առաջուց սովոր էին բեռնակրի պաշտօն
կատարելու: Ընդամէնը եօթը լամա ունէր,
եւ որովհետեւ նոցանից ամէն մէր մօտ ե-
րեք փութ բան կարող էր տանել ուստի
շատ շուտ վերջացրին այդ գործն էլ:

Այս բոլոր ասլրանքը չտեղաւորուեցաւ
Ռօբինզօնի քարայրի ու նկուղի մէջ, այս
պատճառով բակի մէջ տեղը շուտով մի մեծ
վրան շինեցին, որ պէտք է պահեստի տեղ
ծառայէր: Ութ օրուայ մէջ բոլոր բաները
կրեցին. տարան նաեւ բոլոր տախտակները
դարսեցին ամրոցի մօտի անտառակի մէջ
ծածքի տակ, որ միշտ առձեռն պատրաստ
ունենան:

Այժմ շատ զուարձակի եւ ուրախ զբաղ-

մունքներ եւ գործեր ունէին նոքա: Սակայն Ռօբինզոնը, որ իւր ամէն պարապմունքների մէջ կարգ ու կանոն էր պահապանում: Հուտով որոշեց թէ ո՞ր գործը աւելի հարկաւոր է եւ այն սկսաւ անել: Ամէն բանից աւելի կարեւոր էր թվում նորան որ մի գաւիթ շինէր, ուր բերած բաները վրանից աւելի ապահով ու լաւ պահպանուէին: Ուրեմն հարկաւոր էր հիւսնութիւն անել որ ոչ Ռօբինզոնը գիտէր եւ ոչ Ռլրբաթը:

Բայց այժմ երբ Ռօբինզոնը ձեռքի տակ ունէր ամէն հարկաւոր գործիքները, ամենադժուար ու չգիտեցած աշխատանքն էլ չնչին բան էր թվում նորան, համեմատելով առաջուան աշխատութիւնների հետ, երբ ոչ գործիք ունէր եւ ոչ օգնական: Զարմանալի արագութեամբ եւ առանց հանգըստանալու փայտերը կտրտեց ու մաքրեց, գերաններն ու տախտակները տաշեց, քարէ պատեր կանգնեց, վրան էլ երկու տակ ծածկեց, առաջ տախտակով՝ իսկ յետոյ կօկոսի տերեւներով:

Եւ այդպէս շուտով մի փոքր տուն շինեց: Ռօբինզոնը չէր մոռացել նաւից նաւապետի սենեակի պատուհանների ապակիները

հանել որ այժմ պէտք ածեց, եւ տունը առանց մի որեւէ կողմից բաց մնալու լուսաւորուեցաւ:

Այնուհետեւ Ռօբինզոնը մկնաւ մտածել որ իւր ամրոցի ճանապարհը ուղղէ, բայց այնպէս որ դարձեալ անմերձենալի լինի:

Նա կարծեց որ այս բանի ամենալաւ հնարքը դուռը ու շարժական կամուրջն է: Եւ որովհետեւ մեխ, շղթայ, դռան կոճակներ եւ կողպէքներ բաւական շատ ունէր, ուստի իսկոյն գործի կացաւ: Հողէ եւ փայտէ պատերի մէջ ծակ թողին, գռները շինեցին եւ շարժական կամուրջը դրին այնպէս՝ որ երբ վերցնէին, գռները բոլորովին փակուէին: Յետոյ լցրած թնդանօթները շարեցին պատնէշի վրայ այնպէս որ երկուսը ամրոցի աջ կողմը պաշտպանէին, երկուսը ձախ կողմը, երկուսն էլ առջեւից: Այսպիսով բոլորովին պահովեցրին իրանց վայրենիների յարձակումներից եւ միեւնոյն ժամանակ լաւ յարմար դռւու էլ ունեցան ամբոցը մտնելու:

Հունձի ժամանակն եկաւ. հարկաւոր էր սիմինդր կտրել եւ դետնախնձոր հանել: Ռօբինզոնը գերանդիքի տեղ մի հին ման-

գաղ էր գործածում; իսկ գետնախնձորը
փորելու համար մի պատուական բահ ու-
նէր, որ գտել էր նաև մէջ: Որովհետեւ երկ-
րագործութիւնը նորա ամենասիրելի պա-
րապունքն էր, ուստի մտածեց դարբնոց
բանալ, որ երկրագործական անհրաժեշտ
գործիքները ինքը կարողանար շինել այն-
տեղ: Այս բանը մտքովն անգամ չէր անցկա-
ցնի նա, եթէ նաւից բերած մի փոքրիկ սալ
բաւական մեծ փուքս եւ խիստ շատ երկա-
թի կտորտանք չունենար: Ոօքինզօնն ու
Ուրբաթը իրանց խոշանոցին կից մի մեծ-
տեղ տախատկով ծածկելով, դարբնոցի
համար յատկացրին, ուր կարելի էր անձրեւ
ժամանակ էլ աշխատել: Անձրեւները որ սկը-
սեցին, նոքա շինեցին մի քանի հատ թի,
արօր եւ երկաթի ցաքան, իսկ երբ անձրեւը
կտրուեցաւ ցանեցին երկու չետվերիկ հա-
ճար, մի չետւերիկ ցորեն եւ կէս չետվե-
րիկ սիսեռ: Նոր գործիքներով այնպէս լաւ
վարեցին գետինը, որ հինգ ամսից յետոյ
տասնապատիկ աւելի ստացան, այն է քսան
եւ չորս չետվերիկ հաճար, տասներկու չետ-
վերիկ հաց եւ վեց չետվերիկ սիսեռ: Այս
քանը մի քանի ամիս բաւական էր նոցա:

Որքան աւելի շատ էին աշխատում Ոօ-
քինզօնն եւ Ուրբաթը, այնքան աւելի կազ-
գուրվում էին նոցա ոյժերը եւ այնքան հետզ-
հետէ աւելանում էր նոցա ուրախութիւնն
ու հանգստութիւնը: Կէս տարուանից ա-
ւելի էր անցել բայց Ուրբաթը ամենեւին չէր
համարձակել հայրենիքը գնալու մասին խօսք
բանալ իւր տիրոջ մօտ թէպէտեւ շատ ան-
գամ երբ գործը աւարտում էր, վազում
էր սարի գլուխը եւ երկար ժամանակ կանգ-
նում էր, տխուր տրտում նայելով այն
կողմը ուր գտնվում էր իւր հայրենի կղ-
զին . . . Վերջապէս Ոօքինզօնը նախ
խօսք բաց արաւ որ մի նոր նաւակ շինեն եւ
գնան Ուրբաթի հօր մօտ, եւ բարեսիրու վայ-
րենին չգիտէր թէ ինչպէս յայտնէ իւր շնոր-
հակալութիւնը: Միւս առաւօտ նաւակը
սկսեցին շինել: Գործը առաջուանից յաջող
էր գնում: Որովհետեւ այժմ մեր նաւատէ-
րերը երկաթէ կացիններ ունէին:

Մի առաւօտ Ոօքինզօնը գործով զբա-
ղուած էր, իսկ Ուրբաթին ուղարկեց ծովի
ափը ոստրէ հաւաքելու, որովհետեւ վազուց
է որ չէր կերել: Քիչ անցաւ, Ուրբաթը վա-
խից ու վազելուց շունչը հատած յետ դար-

ձաւ եւ հազիւ կարողացաւ արտաքերել «այս-
աեղ են, նոքա այստեղ են» խօսքերը:

— Ի՞վքեր են այստեղ, չփոթուած հարց-
րեց Ռօբինզօնը:

— Նոքա, նոքա մէկ, երկու, երեք, վեց
նաւակով են:

Ռօբինզօնը շտապեց բարձրացաւ սարը
եւ իրաւ համոզուեցաւ որ Ուրբաթի խօս-
քերը սուտ չէին. վեց նաւակ վայրենիներով
լիքը մօտեցել էին ցամաքին: Շտապով ցած
իջաւ, քաջալերեց դողը բռնած Ուրբաթին
եւ հարցրեց թէ պատրաճատ է հաւատարմու-
թեամբ ծառայելու իրան, եթէ պատահի
որ վայրենիների հետ կոփւ մոռնեն:

— Կեանքս եւ արիւնս զոհել պատրաստ
եմ պատասխանեց Ուրբաթը:

Ռօբինզօնը պատմէշի վրայից մի թնդա-
նօթ վերցրեց, դրեց սայլի վրայ, անիւներ
ամրացրեց նորան, յետոյ իւր զինարանից
վեց լցրած հրացան բերեց, չորս ատրճա-
նակ եւ երկու սուր: Ուրաքանչիւրը երկու-
երկու ատրճանակ եւ մի մի սուր իրեց
գոտի մէջ, երեք երեք հրացան դրին ուս-
ներին եւ բաւական վառօդ ու գնդակ վեր-
ցնելով հետները՝ սկսեցին թնդանօթը դուրս

քաշել: Այս այսպիսի պատերազմական պատ-
րաստութեամբ դուրս գնացին նոքա ամրո-
ցի դռներից:

Ճանապարհին Ռօբինզօնը պատմեց Ուր-
բաթին իւր անելիքը: Լերան ետեւելց պտր-
տենք, ասաց նա, անտառների միջից գնանք
ավին մօտենանք եւ այնտեղից գաղտնի
նոցա գլխիներից վեր թնդանօթը կ'արձակենք:
Անշուշտ վայրենիները այնպէս կրվախենան
նորա ձայնից, որ կրթողնեն իրանց որսը
եւ կը փախչին կ'երթան:

Ուրբաթը շտա հաւանեցաւ այս խորհուր-
դին:

Այդպէս ուրեմն, շարունակեց Ռօբինզօնը,
կարող ենք ազատել իւղձ գերիներին, ա-
ռանց մի կաթիլ վայրենիների արիւն թա-
փելու, որոնք այնուամենայնիւ մեզ պէս
մարդիկ են: Խոկ եթէ նոքա իրանց բազուկ-
ների եւ շատութեան վրայ յայս գնելով
չեն փախչի, այն ժամանակ Աստուծոյ օգ-
նութեամբ կը սկսենք հետները կռուիլ: Ու-
րեմն, թող նորա սուրը կամքը կատարուի:
Այս խօսքերն ասելուց յետոյ Ռօբինզօնը ձեռ-
քը մեկնեց իւր ընկերոջ եւ երկուսն էլ երդ-
ուեցան, որ մինչեւ յետին շունչը եւ ա-

բեան վերջին կաթիլը օդնեն միմեանց:
Զգուշութեամբ հասան մինչեւ համարեա
անտառակի ծայրը եւ վերջին ծառերի ետեւը
կանգ առին: Ուօքինզօնը ցոյց տուեց իւր ըն-
կերջը մի տերեւախիտ ծառ, որ իրանցից
բաւական տեղ առաջ էր ընկած եւ ցած-
ձայնով ասաց նորան, որ զգուշութեամբ
գնայ բարձրանայ այն ծառը եւ նայի թէ
ինչ են անում թշնամիները: Ուրբաթը շու-
տով յետ դարձաւ յայտնեց թէ այն ծա-
ռից շատ լաւ երեւում են թշնամիների
բոլոր շարժմունքները. թէ վայրենիները
նստած են կրակի շուրջը եւ կրծում են
մի գերու ոսկորները, որին սպանել են ու
խորովել, իսկ մի ուրիշ գերի կապած ըն-
կած է գետին եւ երեւում է որ շուտով հեր-
թը նորան պիտի հասնի: Սակայն Ուրբաթի
կարծիքով այն միւս գերին իւր հայրենա-
կիցներից չէր, այլ սպիտակ էր եւ երկայն
մօրուքով: Ուօքինզօնի սիրտը թունդ ելաւ,
երբ լսեց թէ գերին սպիտակ մարդ է: Եւ
ճշմարիտ որ քառասուն թէ յիսուն մարդ
նստատած էին կրակի շուրջը. իսկ կապած
գերին տեսաւ որ եւրոպացի էր:
Հազիւ կարողացաւ բարկութիւնը զսպել,

եւ անհամբերութեամբ կամենում էր ան-
միջապէս յարձակուիլ բարբարոսների վրայ.
բայց խոհեմութիւնը վերջ ի վերջոյ յաղթող
հանդիսացաւ: Անտառակը, ուր թաք էին
կացած Ուօքինզօնն եւ Ուրբաթը, միւս կող-
մից աւելի մօտ էր թշնամիներին, ուստի
գնացին այնտեղ, թնդանօթն էլ տարան
ամենավերջին թփի ետեւը մի աննկատելի
ծակի մօտ եւ այնպէս տեղաւորեցին, որ
ուումբը վայրենիների գլխներից բարձր ան-
ցնէր առանց նոցա որ եւ է վնաս պատճա-
ռելու: Յետոյ երկուսն էլ երկու երկու հրա-
ցան գրին իրանց մօտ գետնին, մի մի հատ
էլ ձեռքերին վերցրին: Վերջապէս Ուօքինզօնը
մօտեցաւ թնդանօթին, պատրոյգը կպցրեց.
Թնդանօթը արձակուեցաւ եւ ուումբը անցաւ
տօնախմբող բարբարոսների գլխների վրա-
յից: Վայրենիների մեծ մասը սարսափած
գետին փռուեցան, կարծես բոլորը մեռած
լինէին: Ուօքինզօնն եւ Ուրբաթը անհամբե-
րութեամբ սպասում էին որ տեսնեն թէ
վերջը ինչ պիտի լինի եւ պատրաստուեցան
պատերազմելու, եթէ հարկը պահանջէր:
Մի բոպէից յետոյ վայրենիները սկսեցին մէկ-
մէկու ետեւից վերկենալ: Նոցանից վախ-

կոտները վախան մտան իրանց նաւակները,
իսկ որոնք աւելի քաջ էին, ձեռքերին
զէնք վերցրին:

Տարաբաղդաբար նոքա ոչ կրակ տեսան
եւ ոչ ոռումքը, այլ միայն թնդանօթի ձայ-
նը լսեցին. ուստի եւ նոցա վախը այնքան
մեծ չեղաւ որքան կարելի էր սպասել: Երբ
չորս կողմը նայելով ոչինչ վախենալու բան
տեսան, փոքր առ փոքր սկսեցին սիրո
առնել. փաղչողները յետ դարձան, ամէնքը
նորից հաւաքուեցան կրակի շուրջը եւ սկսե-
ցին իրանց սովորական պատերազմի պարը
խաղալ, զէնքերը շարժելով եւ զարհուրելի
ծամաճութիւններ անելով:

Ոօբինզօնը սպասեց մինչեւ որ նոքա այդ
խաղը վերջացրին: Բայց տեսնելով որ վայ-
րենիները նորից իրանց տեղերը նստեցին
եւ նոցանից երկու հոգի վազեցին խեղճ
Եւ բոպացու ետեւից, էլ չկարողացաւ համ-
բերել: Նայեցաւ Ռւբաթին եւ տասց. «Դու
ձախ կողմից, ես աջից. Աստուծոյ օգնու-
թեամբ արձակիր հրացանդ»: Ասաց եւ եր-
կուսն ի միասին արձակեցին հրացանները:
Հրացանները երկաթի կտորներով էին լցրած:
Ռւբաթը կարծես Ոօբինզօնից էլ լաւ էր

նշան գրել, որովհետեւ ձախ կողմից հինգ
հոգի ընկան, իսկ աջ կողմից միմիայն ե-
րեք: Վայր ընկնողներից երեքը սպանուած
էին, իսկ միւս հինգը միայն վիրաւորուած:
Մնացած մարդակերները այնպէս սարտա-
փեցան, որ վեր թռան տեղերից եւ սոսկա-
լի ձայներ հանելով սկսեցին վախչել: Ոօ-
բինզօնը պատրաստվում էր թռւրը ձեռքին
գուրս վազել ծառերի միջից, որ բոլորովին
հալածէ ու ցրուէ նոցա եւ իւր խեղճ հայ-
րենակցին ազատէ, երբ յանկարծ զարմա-
նալով տեսաւ որ վախչօղներից մի քանիսը
նորից յետ դարձան ու կարծես պատրաս-
տուեցան գէմ գնել նոցա: Առանց մի բո-
պէ կորցնելու ինքն ու Ռւբաթը վերցրին
միւս հրացանները եւ միասին արձակեցին:

Այս անգամ վայրենիներից երկու հոգի
ընկան միայն, միւսները որը քիչ որը շատ
վիրաւորուած՝ ցնորուածների պէս վախան
զարհուրելի աղաղակ բարձրացնելով: Յետոյ
վախչօղներից էլ երեք հոգի չկարողանալով
վէրքերին գիմանալ՝ ընկան:

«Այժմ առաջ գնանք, գոչեց Ոօբինզօնը
վայր ձգելով գատարկ հրացանը եւ նորա
տեղը լիքը վերցնելով: Իսկոյն երկուսն էլ

դուրս թռան ծառերի միջից: Ոօբինզօնը ամէնից առաջ վաղեց եւրոպացի կապած գերին ազատելու: Բայց երբ նորան մօտեցաւ, տեսաւ որ փախչող վայրենիներից քանի մի հոգի նորից սկսեցին հաւաքուիլու կամեցան դէմ դնել իրանց: Իսկոյն ձեռքով նշան տուեց Ուրբաթին որ գայ, սա մօտեցաւ այն խմբին, հրացանը արձակեց եւ մէկին վայր գլորեց:

Ոօբինզօնը գանակով կտրտեց բոլոր չուանները, որոնցով կապած էին թշուառ գերու ձեռքերն ու ոտքերը: Նորան անգլիերէն հարցրեց, թէ դու ով ես: Գերին էլ պատասխանեց թէ՝ «քրիստոնեայ եմ եւ Սպանիացի»: Բայց այնպէս նուազ էր որ չէր կարողանում խօսել: Բարեբաղդաբար Ոօբինզօնը հետը մի չիշ օղի ունէր. իսկոյն այդ օղիից փոքր ինչ խմեցրեց խեղճ Սպանիացուն եւ երբ տեսաւ որ կազդուրեց նորան, տուեց իւր ատրճանակներից մինը եւ թուրը, որ սա էլ օգնէ իրանց սպանութեան գործի մէջ: Իսկ այդ միջոցին Ուրբաթը նորից լաւ լցրել էր հրացանները:

Սպանիացին ատրճանակն ու թուրը ստանալուն պէս կատաղի առիւծի նման յար-

ձակուեցաւ իւր թշնամիների վրայ եւ մի ակնժարթում նոցանից երկուսին սպանած վայր թափեց գետին: Ուրբաթը լցրած հրացանը ձեռքին՝ վաղեց նորան օգնելու, իսկ Ոօբինզօնը սկսաւ լցնել մնացած հրացանները: Սակայն երկու քաջերը զօրեղ հակառակորդների պատահելով՝ շուտով բաժանուեցան միմեանցից: Սպանիացու եւ մի ուժեղ վայրենու մէջ թունդ բռնամարտ սկսուեցաւ. Սպանիացու բանը վատ էր: Թէ պէտ նա չնայելով իւր տկարութեան՝ դարձեալ միքանի անգամ վիրաւորեց վայրենուն, բայց վերջը սա յաղթեց, հակառակորդին գլորեց գետին, թուրը խլեց ձեռքից եւ հէնց որ ուզում էր գլուխը կտրել Ոօբինզօնը ժամանակին վրայ հասնելով հրացանն արձակեց ուղիղ նորա գլխին եւ այդպիսով վերջ դրաւ նորա կեանքին:

Սպանիացին ազատուեցաւ թէ չէ՝ իսկոյն ոտի կանգնեցաւ, խլեց լցրած հրացաններից մէկը եւ ընկաւ այն վայրենիների ետեւից, որոնք փախել էին անտառը: Ուրբաթն էլ միացաւ նորա հետ: Ոօբինզօնը տեսնելով որ թշնամիներից շատ քիչն են մնացել եւ մանաւանդ որ մեծ մասն արդէն

վիրաւորուած էին, լաւ համարեց պատերազմի դաշտի վրայ մնալ, որ դիտէ թէ ինչ են անում այն մնացած վայրենիները որոնք մտել էին նաւակները։ Շուտով Սպանիացին ու Ուրբաթը վիրագարձան եւ ասացին, թէ անտառում այլ եւս ոչ մի թըշնամի չմնաց։

Երկուսը միասին ուղեցին որ վայրենիների նաւակներից մէկի մէջ նստեն եւ հասնեն մնացած բարբարոսներին սպանուեն, որոնք առագաստները բայց շտապով հեռանումէին կղզուց, բայց Ռօբինզոնը արգելեց նոցա եւ ասաց. Բաւական է. ինչի սպանենք նոցա, որոնք այլ եւս մեղ չեն կարող վնասել։ Այժմ մենք այդ թշուառականների ոչ մի խմբից վախենալու տեղիք չունենք, մանաւանդ մեր տանը, ամրոցումը։

Բոլոր սպանուածները քսան եւ մէկ հոգի էին. Յաղթողներից ոչ մէկը անգամ զիրաւորուեցաւ, միմիւյն Սպանիացին ջարգուել էր, երբ վայրենիները վայր էին ձըգել նորան գետին։

Ռօբինզոնը հետաքրքիր եղաւ տեսնելու վայրենիների թողած նաւակներից մինը եւ

չափանց զարմացաւ, երբ տեսաւ որ երկու նաւակի վրայ պառկած էր էլի մի տարաբազդ զոհ Սպանիացու պէս ոտքերն ու ձեռքերը կապկպած։

Որովհետեւ սա Եւրոպացի չէր, Ռօբինզոնը կանչեց Ուրբաթին (սա այդ միջոցին հաւաքում էր թշնամիների գիակները), որ կարողանայ խօսել խեղճ մարդու հիտ իւր մայրենի լեզուով։ Բայց Ուրբաթը տեսաւ թէ այս թշուառին, վազեց վրայ ընկաւ, գրկեց նորան, սկսաւ համբուրել, սեղմել նորանիւր կրծքին, աղաղակումէր, ծիծագում։ Լաց լինում ձեռքերը կոտրտում մի խօսքով կարծես խելագարուած լինէր։ Նատաշանաւ Ռօբինզոնը, մինչեւ որ իւր հարցի պատասխանը տուցաւ. «Ատ իմ հայրն է», ասաց Ուրբաթը։

Անկարելի է նկարագրել այն ուրախութիւնն ու հիացումը, որ այս միջոցին բարի որդին զգումէր իւր սրտում. նա երբեմն հօր գլուխը սեղմում էր իւր կրծքին որ տաքացնէ ծերունուն, երեկոն շփում էր նորա ձեռքերն ու միւս անդամները որ սաստիկ կապերից ուռած էին, երբեմն նորից գրկում ու համբուրում էր նորան։

Թօքինզօնը փոքր ինչ օղի էլի ունէր. պատուիրեց Ուրբաթին, որ նորանով շփէ հօր ուռած անդամները եւ ինքը չեռացաւ, առանձին թողեց նոցա, որ արգելք չլինի նոցա ուրախութեանը:

Սպանիացին էլ համարեա անզգայ պառկած էր խոտի մէջ: Թօքինզօնը տուեց նորան խմելու բան եւ փոքր ինչ էլ հայ ու պանիր: Սպանիացին նայուածքով յայտնեց իւր շնորհակալութիւնը եւ փորձեց վեր կենալ, բայց չկարողացաւ, որովհետեւ ձեռքերն ու ոտքերը սաստիկ ցաւում էին չուաններից խիստ ուռած լինելու պատճառով:

Թօքինզօնը ուղեց փորձել Ուրբաթի օգնութեամբ Սպանիացուն տանել նաւակի մէջ դնել, բայց երիտասարդ եւ ուժեղ Ուրբաթը շալակեց Սպանիացուն եւ մենակ տարաւ դրաւ նաւակը: Միւս նաւակի մէջ էլ շարեցին բոլոր թնդանօթները, հրացաններն ու թշնամիներից մնացած դէնքերը: Ուրբաթը նորից թռաւ այն նաւակը, ուր գտնվում էին իւր հայրն ու Սպանիացին եւ շնայելով որ սկսաւ թունդ քամի վչել հակառակ կողմից, այնպէս ուժով թիալարեց, որ Թօքինզօնը չկարողացաւ ետեւիցը հասնել:

Սա գեռ ճանապարհի կէսը չէր անցել, երբ Ուրբաթը նաւակը տարաւ որոշուած տեղը եւ նորից դարձաւ որ միւսն էլ բերէ: Եւ այնպէս աշխատեցաւ, որ շուտով միւս նաւակն էլ տարաւ հասցրեց այնտեղ, ուր պէտք է ցամաք գուրս գային:

Նորա ուղիղ իրանց ամրոցի հանդէպն էին գտնվում: Հիւանդներին աւելի հանգիստ տեղափոխելու համար՝ Թօքինզօնը գնայ պատգարակներ գտնելու եւ այս պատգարակների օգնութեամբ հիւանդներին տարան ամրոցը: Այնտեղ մի անգամ՝ էլ գինով շփեցին նոցա մարմինը եւ նորա հանգիստ քուն մտան:

Խսկ տանուտէրերը սկսեցին կերակրի պատրաստութիւն տեսնել. մի քանի ժամից յետոյ հիւրերը զարթեցան եւ չնայելով որ գեռ էլի մարմինների մի քանի յօդերը ցաւում էին, այնուամենայնիւ այնքան կազդուրած ու զօրացած էին, որ կարողացան Թօքինզօնի եւ Ուրբաթի օգնութեամբ անկողնից վերկենալ եւ նստել սեղանի մօտ: Ծերունի վայրենին զարմանում էր եւ հիանում ամէն բանի վրայ որ տեսնում էր, միշտ այն պէս ինչպէս նորա որդին եւրոպական կարգու-

սարքը առաջին անգամ՝ տեսնելու ժամանակ։
Ընթրիքից յետոյ Սպանիացին պատմեց նոյա
նը գլխի անցքը։ Այն նաւը, որով ես ճա-
նապարհորդում էի, ասաց նա, ծախու-
սեւերով լի էր։ Սաստիկ փոթորիկը մեր նաւը
մոլորեցրեց ու տարաւ նրազիլիայի ափը. ո-
րովչետեւ մէջը ջուր էր մտելի նաւի տէրը
չէր համարձակում ծովի մէջ տեղը մտնել
այլ միշտ ստիպուած էր նաւը ցամաքի կող-
մը պահել։ Գիշերը նորից ալեկոծութիւն եղաւ
եւ փոթորիկը քշեց հեռացրեց նաւը ցամա-
քից եւ ժայռերի վրայ ձգեց մի կղզու մօտ։
Մենք մի քանի անգամ՝ թնդանօթներ ար-
ձակեցինք նշան տալու համար որ գան մեզ
օգնեն, ասայ Սպանիացին, եւ որոշեցինք մին-
չեւ յետին շունչը նաւը ձեռքից չթողնել ու
չհեռանալ։ Այս նախատակով մենք նեղբների
կապերն ու երկաթները արձակեցինք, որ նո-
քա էլ օգնեն նաւի ջուրը դատարկելու, որ
քանի գնում՝ լցվում էր։ Բայց չէնց որ նե-
գրները ազատուեցան երկաթէ կապերից,
իսկոյն բռնի տիրեցին մեր նաւի մակղիներին
եւ թափուեցան մէջները որ փախչելով ա-
զատեն իրանց կեանքը։ Մենք ի՞նչ կարող
էինք անել. հետները կուռել չէինք կարող,

որովհետեւ մենք ընդամէնը տասնուշինդ
հոգի էինք, իսկ նոքա ութսուն. բայցի գո-
րանից մեր զէնքէրն էլ նոքա յափշտակեցին։
Այդպիսի նաւի մէջ մնալը, որ ոչ մակոյկ
ունէր եւ ջրով էլ լի էր, նշանակում էր թէ
անշուշտ մահուան վտանգի մէջ էինք։ Ո-
րոշեցինք խնդրել ազաչել նոյա, որոնք մի
բովէ առաջ մեր ստրուկներն էին, որ կամ
մեզ հետ մնան նաւի մէջ, կամ մեզ էլ վեր-
ցնեն իրանց հետ։ Զնայելով որ մենք շատ
խիստ էինք վարուել նոյա հետ, այդ մե-
ծահոգի գերիները խղճացին մեզ վրայ եւ
թոյլ տուին մեզ էլ իրանց մակոյիների մէջ,
այն պայմանով միայն, որ ոչինչ զէնք չը-
կրենք մեզ վրայ։ Տակոյիները այնպէս լցուե-
ցան, որ մենք ամէն ըռպէս սպասում էինք
թէ ծովի մէջ կընկղմենք. բաւական ժամա-
նակ տարուբերուեցանք բայց ծովի երեսին,
մինչեւ որ բոլորովին անակընկալ կերպով հո-
վը փոխուեցաւ ու դուրս հանեց մեզ մի
անձանօթ կղզու ափը, որի խեղճ բնակիչնե-
րը շատ սիրով ընդունեցին մեզ։
— Մենք էլ ինչպէս եւ իցէ տեղաւորուեցանք
այնտեղ եւ սկեցինք ապրել այն բարի վայ-
րենիների մօտ. ’ի հարկէ մեր ապրուստը

աննախանձելի էր, որովհետեւ նոյն խակ կղզեցիքն էլ ոչինչ չունէին, բացի ձկնից ու պտուղներից, որոնք բռնում էին իրանց կըղզու մէջ:

Նոքա յօժար կսմքով իրանց ունեցած կերակուրը բաժանում էին մեզ հետ, եւ մեզ էլ սովորցրին ձուկ որսալը: Այսպէս անցկացրինք մօտ վեց ամիս: Յանկարծ սորանից մի քանի օր առաջ հարեւան վայրենիները յարձկուեցան մեր կղզու վրայ: Ամէնքը զէնք վերցրին եւ մենք էլ պարտք համարեցինք օգնել մեր բարի կղզեցոց: Ես այս յարգելի ծերունու կողքին էի կովում: տեսայ թէ ինչպէս թշնամիները շըջապատեցին սորան եւ շտապեցի օգնելու: բայց երկուսիս էլ գերի տարան:

Երկու օր ու երկու գիշեր անցկացրինք այս զարհուրելի գերութեան մէջ ձեռներս ու ոտներս պինդ կապած: ոչ կերանք եւ ոչ խմեցինք, որովհետեւ ոչինչ կերակուր չէին տալիս մեզ՝ բացի հոտած ձկնից: Այսօր առաւօտ արեւը դեռ չծագած ձգեցին մեզ նաւակների մէջ, որ տանեն լափեն մեզ այնտեղ, ուր այս անգամ պիտի կատարուէր նոյց բարեարոսական խնջոյքը: Բայց ողոր-

մած Աստուածը ուղարկեց ձեզ, մեր բարերարներ, ձեզ ենք պարտական մեր կեանքի համար եւ այս երբէք չենք մոռանայ:

Երբ պատմութիւնը վերջացրեց, Սպանիացու աչքերն արտասուզով լցուեցան: Ուօքինզօնը հիացած մնաց երբ իմացաւ որ իւր բոլոր գուշակութիւնները նաւի մասին կատարուեցան. նա բռնեց Սպանիացուն ձեռքից, տարաւ նորան իւր շտեմարանը եւ ցոյց տուեց այն ամեն բաները, ինչ որ հանել էր նաւիցը: Սպանիացին այս բոլորը տեսնելով՝ զարմացաւ մնաց: Ուօքինզօնը յետոյ հարցրեց տեղեկացաւ թէ ումն են եղել նաւի մէջ գտած թանկագին քարերն ու զինուորական շորերը եւ իմացաւ, որ այդ բաները մնացել էին մէկ Անգլիացի վաճառականից, որ խիստ հիւանդանալով՝ խնդրել էր տանել իրան Աֆրիկայի ափը, ուր եւ շուտով մեռել էր: Սպանիական նաւը նորա թողած կայքը վերցրել է այն նապատակով, որ տանի Անգլիա:

Յետոյ Ուօքինզօնը ցոյց տուեց Սպանիացուն նաւից ազատած բոլոր թղթերը. Սպանիացին որոնեց եւ գտաւ մէջը այն վաճառականի անունը, որին պատկանում էր մնացած ժառանգութիւնը: Այնուհետեւ Ուօ-

բինգօնը այն հօտարի հարստութիւնը պահում էր իբրեւ մէկ սուրբ աւանդ:

Հետեւեալ օրը Ռօբինզօնը հաւաքեց իւրերեք ընկերներին, որ փայտ կտրեն եւ թշնամիների այս ու այն կողմ ընկած գիտակները ժողովելով խարպյկի մէջ այրեն: Անպատճառ պէտք է այրէին, որ գիտակների փտելուց օդը չապականուէր եւ վտանգաւոր հիւանդութիւններ չառաջանային:

XIII.

Երբ այս գործը վերջացրին եւ միասին տուն գարձան, Ռօբինզօնը յիշեցրեց նոյա այն Եւրոպացիների թշուառ գրութիւնը, որոնք մնացել էին վայրենիների մէջ: Խորհուրդ արին թէ ինչպէս ազատեն նոյա եւ ըերեն իրանց կզգին: Երկար վիճաբանութիւն եղաւ, թէ ո՞վ գնայ եւ ո՞վ մնայ: Վերջը Ռօբինզօնը որոշեց, որ Ուրբաթի հայրը Ապանիացու հետ գնայ Եւրոպացիներին ազատելու, իսկ Ուրբաթը մնայ իւր մօտ: Բոլորովին անվտանգ չէր այս ձեռնարկութիւնը: Այս պատճառով Ռօբինզօնը չկամեցաւ իւր բարեկամ Ուրբաթին նոր վտանգների ենթարկել, մահաւանդ որ հայրը աւելի լաւ գի-

տէր այն կզզու ճանապարհը, ուր գտնվում էին խեղճ նահատակները: Ապանիացին էլ անշուշտ պէտքէ գնար, որ նորա հայրենակիցները առանց վախենալու ընդունէին Ռօբինզօնի առաջարկութիւնը եւ գային բնակուէին իւր կզզու մէջ:

Բայց նախ քան այս գործին ձեռք տալը հարկաւոր էր գետինը վարել եւ առաջուանից գոնէ տասն անգամ աւելի ցանել, որովհետեւ ընակիչների աւելանալու հետին հարկէ ուտելիքի պահանջն էլ շատանում էր:

Այս պատճառով ամենքն էլ ժամանակակառուակն երկրագործներ դառան եւ որովհետեւ ամէնքը սիրով աշխատում էին, ուսակ գործը շատ յաջող էր գնում: Մի քանի շաբաթուայ մէջ բաւական տեղ վարեցին ու ցանեցին: Յետոյ որոշեցին որ ճանապարհ ընկնեն իրանց մոտադրութիւնը գլուխ տաւընկնեն համար: Այս իրենիներից մնացած նաև ւակներից մի լաւն ընտրեցին եւ սկսեցին ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Ռօբինզօնը աչքի առաջ ունէր որ տեղ հասնելու համար միմիայն մի նաւակ բաւական էր, իսկ այնտեղից Եւրոպացիք

կարող էին գտն իրանց նաւակներով որ,
Սպանիացու խօսքերին նայելով, դեռ շատ
լաւ վիճակի մէջ էին:

Յաջողակ քամին փչեց եւ մեր ձանապար-
հորդները Ռօբինզոնին եւ Ուրբաթին մնաս
բարեաւ ասելով ճանապարհ ընկան:

Նոցա գնալու կղզին շատ հեռու չէր, ուս-
տի ենթագրում էին որ եթէ գործը յաջող գը-
նայ, երեք կամ չորս օրից յետոյ պիտի կարո-
զանային յետ գառնալ: Բայց արդէն ութ օր
էր եւ Սպանիացին ու Ուրբաթի հայրը դեռ
չէին եկել: Մնացողները չափազանց ան-
հանգիստ էին եւ կարծում էին թէ մի ձա-
խորդութիւն պիտի պատահած լինէր նոցա:
Ուրբաթը օրը քսան անգամ վազում էր
լերան գլուխը կամ ծովի ափը եւ ժամե-
րով կանգնած նայում էր ու սպասում
իւր հօրը: Մի առաւօտ, մինչ Ռօբինզոնը
աշխատում էր տանը, Ուրբաթը ծովի ա-
փից տուն վագեց եւ դեռ բնակարանին
չհասած՝ հեռուից սկսաւ կանչել ուրախ
ձայնով թէ «Եկան, եկան»:

Ռօբինզոնը, որ այս համբաւը լսելով նո-
րանից պակաս չուրախացաւ, դիտակն ա-
ռաւ ու բարձրացաւ լերան գլուխը: Նայե-

ցաւ եւ տեսաւ որ յիրաւի հեռուից մի բա-
ւական մեծ մակոյկ էր գալիս գեպի իւր
կղզին: բայց երբ հեռաղիտակով գննեց,
համոզուեցաւ որ եկողները Սպանիացին եւ
Ուրբաթի հայրը չէին, այլ անձանօթ մար-
դիկ, հագուստներին նայելով Անգլիա-
ցիք, եւ այն էլ զինաւորուած: Բարձրա-
նալով միւս լերան գլուխը, որտեղից աւե-
լի լաւ կարելի էր դիտել ծովը հիւսիւսային
կողմից, նա պարզ տեսաւ ափից մօտ երեք
վերաս հեռու մի ահագին նաև խարիսխ
ձգած:

Զարմանքը, երկիւզն ու ուրախութիւնը
փոխէցիս ալեկոծեցին Ռօբինզոնի հոգին.
ուրախացաւ տեսնելով մի նաւ, որ գուցէ
նախախնամութիւնը ուղարկում էր իրան
ազատելու. վախեցաւ, որովհետեւ չգիտէր
թէ ինչ դիտաւորութեամբ էր այդտեղ
գալիս նաւը: Տեսնում էր որ փոթորիկն ու
ալեկոծութիւնը չէր նաւի գալու պատճա-
ռը, որովհետեւ արդէն մի քանի շաբաթ
էր որ ծովի այն կողմից բոլորովին խաղաղ
էր. դիտմամբ այդ կղզին գալու հարկ չէր
երեւում: որովհետեւ Անգլիացիք ոչինչ
գործ չունէին այնտեղ: Մնում էր մտածել

թէ արդեօք ծովային աւազակներ չե՞ն։ Ուստի
յայտնելով իւր կառակածը Աւրբաթին՝ Ռօ-
բինզօնը գնաց նորա հետ, որ հեռուից
գիտէ անձանօթների դիտաւորութիւններն
ու գործերը։

Գնացին բանձրացան թփերով ծածկուած
մի փոքրիկ բլուրի վրայ եւ այնտեղից տեսան
որ մակոյկը, որի մէջ տասն եւ մէկ հոգի կա-
յին, կանգնեցաւ իրանցից քիչ հեռու ափի
մօտ։ Յամաքը զուրա եկած մարդկանցից
ութ հոգի զինաւորուած էին, իսկ երեքը չէ։
Այս երեքի ձեռքերն ու ոտքերը, որ կա-
պած էին, խսկոյն ցամաքը դուրս գալու
պէս արձակեցին։ Նոցանից մէկի ողորմելի
շարժուածները պարզ ցոյց էին տալիս,
թէ ողորմութիւն էր խնդրում զինաւոր-
ուած մարդկանցից, մանաւանդ երբ ծունկ
չողեց նոցա առաջ։ Միաս երկուսը շարու-
նակ ձեռքերը երկինքն էին բարձրացնում։
կարծես Աստծուց օգնութիւն էին խընդ-
րում։ Զինաւորուած մարդիկը իրանց առաջ
ծունկ չոգած մարդոյ թրերով վախեցնում
էին. վերջապէս այս երեք մարդուն թողին
ափի մօտ եւ իրանք ցրուեցան անտառի մէջ։
Մնացողները տխուր տրտում նստան

կանգնած տեղերը, եւ բոլորովին յուսա-
հատ վիճակի մէջ էին երեւում։ Ռօբինզօնը
միտքը դրեց որ անպատճառ ազատէ նոցա։
Խսկոյն Աւրբաթին հրամայեց որ տուն
վաղէ ու որքան կարող է շատ հրացան,
ատրճանակի, թուր, վառօդ ու գնդակ բերէ։
Խսկ ինքը Ռօբինզօնը աւելի լաւ համարեց
մնալ, որ տեսնէ թէ վերջը ինչ է լինելու։
Երբ ամէն հարկաւոր բաները բերել տուեց եւ
հրացաններն էլ լցրին, մեր պատերազմող-
ները ուրախութեամբ տեսան, որ զինաւոր-
ուած մարդիկը մէկմէկու ետեւից սկսեցին
պառկել ծառերի ստուերների տակ եւ
խոր քնի մէջ մնան։ Ռօբինզօնը մի քառորդ
ժամ էլ սպասեց եւ յետոյ վստահ առաջ
գնաց դէպի այն երեք դժբաղդները, որոնք
գեռ նստած էին ափի մօտ։ Այս անակրնկալ
այցելութիւնը այնպէս վախեցրեց նոցա որ
ուղեցին վախչել, բայց Ռօբինզօնը հանգս-
տացրեց նոցա եւ իւր նպատակը յայտնե-
րուց յետոյ՝ հարցրեց թէ ինչո՞վ կարող էր
օգնել նոցա։ «Ես այս նաև նաւի նաւապետն
եմ», պատասխանեց նոցանից մէկը, սա
իմ դեկալիան է, խսկ սա ճանապարհորդ է։
Իմ նաւավարները ապստամբեցան եւ նաւը

խլեցին մեղանից: Ինձ ու այս խեղճ մարդոց էլ որոնք չուզեցին միանալ նոցահետ, առաջ կամենում էին սպանել, բայց յետոյ խղճացին եւ կենդանի թողին, միայն որոշեցին որ բերեն մեզ թողնեն այս ամսյի եւ անմարդաբնակ կղզին, որ այստեղ սովից ու վայրենի գաղաններից կորչինք»:

«Երկու պայման կ'առաջարկեմ ձեզ, ասաց Ռօբինզօնը, եւ եթէ կ'ընդունիք, ես իմ բոլոր կեանքը չեմ խնայի ձեզ ազատելու համար. առաջին՝ որքան ժամանակ կը մնաք այս կղզում անպայման հնագանդիք իմ կամքին եւ երկրորդ՝ երգուէք որ ինձ ու իմ ընկերներիս կը տանիք Անգլիա, եթէ կարողանամ յետ գարձնել ձեզ ձեր նաւը»:

«Մենք, մեր նաւը եւ միջի բոլոր բաները ձերն են», պատասխանեց նաւապետը:

Ռօբինզօնը նոցա բոլորին մի մի հրացան եւ թուր բաժանեց: Որովհետեւ աւագակները խոր քնի մէջ էին, եւ բացի գորանից այս ու այն կողմը ցրուած էին, ուստի որոշեցին որ առանձին առանձին կապեն նոցա առանց արիւն թափելու:

Ուրբաթը իւր հետ առաւ բոլոր չուան-

ները, որոնցով առաջ կապուտած էին նաւապետն ու իւր ընկերները:

Կամաց կամաց մօտեցան չարագործներից մէկին, որ բերանքսիվայր պառկած էր եւ այնպէս խորը քնած էր որ ձեռքերն ու ոտքերը բռնեցին, բերանք թաշկինակ խրեցին, իսկ նա գեռ բոլորովին չէր զարթել: Մի ըսպէի մէջ կապեցին նորան եւ պատու իրեցին որ ձայն չհանէ, թէ չէ իսկոյն կը սպանեն: Յետոյ գնացին մի ուրիշի մօտ եւ նոյն ձեւով կապեցին թողին: Այսպիսով յաջողել էին արգէն վեց չարագործ կապել: Երբ մնացած երկուսը զարթեցան, վեր թռան եւ զէնք առին: Բայց Ռօբինզօնը իրանց կապած ընկերներին ցոյց տալով՝ հրամայեց որ զէնքերը վայր ձգեն, սպառնալով որ հակառակ դէպքում մահուան պատիժ կը ստանան:

Նաւապարները զէնքերը ձգեցին, ծունկ չոգեցին եւ ներողութիւն ինդրեցին: Նոցա էլ միւսների պէս ձեռքերն ու ոտքերը կապեցին եւ թագցրին թփերի մէջ:

Այնուհետեւ Ռօբինզօնն եւ Ուրբաթը իրանց նոր զաշնակիցների հետ գնացին ծովի ափը, մակոյկը ցամաքը հանեցին եւ յատակը ծակեցին, որ էլ բանի պէտք չինի:

նոքա միտք արին որ եթէ այս առաջին նաւակը չիբրագառնայ՝ նաւից երկրորդ մակոյկ կ'ուղարկեն եւ կախենում էին որ երկիոյի մարդկամ եկող մարդիկը այս նաւակն էլ չյափշտակեն:

Այս գուշակութիւնը կատարուեցաւ: Ճաշից յետոյ մօտ երեք Մամին նաւից թընդանօթ արձակեցին իբրեւ նշան, որ ցամաքը գնացած նաւավարները վերագառնան եւ որովհետեւ երեք անգամ նշան տալուց յետ նաւավարները չերեւացան, շուտով ծովը իջեցրին երկրորդ մակոյկը եւ դէպի ցամաքը ուղեցին: Ուօքինզօնը այս որ տեսաւ, իւր ընկերների հետ միասին նորից բարձրացաւ առաջուայ ըլուրը, որ այնտեղից աւելի լաւ կարողանայ դիտել թշնամիներին եւ այնպէս մոտածէ իւր անելիքը:

Մակոյկը մօտեցաւ ափին: Միջի մարդիկը խսկոյն գնացին առաջին նաւակի մօտ եւ խսկոյն գնացին առաջին, երբ տեսան որ դուքս է քաշած ափը եւ մանաւանդ յատակն էլ ծակած է: Ակսեցին այս ու այն կողմը վաղել ու կաճճել իրանց ընկերներին անունները տալով բայց ի զուր պատասխան տուող չեռքերին եւ խստութեամբ պատուիրեց, որ ամէն բանի մէջ հնազանգեն իրանց առաջնորդ Ուօքինզօնին:

տասը չոգի էին եւ բոլորն էլ լաւ զինաւորուած:

Ուօքինզօնը նաւապետից իմանալով թէ իրանց գերի բռնած խոռվարար նաւավարներից երեքը ազնիւ տղայք էին, որոնք միմիայն երկիւղից միացել էին միւսների հետ, հրամայեց Ուրբաթին որ զեկավարի հետ միասին գնայ եւ այդ երեքին բերեն: Երբ նոցա բերին, նաւապետը, որին Ուօքինզօնը հաղորդել էր իր մտադրութիւնը, հարցրեց նոցա թէ արդեօք կ'երդուեն հաւատարիմ մնալ, եթէ ներէ նոյա: Մինչեւ մեր յետին շունչը, պատասխանեցին նոքա եւ իսկոյն ընկան նաւապետի տոքերը:

— Ուրեմն աշխատեցէք մոռանալ տալ ձեր անցեալը եւ օգնեցէք այժմ մեզ, ասաց նաւապետը: Նաւավարները այնպէս զղջացել էին որ սկսեցին լաց լինել եւ համբուրել նաւապետի ձեռքերը. սա էլ մի մի հրացան տուեց ձեռքերին եւ խստութեամբ պատուիրեց, որ ամէն բանի մէջ հնազանգեն իրանց առաջնորդ Ուօքինզօնին:

Խսկ երկրորդ մակոյկի մարդիկը շարունակ գոռում գոյում էին եւ ժամանակ առ ժամանակ հրացան էին արձակում: յուսալով

թէ ընկերները կը գտնուին: Վերջապէս երբ տեսան որ իրանց յօյսը ոչնչացաւ եւ արդէն սկսաւ մուլթը կոխել իրանք էլ վախեցան, նստեցին մակոյկի մէջ եւ ափից մօտհարիւրքայլ հեռանալով՝ նաւը կանգնեցրին: Ուօքինզօնը եւ նաւապետը նոցա այս արարմունքը տեսնելով տիրեցան. մոտածեցին որ գուցէ նոքա փոքր ինչ սպասեն ու յետ դառնան նաւի մօտ եւ իրանց ընկերների բաղդի կամքին թողնելով բոլորովին քաշուին գնան:

Ուօքինզօնը մի խորամանկութիւն գործ դրեց. նա հրամայեց Ուրբաթին որ մի նաւավարի հետ վազէ անտառը եւ մակոյկը կանգնած տեղից մօտ մի վերստ հեռու կանգնելով՝ ձայն տան մակոյկի միջի մարդոց, թէ այստեղ ենք. եւ հէնց որ նկատեն թէ նոքա լսեցին իրանց ձայնը եւ դարձեալ դուրս են գալիս ցամաքը, կամաց կամաց մոնեն անտառի խորքը, որ որքան կարելի է աւելի ներս քաշեն այդ նաւավարներին, իսկ յետոյ ուրիշ ճանապարհով գան իրանց առաջուայ տեղը բռնեն:

Այս պատերազմական խորամանկութիւնը բոլորովին յաջողեցաւ: Նաւավարները իրանց

աղաղակներին պատասխանող ձայները լսեցին թէ չէ՝ իսկոյն շտապեցին ափը գուրս եկան եւ հրացանները ձեռքերին վազեցին այն կողմը որտեղից լսել էին ձայները:

Սակայն երկուսին պահապան թողին մակոյկի մէջ:

Ուրբաթը իւր ընկերոջ հետ շատ լաւ կատարեց իւր յանձնարարութիւնը. նաւավարներին երկու վերստի չափ ներս տարան անտառի մէջ եւ յետոյ շտապով դարձան իրանց տեղը:

Ուօքինզօնն էլ իւր ընկերներով ծածուկ մօտեցան նաւակին, յարձակուեցան երկու պահապան նաւաստիների վրայ, որոնք ամենեւին այդպիսի բանի չէին սպասում: Կապեցին նոցա ձեռքերը, իսկ մակոյկը շտապով դուրս քաշեցին ցամաքը: Յետոյ երկու գերիներին տարան գնացին մօտակայ թփի ետեւը՝ միւս թշնամիներին սպանելու համար: Սոքա միասին չեկան, այլ սկսեցին միառմի հաւաքուել՝ չարաչար յոգնած իրանց անօգուտ աշխատանքից: Բայց ո՞քան զարմացան ու զարհուրեցան, տեսնելով որ իրանց մակոյկը անյայտացել է: Երբ հինգ հոգի հաւաքուեցան, Ուօքինզօնը ուղարկեց

նոցա մօտ նաւակարներից մէկին եւ պատուիրեց իմանալ թէ համաձայնում են յօժար կամքով անձնատուր լինել եւ զէնքերը վայր ձգել իսկ եթէ չեն համաձայնի, ասաց նա, ասա որ քասան քայլ հեռու, թփերի ետեւ, կանգնած են զինուորները որոնք կզգու կառավարչի կողմից հրաման կը ստանան արձակելու նոցա վրայ. նոցա մակոյից արդէն գրաւած է, բոլոր ընկերներն էլ գերաւած են եւ ուրեմն մնում է նոցա երկուսից մէկը ընարել կամ մահ եւ կամ գերութիւն:

Տեսնելով որ ուրիշ ճար չկար, նորա զէնքերը վայր ձգեցին եւ անձնատուր եղան: Նոցա ձեռքերը կապեցին: Այս միջոցին մնացած նաւաստիներն էլ եկան եւ երբ եղածն իմացան, իրանք էլ չհամարձակեցան հակառակութիւն ցոյց տալ, այլ յօժար կամքով թոյլ տուին որ իրանց էլ կապեն:

Այն ժամանակ նաւապետն ու նօրինզօնը գուրս եկան թփերի ետեւից եւ մօտեցան գիրիներին. վերջինին խռովարները կզգու կառավարչի մի սպայ կարծեցին: Նաւապետը հրամայեց, որ գերիներին տանեն ամբոցը, բայց նոցանից մի քանիսին ներեց:

որովհետեւ սրտանց զզջացին իրանց արածները:

Այսպէսով նաւաստիներից տասը հոգի, որոնք ներողութիւն էին գտել հաւաքուեցան ամրոցի մօտ: Ռօբինզօնը իբրեւ թէ կառավարչի կողմից ասաց թէ իրանց յանցանքը այն պայմանով միայն կը ներուի, եթէ կ'երդուեն օգնել իրանց օրինաւոր գլխաւորին նորից իւր նախն տիրելու: Բոլոր նաւապարները երգուեցան:

Նոցանից մէկին, որ նաւի հիւսն էր, հրամայուեցաւ շուտով մակոյկի ծակը կալնել եւ եղբ շինեց պլրծաւ երկու մակոյին էլ իջեցրին ծովը: Նաւապետը մէկ մակոյկի կառավարիչ նշանակուեցաւ, զեկավարը միւսի, իսկ մնացած մարդիկը կէսը մէկի մէջ տեղաւորուեցան, կէսն էլ միւսի մէջ: Ամէնքին բաժանուեցաւ հրացան, գնդակ ու վառօղ: Մակոյկները շարժուեցան: Ռօբինզօնը Ուրբաթի հետ մնաց զգուշանալու, որ մի՛ գուցէ կապած գերիները գոները կոտրեն գուրս գան եւ տիրեն իւր ամրոցին:

XIV.

Ռօբինզօնը զգալով որ այժմ իւր բաղդը

պիտի վճռուէր, չկարողացաւ տեղում հանդիսաւ մնալ: Մէկ գնում նստում էր իւր այրի մէջ, մէկ վազում էր պատնէշի վրայ, մէկ էլ կախաղանաւոր սանդղով բարձրանում էր լերան գագաթը, որ գիշերուան լուսութեան մէջ գուցէ տեսնէ թէ ինչ է լինում նաւի մէջ: Զնայելով որ ամբողջ օրը ոչինչ չէր կերել, ամենեւին մտքումը ուտել չէր գալիս: Քանի գնում մտածմունքն աւելանում էր, որովհետեւ պայման դրած նըշշանը, այն է երեք անգամ թնդանօթի ձայնը, որ պիտի իմաց տար թէ նաւը վերցրած էր, գեռ չէր լսվում; թէպէտեւ կէս գիշերին մօտ էր: Արդէն յուսահատուելու մօտ էր . . . բայց յանկարծ թնդանօթի ձայն լսուեցաւ . . . վեր թռաւ տեղից ինչպէս խոր քնից . . . երկրորդ անգամ ձայն եկաւ, երրորդ անգամ էլ թնդաց. . . այլ եւս կասկած չկար որ նաւը վերցրած էր:

Ուրախութիւնից խելքը կորցրեց Ոօբինդոնը, վազէվազբարձրացաւ սարի գլուխը եւ արտասուքը աչքերին փաթաթուեցաւ Ուրբաթի վղին: Ուրբաթը հազիւ կարողացաւ իմանալ նորանից թէ բանն ինչումն է, նա էլ ուրախացաւ, բայց աւելի իւր տի-

րոջ քան իւր համար, որովհետեւ շատ տիրարում էր երե մտածում էր որ իւր հայրենի երկիրը պիտի թողնէ, չնայելով որ մեծ զուարձութիւն էր իւր համար գնալ Ոօբինդօնի եւ իւր հօր հետ այն երկիրը, որի հրաշալիքների մասին գեռ ոչինչ հասկայողութիւն չունէր:

Ոօբինդօնը ամբողջ գիշեր չկարողացաւ քնել՝ չգիտէր թէ ինչպէս լուսացնէ, այնքան յուզուած եւ երջանիկ էր զգում՝ իրան: Լոյսը գեռ լքացուած՝ նա արդէն կանգնած էր ափի մօտ աչքերը նաւի ճանապարհին տնկած եւ անհամբեր սպասելով արեւի ծագելուն: Վերջապէս լոյսը բացուեցաւ: Բայց նվազ կարող էր նորա զարմանքը, սարսափը եւ արհամարհանքը նկարագրել: Նաւը անյայտացել էր: Խեղճը բարձր ձայնով գոռայ եւ համարեա անզգայ ընկաւ այն ծառի վրայ որի մօտ կանգնած էր: Ուրբաթը հասաւ եւ երկար ժամանակ չկարողացան հստկանալ, թէ ինչ է պատահել իւր ակրօջը: Վերջապէս Ոօբինդօնը գողդողուն ձեռքերը մեկնեց գէպի ծովը եւ թոյլ՝ հազիւ լսելի ձայնով ասաց: «Անյիր»: Ուրբաթը հասկացաւ Ոօբինդօնի տիրութեան պատճառը, եւ մինչ

աշխատում էր միսիթարել նորան, լեռան միւս
կողմից շատ մարդկանց ոտնաձայն լսուե-
ցաւ: Ուօքինզօնն ու Ուրբաթը վեր թռան,
յետ նայեցան ու հիացմամբ տեսան նաւա-
պետին ու նաւապարին: Ուօքինզօնը գրկա-
բաց առաջ վազեց եւ փաթաթուեցաւ նա-
ւապետին: Աչքերը այն կողմը գարձնելով, տե-
սաւ որ նաւը խարիսխ էր ձգել կղզու արեւ-
մոեան ափի վրայ մի փոքրիկ ծոցի մէջ.
տիրութիւնը ուրախութեան փոխուեցաւ
հասկացաւ որ նաւապետը գիշերանց նաւը
կղզու միւս կողմն էր տարել՝ աւելի տպա-
հով լինելու համար:

Երկար ժամանակ Ուօքինզօնն ու նաւա-
պետը փաթաթուած կպած էին միմեանց
եւ ոչինչ ձայն չէին հանում: յետոյ նաւա-
պետը պատմեց թէ ի՞նչպէս կարողացաւ
առանց մի կաթիլ արիւն թափելու տիրել
նաւին: Գիշերուան մթութեան մէջ նաւի
միջի մարդիկը չէին նկատել նորա մօտե-
նալը. եւ որովհետեւ ոչ մի տեղից կտանգի
չէին սպասում: ուստի սանդուղները չէին
հաւաքել: Թէպէտ խոռվարաներից աւելի
տաքլուխները ուզեցին ընդդիմանալ բայց
նոցա խկոյն բռնեցին եւ շղթայակալ արին:

Իւր պատմութիւնը աւարտելով, նաւապետը
ջերմ շնորհակալութիւն արեց Ուօքինզօնին
նաւը եւ նոյն խկ իւր կեանքն ապատելու
համար եւ ինչպէս իւր անձը, այսպէս եւ իւր
նաւը յանձնեց Ուօքինզօնի տնօրինութեանը.
յետոյ պատուիրեց որ բերեն նաւից դուրս
բերած նախաճաշիկը եւ ամէնքը ուրախ
զուարթ նստեցան հաց ուտելու:

Նախաճաշի ժամանակ Ուօքինզօնը պատ-
մեց նոյցա համառօտ խօսքերով իւր գլխին
եկած բոլոր անցքերը եւ երեք խնդիր առա-
ջարկեց նաւապետին. առաջին որ մինչեւ
Ուրբաթի հօր եւ Սպանիացու վերադառ-
նալը չգնայ. երկրորդ, վերցնէ իւր նաւի
մէջ բացի Ուրբաթից եւ իւր հօրից բոլոր
Սպանիացիներին եւ տանի Սպանիա եւ վեր-
ջապէս երրորդ, որ խռովութեան գլխաւոր
ապստամբների կեանքը շնորհէ եւ փախանակ
ուրիշ պատճի՛ թողնէ նոցա այս կղզին, որ
զղջան եւ ուղղուին:

Նաւապետը հաւատացրեց Ուօքինզօնին
թէ նորա բոլոր ցանկութիւնները ճշտու-
թեամբ կը կատարուին: Նա հրամացեց որ
բոլոր յանցաւորներին բերեն, ամենամեծ
յանցանք ունեցողներին ջոկեց եւ յայտնեց

նոցա Ռօբինզօնի վճիռը։ Նոքա ամէնքը մահուան պատժի էին սպասում։ ուստի եւ երբ լսեցին իրանց դատավճիռը ուրախութեամբ լցուեցան։ Մարդասէր Ռօբինզօնը խրատեց նոցա, թէ ինչպէս պէտք է ապրէին ու կենցաղավարէին այս կղզու վրայ եւ խոստացաւ տալ նոցա իւր հօտն ու բոլոր շտեմարանը։ Յետոյ խորհուրդ տուաւ նոցա որ աշխատասէր լինին, սիրով ապրին միմեանց հետ եւ Աստծուն ապաւինեն, հաւատացնելով որ այսպիսով կեանքը, մինչեւ անգամ ամայի կղզու մէջ, շատ ու շատ կը քաղցրանայ։

Այս միջնոցին Ուրբաթը վաղէվազ եկաւ աւետիս տալու, որ Սպանիացիքը իւր հօր հետ մօտեցան ափին։ Ամէնքը նոցա առաջ գնացին։ Ուրբաթն ամէնից առաջ վաղեց եւ մինչեւ միւսները հասնէին, ինքը ընկաւ փաթեաթուեցաւ իւր ծերունի հօրը։ Նորեկ Սպանիացիներից երկու հոգի սպակուել էին վայրենիների կղզում։ ուր էէս տարուց աւելի կայել էին։ Նոքա իրանց կանանց հետ կամեցան Ռօբինզօնի կղզին բնակուիլ։ Ռօբինզօնն էլ նոցա գլխաւոր կարգեց այդ նոր գաղթականութեան վրայ։

Ակսեցին ճանապարհի պատրաստութիւն տեսնել։ Ռօբինզօնը հրամայեց որ նաւը տանեն չետեւեալ բաները ։ իւր ձեռքով շինած լամայի կաշուէ հագուստը, հովանոցն ու դիմակը ։ իւր շինած տէգը, նետն ու աղեղը ։ թութակը, շունը եւ երկու լամա ։ զանազան գործիքներ, որ շինել էր կղզում մենակ եղած ժամանակը եւ վերջապէս նաւից վերցրած ոսկին ու թանկագին քարերը, որ պէտք է վերադարձնէր իւր տէրերին։

Այս բոլոր բաները կապեցին ու դրին նաւի մէջ։ Հովն էլ յաջող էր վիզում ուստի որոշեցին որ հետեւեալ օրը ճանապարհ ընկնեն։ Ռօբինզօնն եւ Ուրբաթը սկսեցին ճաշի պատրաստութիւն տեսնել։ Նոքա ուզում էին որ գնալուց առաջ մի փառաւոր պատիւ տան նաւապետին եւ կղզին մնացող բնակիչներին։ Այս անգամ ինչ որ ընտիր բան ունէր՝ բոլորը գործ գրեց Ռօբինզօնը եւ այնպիսի ճօխ եւ համեղ սեղան պատրաստեց, որ նաւապետը զարմացաւ նորա խոհարարութեան վրայ։ Նաւապետն էլ պատուիրեց, որ նաւից բերեն ուտելիքի պաշարը, վառօդ, գնդակ եւ զանազան գործիքներ ու այս բոլորը ընծայեց նոր բնակիչներին։

Երեկոյին Ոօքինզօնը ցանկացաւ մենակ
մնալ՝ նա բարձրացաւ իրան վրայ, որ մի
անգամ էլ միտք բերէ իւր անցած կեանքը
եւ ցերմ աղօթքով շնորհակալութիւն մա-
տուցանէ Աստծուն իւր աղատութեան հա-
մար:

Ճանապարհ ընկնելու բոպէն եկաւ: Մի
անգամ էլ աչքերը արտասուքով լիքը Ոօ-
քինզօնը յորդորեց կղզում մնացողներին,
որ աշխատասէր ու բարեպաշտ լինին, մէկմէկո-
հէր լիշտանան և փոխադարձաբար օդն ու միշտանց:
Յետոյ մի վերջին անգամ էլ նայեցաւ իւր
բարայրին, ամրոցին, իւր բոլոր տնտեսական
կարգ ու սարքին, որ այնպէս սիրով ինսա-
մել էր եւ զգում էր, որ կարծես չէր ու-
զում բաժանուիլ այս բոլոր իւր սեպհական
ձեռքով շինած եւ իւր շարունակ աշխա-
տանքով եւ մեծ համբերութեամբ ձեռք բե-
րած բաներից:

Վերջապէս մտաւ նաւը, հովը ուռցրեց
առագաստը. պայծառ արեւը փայլում էր
երկնքում. վերջին մնաք բարովն էլ լսուեցաւ
եւ նաւը հեռացաւ ափից . . .

լացի եւ մարդասէր Ոօքինզօն: Աչա քանի
ժամանակ է որ քեզ հետ անքաժան ենք.
տեսանք քեզ փոթորիկների մէջ, քեզ հետ
ապրեցանք անմարդաբնակ կղզու վրայ, վայ-
րենի բնութեան մէջ, որ կարողացար ընկ-
ճել եւ մարդու բնակութեան յարմարա-
ցնել. հետեւեցանք քո իմաստուն եւ ան-
խոնջ աշխատութիւններին, վկայ եղանք այն
բոլոր մեծամեծ արգելքներին, որոնց գու
յաղթեցիր քո ջանասիրութեամբ եւ հնա-
րագիտութեամբ: Դու միշտ երեւում էիր
մեզ իբրեւ արդարութեան, ազնուութեան
եւ բարութեան ջերմ պաշտպանն ու բա-
րեկամը: Դու մեզ սովորցրիր համբերող եւ
քաջ լինել գժբազգութեան մէջ, անձնուէր
Աստծոյ կամքին, սիրել մարդկութիւնը եւ
հաստատամիտ լինել բարի եւ խելացի ձեռ-
նարկութիւնների մէջ: Քեզանից սովորեցանք
մենք լաւ եւ օգտաւէտ կերպով աշխատել
գնահատել ոսկէ ժամանակը եւ չվհատել
անյաջողութեան մէջ: Շնորհակալ ենք քե-
զանից, Ոօքինզօն ցանկանում ենք որ Աստ-
ուած յաջող ճանապարհորդութիւն շնոր-
հէ քեզ, եւ ուրախութեամբ վերագարձնէ
քեզ քո տունը եւ քո սիրելի հայրենիքը:

մայ աշխ տօրովով զհաբերն և գիտ
ցի աւելացնեան ուն թէ ու չ բաւական է
ուն թէ ՞Աս դժուականութէ թէ զհաբերն
ուն քայլ ուրով բարերպահութէ զհաբերն
թէ ուղարկութէ ու ՞Ան անհանգ ժամանակ
ապակու անմասնութէ ու քայլ ու ուն
ուն և ունամն ու զանգակաչ ուրով
Զի զիսրդ զայլ ապակութէ անուշուն հեռէ
ու ուրով ապակութէ զայլ անմասնութէ¹
ուն ու անմասնութէ ուն անմասնութէ ու
զայլ ապակութէ զայլ ապակութէ ուն
ապակութէ զայլ ապակութէ զայլ ապակութէ²
ուն ապակութէ զայլ ապակութէ զայլ ապակութէ³
ուն ապակութէ զայլ ապակութէ զայլ ապակութէ⁴
ուն ապակութէ զայլ ապակութէ զայլ ապակութէ⁵
ուն ապակութէ զայլ ապակութէ զայլ ապակութէ⁶
ուն ապակութէ զայլ ապակութէ զայլ ապակութէ⁷
ուն ապակութէ զայլ ապակութէ զայլ ապակութէ⁸
ուն ապակութէ զայլ ապակութէ զայլ ապակութէ⁹

276

0006258

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004258

